

**325**

891. 99

p-82

2830c

1/2

15 APR 20

9P

280

Ա. ԹԱՐՈՒԹՅԵՆ

2830c.

# ՀԻՆ ՏԱՆԸ

Ա Է Պ

Ժամանակակից կեսնիք

803

Խորթիս  
Supruni «ՀԵՐՄԵՆ»  
1912

891.93

թ-82

Ա. ԹՈՐՈՒՆԵԱՆ -


Հ. ՇԽԱՀ ՄԱԿԱՐԴԻ

# ՅԻՆ ՏԱՆԸ

4439  
1183)

ՊԵ

Ժամանակակից կեանքից



Թափառ  
Տպարան «ՀԵՐՄԵՍ»  
1912



19 APR 2013

31786

19 NOV 2011

ԱՐԱ ՄԴՀ

## ՀԻՆ ՏԱՆԸ




Ա. ՊԸՍ

I

Փաստաբան Հայկ Սահմանը վերջին օրերս շատ էր մտածում: Նա հօրից նամակ էր ստացել: Ծերունին որդուն իր մօտ էր կանչում: Նամակի մի քանի ակնարկներից կարելի էր եղակացնել, որ հայրը երկար ժամանակով է կանչում: Նամակում ծերունին խօսում էր «վերջին օրերի», «յաւիտենական հանգատի», «վերջալոյսի միսիթարանքների» մասին:

Հայկը վճռել էր կատարել հօր ցանկութիւնը՝ գնալ նրա մօտ, բայց երկար մնալու որոշում չէր արել: Ասենը նրա համար այդ բաւական դըժւար էր, որովհետև նա Թիֆլիսում շատ գործ ունէր: Անձնական գործերից բացի մի քանի հասարակական խնդիրների մէջ ևս մասնակցութիւն ունէր: Նա «Գրագիտութիւն տարածող ընկերութեան» վարչութեան նախագահն էր, մի քանի բարեգործական ընկերութիւնների վարչութեան, կամ վերաստուգիչ մասնաժողովի անդամ: Այդ բոլորը երեսի վրայ թողնելն ու գնալը դժւար էր:



1136-2009

Նրա մէջ հասարակական ջիղը բաւական ուժ-  
ժեղ էր: Դեռ ուսանող ժամանակն էր որոշել՝  
փաստաբանական գործերից գուրս իրան հասա-  
րակական գործին ևս նւյիրել: Անուն հանելը նրա  
նպատակներից մէկն էր, և դրան նա քիչ-քիչ  
հասնում էր: Ոչ ոք չէր կարող նրան անգործ հա-  
մարել. նա աշխատասէր էլ էր:

Համալսարանն աւարտելուց յետոյ՝ մի միտք  
զբաղեցնում էր նրան: Բայց այդ միտքը վերջերս  
աւելի շատ ժամեր էր խլում նրանից: Ամուսնա-  
նալու հարցի մասին է խօսքս: Նա կամենում էր  
վերջ դնել իր անորոշ կեանքին, չէր ուզում այլև  
գեղեցիկ կանաց հետամտել: Աւելի լաւ է ամուս-  
նանամ, հաստատուն կեանք, տուն ու տեղ ստեղ-  
ծեմ, մտածում էր նա: Հայկը ցանկանում էր, որ  
իր հարսնացուն գեղեցիկ լինի, ուսում ունենայ:  
Հեռու չէր այն մտքից, որ փող էլ ունենայ: Վերջ-  
նիս մասին, թէկ ոչ ոքի հետ նա չէր խօսում,  
բայց մտածելիս այդ հարցի վրայ բաւական կանգ  
էր առնում: Իրեն ծանօթ աղջիկներից քչերն էին  
համապատասխանում այս պայմաններին, այդ  
պատճառով էլ նա դեռ որոնում էր, որ իր ցան-  
կալին գտնի:

Հօր նամակն ստանալու ժամանակից՝ ամուս-  
նութեան հարցը նրան աւելի էր զբաղեցնում:   
Դուցէ ծերունին «վերջալոյսի միսիթարանք» ա-  
սելով հէնց այդ էր հասկանում: Հայկը յիշում  
էր, թէ ինչպէս մայրը միշտ խնդրում էր իրան  
ամուսնալու, ինչպէս նա ա՛խ անելով մեռաւ:  
Եթէ ծերունին էլ նոյն կարօտը սրտումը մեռնի,  
անսիրտ բան կըլինի: Զէ, որքան շուտ, այնքան  
լաւ: Նա հօրը շատ էր սիրում: Ի՞նչպէս կարող

էր չը յարգել: Ստեփան Սանամեանը գաւառական  
կիսագրագէտ վաճառական լինելով հանգերձ՝ ոչինչ  
չէր խանայել իր որդու կրթութեան համար:

Հայկը թէկ գտնում էր, որ եթէ գնայ գիւղ,  
հօր մօտ, այդ հարցի լուծումը կարող է ուշանալ,  
միւս կողմից էլ մի ներքին գոհունակութիւն էր  
զգում, թէ ինչո՞ւ, ինքն էլ չէր հասկանում: Մի  
քանի օր էլ մտածեց ու վճռեց երեք օրից յետոյ  
գուրս գալ Թիֆլիսից: Լաւ կըլինի, մտածում էր  
նա, տարւայ ամենալաւ ժամանակը այսուեղ կը  
լինեմ, մի քանի քաղցր օրեր կանցնեմ հին տա-  
նը: Այս մտքի հետ նրան պատում էին մանկու-  
թեան անուշ յուշերը:

Նրա հայրենի գաւառը գեղեցիկ էր ու մըլ-  
դառատ:

---

Ստեփան Սանամեանը շատ էր ծերացել: Նա  
այլես չէր աշխատում, այլ հանգստանում էր իր  
վաստակածի արդիւնքով: Նրա կարողութեան ար-  
ժէքը հարիւր հազարից անց էին հաշւում: Բոլորը  
ձեռք էր բերել ինքը, նախորդները նրա համար  
մեծ ժառանգութիւն չէին թողել, թէկ նրա հայ-  
րենի տունը Ա. մեծ զիւղում վաղուց անտի յայտ-  
նի էր: Սանամեանը հին օջախ էին: Նա երկար  
տարիներ զբաղել էր բամբակի վաճառականու-  
թեամբ, պօստերի կապալառու էր եղել: Այդպի-  
սով կարողացել էր բազմապատկել պապերի թո-  
ղածը: Տասը տարի կը լինէր, որ նա աշխատելը  
թողել էր: Ինքը ծերացաւ, որդիներն ընկան ու-  
սումի յետելից, գործը կանգ առաւ: Նրա վրայ

շատ էր ազգել կնոջ մահը: Այժմ ապրում էր  
գիւղում իր քրոջ հետ, որ մի այրիացած տիրու-  
նի էր:

Ստեփան Սանամեանը կարծում էր, որ ինքը  
մի, կամ երկու տարուց յետոյ կըմեռնի: Նա շատ  
էր թուրացել, ոտքերը դողդողալով էր շարժում,  
աչքերը լաւ չէին տեսնում: Որդիների նամակ-  
ները, կամ լրագիր կարդալիս՝ նա ակնոցներ էր  
դործ ածում, այս էլ ժամերով պշազում: Էր: Որ-  
պէսզի կեանքի վերջին օրերը քաղցր անցնեն, նա  
վճռել էր, այս տարի անպատճառ որդիներին բե-  
րի իր մօտ և նրանց ստիպի մնալ գիւղում: Այդ  
իմաստով նա արդէն նամակ էր գրել թէ Հայկին  
և թէ Վիկտորին:

Վիկտորը՝ Ստեփան Սանամեանի կըտսեր  
որդին, դեռ քսանհինդ տարին չը լրացրած մի ե-  
րիտասարդ էր, Պետերբուրգի լեռնային ճեմարա-  
նի ուսանող: Փոքը հասակում նա աչքի էր ընկ-  
նում իր չարաճճի ու շարժուն բնաւորութեամբ:  
Վեց տարեկան էր դեռ, որ դուրս էր գալիս փո-  
ղոց ու հարեանների՝ իրեն հասակակից, մանուկ-  
ների հետ խմբեր կազմում, խմբերին կուացնում  
և տուն վերաբառնում արիւնուած շրթունքնե-  
րով: Գիմնազիստ ժամանակ թէկ լաւ էր պարա-  
պում, բայց դարձեալ սիրու զրոսի կեանքից չէր  
կտրւում, յաճախ խառնում էր իրեն չը վերաբե-  
րող զործերին: Տօներին, կամ ամառուայ արձա-  
կուրզներին նա մի շաբաթ տոաջ պատրաստու-  
թիւն էր տեսնում գիւղը զնալու, խակ երը գիւղն  
էր գալիս, տանը նստելու սովորութիւն չըունէր,  
ժամանակն անցնում էր դուրսը, իր գիւղացի  
ընկերների հետ: Երբեմն գիւղն էլ չէր տան գա-

լիս: Ի՞նչ էր անում, ծնողները չէին իմանում,  
սակայն յաճախ նրանց ականջին անսափորժ լու-  
րեր էին համառւմ: Մի անգամ նա միացել էր և-  
րիտասարդների մի խմբի և նրանց հետ զնացել  
փախցնելու մի հարուստ թուրքի աղջիկ իրանց  
ծանօթ թուրք երիտասարդի համար: Հայրը դժ-  
գոնում էր, յաճախ յանդիմանում, սակայն այդ  
խրատները ոչ մի ազլեցութիւն չէին առում նրա  
վրայ:

Վիկտորը հակառակ ծայրայեղութեան էլ էր  
դիմում: Երբեմն օրերով ու շաբաթներով փակ-  
ւում էր իր սենեակում և անձնատուր լինում ըն-  
թերցանութեան և վայ նրան, ով կըհամարձակէր  
խանգարել: Ծնորհիւ իր փայլուն ընդունակու-  
թիւնների նա գիմնազիան աւարտեց գովելի թւա-  
նշաններով և զնաց մայրաքաղաք շալունակելու  
իր ուսումը: Հայրը նրա համար բաւականաչափ  
փող էր ուղարկում, սակայն միշտ զգոյշ էր, ո-  
րովհետև կասկածում էր, որ Վիկտորը այսուղ  
կընկնի վտանգաւոր ազլեցութիւնների տակ,  
ուսումը կը թողնի և կասկածելի գործերի մէջ  
կը խառնւի:

Վիկտորը մայրաքաղաք հասաւ այն ժամա-  
նակ, երբ ուսանողութիւնը զբաղւած էր քաղա-  
քական հարցերով, երբ կեանքում փոթորիկներ  
էին լինում, և մտքերը խմորւած էին: Նա դեռ  
քսան տարեկան չըկար, տաք էր, զգայուն, կարող  
էր հանգիստ մնալ:

Ստեփան Սանամեանը, որ անձամբ ականա-  
տես եղաւ շատ անցքերի, միշտ անհանգիստ էր:  
Առաջին և երկրորդ տարին Վիկտորը ոչ մի ըըն-  
նութիւն չըտւեց: Հայկն էլ դժգոհ էր այդ բանից,

գրում էր հօրը, որ սա խրատական նամակներ  
գրի Վիկտորին։ Բայց Վիկտորը հօրը լսող չէր։

Ստեփան Սանամեանը աւելի յուզեց, երբ մի  
օր հեռագիր ստացաւ որ Վիկտորին ձերքակալել են,  
մի գաղտնի ժողովում և մեղադրում են յանցա-  
ւոր ընկերութեան պատկանելու մէջ։ Մի շաբաթ  
նա սաստիկ տիպուր էր, յաճախ մտնում էր սեն-  
եակ, մտածում և նոյնիսկ արտասուում։ Երկար  
մտածելուց յետոյ նա վճռեց գնալ Թիֆլիս, այն-  
տեղից աւելու հեռու։

Մինչև թագաւորի մօտ կերթամ, մտածում  
էր նա, կերթամ կը գտնեմ նրան, կըչոքեմ նրա  
առաջ, կասեմ. Դու Աստծու փոխանորդն ես եր-  
կրի վրայ, մենք բոլորս քո ծառան ենք, քո ոտի  
հողն ենք։ Խնայիր իմ սպիտակ մազերին, ներիր  
անառակ որդուդ, մի սպանի, երիտասարդ է, կը  
մնանայ, խելքի կը գայ, կը զջայ…

Ուրիշ մտքեր էլ էին անցնում նրա գլխով։  
Այս բոլորը յայտնեց քրոջը՝ իր միակ սրտակցին։  
Այրի աիրուհին միակ մարդն էր, որի առաջ նա  
բաց էր անում իր սիրաը։ Տիրուհին ինքն էլ լաց  
եղաւ և համաձայնութիւն տւեց նրա ծրագրին,  
սակայն հասկացրեց, որ ինքը մենակ մալ չի  
կարող, լաւ կըլինի, որ ինքն էլ միանայ եղրօրը  
այդ ճանապարհորդութեան ժամանակ, գործի տե-  
սակէտից այդ նոյնիսկ ձեռնտու է, կանանց աւե-  
լի են խղճում մեծերը։ Ստեփան Սանամեանը  
ընդէմ ոչինչ չասաց։ Տիրուհին նոյնիսկ սկսեց  
ճամբի պատրաստութիւն տեսնել։ Սակայն այդ  
ճանապարհորդութիւնը գլուխ չեկաւ։ Հայկը ի-  
մանալով այդ՝ շատպեց նամակով հանգստացնել  
հօրը և խորհուրդ տալ փոխել մտադրութիւնը։

Հարցը դրանով էլ լուծեց։ Վիկտորին մի առ  
ժամանակից յետոյ աղատեցին ձերքակալութիւ-  
նից։

Ստեփան Սանամեանը սակայն միշտ անհան-  
գիստ էր, միշտ մտածում էր Վիկտորի մասին.  
աղօթելիս խնդրում էր ո. Գրիգորին, որ նա բառ-  
բխոս լինի Աստծու առաջ, որպէսզի վատ ճա-  
նապարհից դառնայ իր զաւակը։ Երբ մի ժողովի,  
կամ ձերքակալութեան անուն էր լսում, նա տե-  
րեւէի պէս դողում էր, իսկ զաւամեալ սիրտը արագ-  
արագ բարախում էր։

Անցաւ էլի երկու տարի, և հասարակական  
կեանքը այլ ընթացք ստացաւ, մրբիկները դադա-  
րեցին։ Ստեփան Սանամեանը այլև Վիկտորի  
վտանգաւոր գործերի մասին ոչինչ չէր լսում,  
ընդհակառակը քիչ-քիչ հանգստանում էր, իմա-  
նալով, որ Վիկտորը քննութիւններ է տալիս և  
մի երկու տարի յետոյ կաւարտի։

---

Երբ Վիկտորը հօր նամակն ստացաւ, գլու-  
նւում էր Կ. առաջնակարգ ամառանոցում։ Նա  
առաջուց էլ մտածել էր մի տարի հանգստանալ,  
մանաւանդ որ հնարաւորութիւն կար տարւայ  
վերջին գնալ, քննութիւն տալ։ Նա առանց եր-  
կար մտածելու վճռեց օգոստոսի վերջին գիւղում  
լիներ Հանգստանալու խորհուրդ էր տալիս և  
բժիշկը՝ գտնելով, որ նրա ջղերը բաւական  
բայցայւած են։ Գիւղը գնալու միտքը, հին տան  
յիշողութիւնները նրա հոգում հազար ու մի քաղ-  
ցը գգացմունքներ, քնքոյց յուշիկներ արթնացրին։

Նրա տուած վերակինդանացաւ իր աղմկոտ ման-  
կութիւնը:

II

**Ստեփան Սանամեանի քոյրը՝ այրի տիրու-**  
հին ունէր մի որդի: Նաթան էր նրա անունը:  
Նաթանի հայրը քահանայ էր Ա. գիւղում: Նա  
ուրիշ զաւակ չըռւնէր, Նաթանն էր նրա միակ  
յոյսը: Որդու համար բախտը այլ վիճակ էր  
տնօրինել, բան հայրն էր ծրագրել: Հայրը ուզում  
էր Նաթանին հոգեոր կոչման համար պատրաս-  
տել, ուստի և նրան տւեց հոգեոր գպրոց, բայց  
դեռ փափակին չընասած նա բաժանւեց աշխար-  
հից:

Նաթանը զգայուն էր: Հօր մահը, որ իմա-  
ցաւ գէպից ուզիդ երկու ամիս յետոյ, շատ ազ-  
դեց նրա վրայ: Մի շաբաթ նա տիտր-տրտում  
թափառում էր դպրանոցի հանրակացարաննե-  
րում, լաց էր լինում, գիշերները փախչում էր  
պանսիոնից և լճակի ափին ժամերով նստում:  
Դեռ պատանի էր, պարագի: Հասկացողութիւնն  
էլ ուժեղ էր նրա մէջ, ուստի նորից նսիրւեց  
դասերին ու մոռացաւ վիշտը:

Սլրի տիրուհին մի առ ժամանակ սուզ ա-  
րեց, տպա մի տարի յետոյ գնաց հօրանց տունը,  
եղբօր մօտ: Նաթանին էլ վիճակւած էր դպրո-  
ցական արձակուրդները անցնել այդ հարուստ  
տանը:

Հանգուցեալ քահանան հարուստի ժառանգ  
էր եղել, սակայն մահից յետոյ այնքան էլ շօշա-  
փելի նիւթական չէր թողել: Նա շոայլ էր և յա-

ճախ էր տիրուհու հետ ընդհարումներ ունենույ  
կասկածելի ծախըերի համար: Այսպիսով Նաթա-  
նին վիճակւած չէր փարթամ կեանք: Սա սովո-  
րեց աշխատասիրութեամբ և ուսումն աւարտեց:  
Հէնց նոյն տարին էլ Վիկտորը վերջացրեց զիմ-  
նազիան: Երկու նորաւարտները շատ մտերիմ  
էին դեռ մանկական հասակից, բայց տեսնողի  
վրայ նրանք տարբեր տպաւորութիւն էին անում: Վիկտորը թափուն էր, ուրախ, Թիֆլիսի բարձր  
շրջաններում վարժւած ու բացւած: Նաթանը  
լրակեաց էր, բաշւող, խօսելիս շառագունում էր:

**Ստեփան Սանամեանը,** որ ըրոջ որդուն իր  
զաւակներից չէր զանազանում, երկուսին էլ ու  
զարկեց սովորելու: Նաթանը գնաց Գերմանիա,  
խև Վիկտորը՝ Պետերբուրգ:

Այրի տիրուհին ամուսնացել էր շատ երի-  
տասարդ հասակում: Նա ամուսնացել էր ծնող-  
ների կամքով և իր ամուսնուն չէր սիրում: Հան-  
գուցեալ քահանան սիրում էր կնոջը, բայց կո-  
պիտ էր, երբեմն վիրաւորում էր նրան: Խև վեր-  
ջերը նրանք իրար ատում էին և ուրիշ շրջաննե-  
րում բաւականութիւն որոնում:

Մայրը իր սիրոյ առարկան զարձրել էր Նա-  
թանին, և խևապէս Նաթանն աւելի մօրն էր  
նման: Դեռ փոքր հասակից նա սիրում էր նստել  
մօր մօտ և զբուցել: Երբ մայրը խօսում էր, նա  
լուսում էր ու լսում: Մայրը չէր մոռանում հասկաց-  
նել զաւակին, որ ինքը դժբախտ է, որ տանջ-  
ում է ամուսնու ձեռքին և սպասում է, որ նա

միծանայ ու մխիթարէ իրեն։ Տիրուհին չէր մերժում որդու թախանձանըները և ձմբան երկար գիշերներին նրա համար հէքիաթները էր պատմում։ Նախանը յուզւում էր հէքիաթների հերոսների հետ, ուրախանում ու ախրում։ Նա չէր սիրում խաղալ փողոցներում հասակակիցների հետ, որոնք կուռում էին, ծեծկուում։ Նա չը գիտէր գնդակն ու հոլը, նա ապրում էր մօր կողքին, սուզւում հէքիաթների աշխարհը, քաջցրութեամբ ու տանջանքներով վայելում տպաւորութիւնները։ Յաճախ էր պատահում, որ նա գիշերները քնից վեր էր կենում արտասելով, արթնացնում էր մօրը, պատմում երազները, որոնք նման էին հէքիաթներին։ Նա չափազանց սիրում էր գիւղական աշուղներին։ Սրանք մեծ մասամբ կոյր են լինում, իսկ Նախանը մի առանձին զգացմունք էր տածում դէպի խեղճերը։ Երբ լսում էր չունգուրի ձայնը, վազում էր փողոց, գտնում աշուղին, իրանց տուն կանչում։ Լարերի տատանումների հետ թրթուում էր նրա սիրաբը։

Ծնողները վաղ հասակից աշխատում էին  
նրա մէջ կրօնական զգացմունքներ զարթիցնել:  
Հայրը նրա համար կրօնական պատմւածքներ  
էր կարդում, յաճախ նրա հասակին անյարմար:  
Նա մինչև վերջը չէր լսում, փախչում էր, թագ-  
ուում պարտիզում, բայց ախորժակով լսում էր  
մօր պատմածները Քըսատոսի մասին: Ժամերգու-  
թեան ժամանակ եկեղեցում չէր կանգնում, որով  
և վշտացնում էր հօրը, բայց երբ ծերունի ժամ-  
կոչը մենակ էր լինում, նա սիրով խնդրում էր  
նրան, որ իրան բարձրացնի, որպէսզի սեան վը-  
րայի պատկերը լաւ դիտէ:

Մեծ դժւարութեամբ յաջողւեց նրան մօ-  
րից բաժանել և դպրոց ուղարկել։ Աւելի դժւար  
էր գիշերօթիկ կեանքին ընտելանալը։ Քիչ տան-  
ջանքների ու արցունքի գնով չեղաւ այդ։ Դըպ-  
րոցական կեանքի հետ երբէք հաշտել չէր կա-  
րողանում, հանրակացարանները բանտ էին թւում  
նրան։ Նրա միտքը սաւառնում էր իրանց տանը,  
պարտիզում, առւակի ափին, մօր մօտ։ Մեծա-  
ցաւ, կարողացաւ յաղթահարել զգացմունքներին  
և աւարտեց։ ուժ վատանեան ոչ յարմ վճռիկ ոչ  
ուժ ամ ուժութառապահ ոչ ոչ յարտարապահ  
ուժ անունը ուն դժուար լըսաս ոչ ուժը  
ուժ այսաւ, ամ ուժուար յոր զգամի վար  
Երբ երիտասարդներին սուզարկեց շարունա-  
կելու, Թահիտն Սանամիանը առաւ քրոջը և վերջ-  
նականապէս տեղափոխւեց իրանց գիւղը, հայրե-  
նի, կամ ճին տունը, ինչպէս ասում էին։ Նա ու-  
նէր բաւական հողեր՝ մեծ մասամբ հօր ժամա-  
նակից մնացած։ Քոյր ու եղբայր ծերուկները  
զբաղւում էին տնտեսութեամբ։ Նրանք իրար  
գուրզուրում էին, պատում, սիրաշահում։ Միա-  
սին ուտում էին, միաօին խմում։ Եթէ մէկը ու-  
րիէ պատճառով ճաշին կամ ընթրիքին բացա-  
կայում էր, միւսը բերանը պատառ դնել չէր կա-  
րողանում։ Տարեկան մի անգամ, աշնանը Սանա-  
մեանը գնում էր նահանգական քաղաքը հա-  
գուստեղին և այլ անհրաժեշտ իրեր գնելու։ Եթէ  
եղանակը ցուրտ չէր լինում, տիրուհին ուղեկ-  
ցում էր եղրօրը, հակառակ դէպքում ստիպւած  
էր լինում մի շաբաթ սպասել։ Սոսկալի էին թը-  
ւում նրան, ժամերը այդ ժամանակ։ Նա եղբօրը  
կարօտում էր, ճանձրոյթը խեղդում էր նրան եր-

բեմն այն աստիճանի, որ նա ընկնում էր մտքերի հետ, հին-հին օրերը միտք բերում ու տիրում:

Վերջին տարին Սանամեանը յարաբերութիւն էր սկսել իր մի հին բարեկամի հետ: Այդ անձը Բագարադ Աբովիանն էր, որ ապրում էր մերձակայ գաւառական Վ., փոքրիկ քաղաքում: Սրա կինը՝ Աննան, եղայր չունենալով իր վաշախառու հօր ամբողջ կարողութիւնը հետը օժիտ էր բերել Եղել էր ժամանակ, երբ Բագարադը քառապատկել էր իր հարստութիւնը: Նա մեծ օգուտ էր ստացել քաղաքի մօտ գտնւած և Գրիգորի վանքի հողի կապալից: Նա յաճախ էր վանահօրը խաբել իր առևտրական յարաբերութիւնների ժամանակ: Բայց այդ հաւաքող մարդը մեծ դժբախտութիւն ունեցաւ: Նրա միակ որդին տառնօթ տարեկան հասակում մեռաւ, և այդ օրւանից նա թողեց իր յարաբերութիւնները վանքի հետ, քանդեց բոլոր իր առևտրական ձեռնարկութիւնները, փողերը հանեց շրջանառութիւնից ու անգործութեան դատապարտեց: Ավուում էր պարապ ու խաղախ, հեռու աղմուկներից ու հասարակական գործերից: Նա եկեղեցի չէր գնում, թէ Աստած իրանից խոռովիլ է վանքի գէմ գործած մեղքերի համար: Այս միաքը, ի հարկէ, ուրիշներին չէր յայտնում:

Աբովիանն անզաւակ չէր. ունէր երկու աղջկէ՝ Հեղինէն ու Շուշանիկը, որոնք գիմնազիայում դարձել էին Ելենա ու Մուսան: Մեծը՝ Ելենան երկու տարի էր, որ աւարտել էր նահանգական քաղաքի գիմնազիան, իսկ փոքրը նոր էր վերջացրել: Աւելի բարձր կըթութեան մասին օրիորդները խօսք էին գցում երբեմն, բայց ծնող-

ներից բացասական պատասխան էին նստանում:

Ահա այս ընտանիքի հետ էր, որ Ստեփան Սանամեանը սկսել էր բարեկամութիւն անել: Նրանը հին ծանօթներ էին, նոյնիսկ հեռաւոր ազգականներ, բայց նոր էին մտերմանում:

Այս ժամանակ էր, որ Ստեփանը կանչեց իր որդիներին: Սեպտեմբերի սկզբին Հայկն ու Վիկտորը արդէն հօր մօտ էին: Ծերունին նրանց ընդունեց գրկաբաց: Քոյր ու եղբայր լաց եղան երիտասարդներին տեսնելիս, անթիւ անգամ համբուրեցին նրանց ու սկսեցին մրգերով: պատուել Սակայն բոլորն էլ զգում էին, որ տան անդամներից մէկը պակաս է:

Ազուն էր Նաթանի գալու օրը, դալուկ աշուն: Դեռ ծառերը չէին մերկացել: Նրանք երփներանգ գոյներով խաղում էին արևի վերջին կարմիր շողերի տակ և տատանուում մեղմիկ զերփիւցից: Երեկոյեան պահի, համարեա, մըսեցնող հովին Ստեփան Սանամեանի ընտանիքը բոլորւած էր պատշգամբում մեծ սեղանի շուրջը: Սպիտակ ինքնահոը եփում էր յուզւած, գոլորշին էլ նկատուում էր ցուրտ օդում: Ուրախ-ուրախ խօսում էին, սակայն բոլորն էլ սպասողական դրութեան մէջ էին, ամենքն էլ սպասում էին դարբասի թըլիկոցին: Ամենքից անհամբեր ու լուս խոհերով սպասում էր տիրուհին: Նա շատ էր ծերացել, գլխին մի սկ մազ չըկար, մէջքը կոշցել էր, Զէ որ, այդ օրը գալու էր նրա ամենաթեանկաղին զաւակը՝ Նաթանը, որին հինգ տար-

է, չէր տեսել, բայց որի մասին միշտ լաւ էր  
լսել: Նա մտքում հաշըում էր ժամերը, նորից  
վերայիշում հեռագրի խօսքերը, այս, ճիշտ ժա-  
մանակն է, մտածում էր նա, և անհամբերութիւ-  
նից սիրոտ նեղւում էր, ըոպէները ժամեր էին  
թւում:

Անհամբեր էր և Վիկտորը: Սա բաղրու-  
թեամբ էր յիշում իր մանկութեան ընկերոջը.  
շատ բան ունենք խօսելու, շատ մտքեր ենք փո-  
խանակելու: Նա վերջերս մի սրտակից ընկեր էր  
որոնում, որ պատմի նրան, ինչ որ կատարում  
է իր ներսը, բայց այդպիսի անձ չէր գտնում,  
և թւում էր, որ Նաթանը կարող է նրա որոնա-  
ծը լինել: Հին մտերմութիւնը կըվերականգնենք,  
ասում էր նա ինքն իրան:

Հայկը հանգիստ ու հանգիստ պատասխա-  
նում էր հօր հարցերին, որ վերաբերում էին ժա-  
մանակի քաղաքական խնդիրներին: Հայրը ուղում  
էր համոզել նրան, որ թիւրքը թիւրք է, երիտա-  
սարդ լինի, թէ հին: Նրանք երկուսն էլ հայերի  
թշնամին են: Իսկ Հայկը մեծ զովասանքով էր  
խօսում երիտասարդ թիւրքերի մասին: Վիկտորը  
մեղմ ժպտում էր և չէր խառնում վէճին:

—Շատ ես կարօտել, հօրաքոյր, —ասաց  
Վիկտորը:

—Շատ, շատ, —պատասխանեց տիրուհին:

—Որովհետեւ Հայկը մեր մէջ ամենից սառ-  
ասիրտն է, ուստի առաջարկում եմ, որ հաշւի  
այս համբոյրները, որ պիտի զրոշմեն մեր շըր-  
թւունքները: Ապա տեսնենք ով ամենից շատ և  
ամենից բարձր կըհամբուր է, —ասաց Վիկտորը և  
միւսները ծիծաղեցին:

Հայրը նայում էր որդիներին մեծ բաւակա-  
նութեամբ: Հայկը նրա աչքում մեծ մարդ էր,  
բարձր հեղինակութիւն: Նա մեծ հաճոյք էր ըգ-  
գում, երբ Հայկը հանդարտ ու լուրջ պատասխա-  
նում էր իրան, մտքերին հաղորդակից անում:  
Վիկտորը իր աշխուժութեամբ էր յոյսներջնչում:  
Միայն նորից «այս» ճանապարհով չլգնայ, յետոյ  
լաւ կըլինի, մըմնջում էր նա:

Մի բողէ բոլորն էլ լուսցին, իւրաքանչիւրը  
իր մտքի հիտ ընկաւ: Յանկարծ փողոցում մի  
շուն հաջաց, նոյն վայրկեանին բակի դուռը թըրխ-  
կաց, և բոլորը միասին վեր ցատկեցին տե-  
ղերնից: Վիկտորը վագեց, Ստեփան Սանամեանը,  
չիմանալով ինչպէս վարւի, շփոթւեց և մի քանի  
վայրկեանից յետոյ ինքն էլ բայլեց իր թուլացած  
ոտքերով: Հայկը բռնեց հօրաքոյր թևից, որովհե-  
տեւ տիրուհին ուրախութիւնից մարելու վրայ էր  
և հեշտութեամբ կարող էր ուշաթափել...

Կատարւեց, ինչ որ սպասւում էր: Վիկտորը,  
համարեա զրկած, առաջ բերեց նաթանին: Իրար  
խառնւեցին, չէին իմանում, թէ ինչ են անում:  
Տիրուհին ամուր գրկեց որդուն և չէր բաց թող-  
նում: Վերջապէս հերթը միւսներին էլ հասաւ:  
Երբ բիշ հանգստացան, բոլորեցին սեղանի շուրջը:  
Ազակինը լցրեց թէյը...

Նաթանը յուզմունքի մէջ էր, հին-հին յիշ-  
ութիւնները գեռ տուն չընասած պաշարել էին  
նրան: Իւրաքանչիւր քար, իւրաքանչիւր ծառ ու  
ծաղիկ նրան մի նոր բան էր յիշեցնում: Հարա-  
զատների ներկայի թիւնը աւելի սաստ ամառամ  
էր ներքին յուղտմը: Քիչ էր մնում, որ նոր հե-  
կեկայ: Ուրախութեան տանջանք, ինչ անունը ու

1136-1009 (17.39)



դու: Իսկ մայրը, բոլոր քաղցր յիշատակների պսակը՝ սպիտակ ալիքներով զարդարւած, սուրբ ու ամբիջ...

Դեղեցիկ չէր նախանը, գունատ էր, սիհար, աչքերը փայլուն: Երեսը գեռ էրկ էր, վերին շրթունքը միայն ծածկւած էր աղւամազով, թէն նա արդին քոան ու չորս տարեկան էր:

Վերջալուսը մարեց, արևմուտքի կրակը հանգաւ, գիշերը տիրեց երկրին: Սանամեանի տանը թագաւորեց երեկոն, քաղցր մրգերի, անմահական գինու, երազոտ ընի աշնան երեկոն: Անուշ ամենքին,

### III

Ելենան ամեննեին նման չէր Սուսաննային: Վերջինս ուրախ բնաւորութիւն ունէր, ամեննեին չէր նայում ուրիշների կարծիքին, ինչ ցանկաւնում էր, այն էլ անում էր, որով և ընտանեկան ընդհարումների պատճառ էր դառնում: Նրանց հայրը խիստ մարդ էր և վերին առտիճանի պահպանողական հայեացքների տէր: Նա կանաց կը թութեան հակառակ էր: Հետեկերով մօղային, կամ «ուրիշներից յետ չըմնալու» համար, մէկ էլ այն պատճառով, որ հարուստ ու ուսումնով տղերքը տպէտ աղջիկներ չեն ընտրում, — նա իր աղջիկներին գիմնազիա ուղարկեց: Բարձրագոյն ուսման ուղարկելու մասին նրա հետ խօսեն անգամ անկարելի էր: Աղջիկը կարդալ չը պիտի իմանայ, կարդալ նրան ճանապարհից հանում է, աղջիկը ուղևունքում, փողոց է վազում, իր կոչումը՝ մայր ու տանտիկին լինելը, մոռանում է և շատ վատ գործեր է բռնում... Ահա այն խօսքերը, որ

նա կրկնում էր ամեն անգամ ու մի շարք օրինակներ թւում:

Նրա աղջիկներից մեծն էր, որ ցանկութիւն ունէր շարունակելու, բայց համարձակութիւն չունենալով ասել այդ հօրը, լրում էր: Ընդհանրապէս լրակեցութիւնը ելենայի բնաւորութեան նկատելի գծերից մէկն էր: Նա սովորութիւն չունէր իր մտքերն ու զգացմունքներն ուրիշներին յայտնել, ոչ ոքի իրեն սրտակից չէր զգում: Հայրը նրա աշխում մի տպէտ վաճառական էր, կոպիտ զգացմունքներով, կամակոր, ընտանիքում բռնակալ, Մայրը իր հասկացողութիւններով մարդուց շատ հեռու չէր, ելենային հասկանալ չէր կարողանում, նա էլ էր յանդիմանում, խրատում, թէ աղջիկը պիտի հնազանդ լինի ծնողներին, եթէ նոյնիսկ համաձայն չըլինի նրանց հետ: Ելենան էլ հնազանդում էր: Բայց այդ հնազանդութիւնը մի սոսկալի լրութիւն էր, հոգու մի անձայն կոխ, զգացմունքների սանձահարում, որին նա հասնում էր զործ դնելով ամբողջ ոյժերը: Նա քաշում էր հասարակական կարծիքից, բանբասանքները նրան տանջանքներ էին պատճառում, ուստի աշխատում էր ուրիշների խօսակցութեան ոչ մի առիթ չըտալ, երբեմն երկար մտածելուց յետոյ նա սկսում էր խղճալ ծնողներին, մանաւանդ հօրը: Հանգուցեալ եղբօր մահից յետոյ հայրը նրան աւելի քան խղճալի էր երեւում, ուստի և ամեն կերպ ձգտում էր չըվշտացնել նրան: Աւելի լաւ էր համարում նեղութիւններ կրել, տանել նրա քմահաճոյքները, քան իր սկզբունքներին հետևել: Նա շատ քիչ էր տանից դուրս գալիս, քաղաքի այգին չէր գնում, օտար

տղաների հետ ման գալու չէր դնում, թէև նրա գեղեցկութիւնը շատերի ուշադրութիւնն էր գրաւում: Այդպէս անցան նրա դպրոցական տարիները, աւելի վատ՝ այն տարիները, երբ նա աւարտելուց յետոյ ծնողների մօտ էր:

Երեմն նա յիշում էր եղբօրը, յիշում էր նրա ընդունակութիւնները, նրա խելօք հայեացը, դէպի քոյրերը ցոյց տւած ուշադրութիւնը: Այս, եթէ նա ապրէր, մեծանար, ինքն էլ ուրախ օրու արև կըտեսնէր: Զէ որ, նա տղամարդ էր, կազզէր հօր վրայ, կը պաշտպանէր իրան, Շատ մտածելուց նա մի տեսակ թախծոտ էր դարձել բերանի անկիւններում վշտի մի ալիք էր խաղում: Նա հասունացած աղջիկ էր, նրա քսաներեք տարին լրանում էր արդէս: Կնոջ համար այդ լուրջ հասակ է, ուստի նրա միտքը յաճախ էր կանգ տռնում իր ապագայ վիճակի մտութեմների վրայ: Փակւած կեանքը այդ կողմից էլ նրա վրայ վատ ազգեցութիւն էր առում: Նա ոչ մի տղամարդու իրան մօտ չէր զգում: իսկապէս նա տըղամարդկանց լաւ չէր ճանաչում, բայց երիտասարդի մի ուշադիր հայեացքը կարող էր նրան լուռ խոհերի ենթակայ անել: Նա սրտում թագցնում էր մի յոյս, փրկութեան մի յոյս: Մի օր մէկ տղամարդ կըտանի նրան հօր տանից, և այսուհետեւ ուրիշ կեանք կսկսեի:

Սուսաննան նոյնպէս քրոջը մօտ չէր, ելեւ նան սրան էլ չէր ասում իր սրտին ու մտքինը: Դեռ ստորին դասարաններում էին, որ նրանք դադարեցին մտերմութիւն ունենալուց: Մեծը փոքրից երեք տարով մեծ էր, իսկ երեք տարին աղջկայ կեանքում նշանակութիւն ունիր, բնաւու-

թեան տարբերութիւնն էլ էր գեր խաղում: Սուսաննան իրան շատ ազատ էր պահում: Դեռ հինգերորդ գասարանում նա ոչ մի տօն, ոչ մի կիրակի օր պանսիոնում չէր մնում, զանազան ճանապարհներով համոզում էր գպրոցական վարչութեանը և քաղաք գնում: Հօր խրատները, սպառնալիքները բանի տեղ չէր գնում: Մարդիկ ծընուում են հաճոյքների և ոչ ճգնաւոր դառնալու համար, ասում էր նա քրոջը: Զը նայեած հօր խըռտութեանը, յաճախակի ընդհարութեմներին, նա միշտ յաջողեցնում էր իր համար լաւ շորեր գնել: Դեռ նոր էր գուրս եկել գպրոցից, բայց բազմաթիւ ծանօթներ ունէր, լինում էր ամեն տեղ: այդում, երեկոյթներին, ներկայացութեմներին: Նա պարում էր բաւական յաջող: Դպրոցական հասակում տօներին մօրից ստացած փողերը հաւաքում էր և նրանով պարի զասեր առնում: Այսպէս, թախծոտ ու կենսուրախ քոյրերը ապրում էին միենոյն յարկի տակ և իրար չէին հասկանում:

Նրանք երկուսն էլ գեղեցիկ էին, բայց ոչ իրար նման: Ելենան բարձրահասակ էր, լայներես, սպիտակ, քնչոյց դէմքով, սաթի պէս սև մազերով, թախծոտ սեռակ աչքերով: Սուսաննան միջահասակ էր, բացգոյն մազերով, երկնագոյն աչքերով: Նա շարժուն էր, թըրվուն և ընդունակ գրաւելու տղամարդկանց, խենթացնելու տաքարին երիտասարդներին: Մեծն արտաքինով նման էր մօրը, իսկ փոքրը ոչ մօրը և ոչ հօրը, միայն նրա աչքերը յիշեցնում էին հանգուցեալ եղբօրը: Այդ նմանութիւնը երբեմն նրան փրկում էր հօր զայրոյթից: Հայրը մեծին աւելի էր հաւանում: «Ելենան է իմ աղջիկը, նա հօրը վշտացնել

չի ցանկանում, ծնողների խօսքով է շարժում,  
իսկ քո գուշը գուրս է, Սուսաննա», —ասում էր  
նա աղջիկներին:

Երբ Արովեանը մտերիմ յարաբերութիւն  
սկսեց Սանամեանի հետ, նրա տանը յաճախ էր խօսք  
լինում Սանամեանի որդիների և Նաթանի մասին:  
Սանամեանը իրեւ մի հայր, որի համար որդի-  
ների յաջողութիւնը նաև պարծանքի առարկայ էր,  
նրանց մասին խօսելիս չէր խուսափում մանրա-  
մասնութիւններից, սիրով ու զգացմունքով գո-  
վում էր: Չէր մոռանում և Նաթանին: Սակայն  
որովհետև ասեն ինչ նրա խելքի բանը չէր, ուստի  
երբեմն դիմում էր երեսակայութեան ոյժին: Օ-  
րիորդները ի հարկէ ուշադրութեամբ լսում էին  
նրա ասածները: Սուսաննան երբեմն հարցեր էր  
տալիս, որոնց սիրով պատասխանում էր Սանա-  
մեանը: Ելենան արտաքուստ ոչ մի հետաքրքրու-  
թիւն չէր ցոյց տալիս, խօսակցութեան ժամերին  
սովորաբար նա գլուխը քարշ էր անում և լսում:  
Ներկայ եղողներից ոչ ոք չէր իմանում, որ այդ-  
պիսի ըոպէներին հէնց նա խոր մաածմունքների  
մէջ է, որ երիտասարդ տղամարդկանց մասին խօ-  
սելիս նա հաճելի տրամադրութեամբ է լսում:  
Երբ մենակ էին լինում, Սուսաննան չէր կարո-  
ղանում զսպել իրեն, քրոջը յայտնում էր իր  
զգացմունքները, երբեմն նոյնիսկ հարցնում:

—Ելենա, ո՞րն է քեզ գուր գալի:

—Ի՞նչ ես ասում, Սուսաննա, չք ո՞ր ես

նրանց չեմ ճանաչում, ինչպէս կարող եմ կարծիք  
յայտնել, —պատասխանում էր Ելենան:

—Մուտ ես խօսում, Ելենա, միթէ չես յի-  
շում Վիկտորին: Նա գիմնազիոտ ժամանակ յայտ-  
նի էր ամենքին, մենք նրա հետ ծանօթացանք.  
Նա շատ լաւն էր:

—Հասարակ ծանօթութիւնով կարելի՞ է ճա-  
նաչել:

—Մենք յաճախ տեսնում էինք նրան: Վեր-  
ջապէս մեր տանը նրանց մասին այնքան են խօ-  
սում, որ մենք այժմ կարող ենք կանոնաւոր գա-  
ղափար ունենալ նրանց մասին:

—Մուս, ի մէր Աստծու, Սանամեանի և հայ-  
րեկի խօսքերով պիտի մենք տղայ ճանաչենք,  
ինչ է:

—Ես գիտեմ, որ գիտմամբ ես այդպէս ան-  
տարբեր ձեւանում: Վախենում ես, որ ուրիշները  
խօսեն վրադ. դու սրտումդ համաձայն ես ինձ  
հետ, դու կեղծում ես քեզ...

Այսպիսի խօսակցութիւններ յաճախ էին լի-  
նում նրանց մէջ, և միշտ էլ վերջանում էր ան-  
համաձայնութեամբ: Սուսաննան միշտ էլ սկսում  
էր յանդիմանել քրոջը, երբեմն էլ ծաղրել: Բայց  
քրոջը իրան չէր մատնում և չէր յայտնում, որ  
ինքը իսկապէս հետաքրքրումէ երիտասարդների  
անձնաւորութեամբ, և որ նա անհամբերութեամբ  
է սպասում այն օրին, երբ այդ հանելուկային  
տղաները կը գան:

Եւ այդ օրը եկաւ: Երբ առաջին անգամ լուր  
ստացան, թէ երիտասարդներն եկել են, Արով-  
եանի ընտանիքի բոլոր անդամները մի խմբական  
նամակով շնորհաւորեցին Սանամեանին և տիրու-

հուն: Մի քանի օրից յետոյ Բագարադ Աբով-  
եանն ու կինը՝ Աննան, գնացին աչքալուսէք:  
Օրիորդներին չը տարան: Վերագառնալիս նրանք  
չը մոռացան յիշել, որ իրանք սպասում են փո-  
խայցելութեան: Նոյնիսկ օրը որոշեցին:

## IV

Նաթանի գալուց մի շաբաթ յետոյ ընտա-  
նեկան մի խորհրդակցութեան ժամանակ վճռւե-  
ցաւ, որ երիտասարդները մնալու են տանը: Մի  
տարի կը հանգստանան ու ծնողներին կը մի թա-  
րեն: Նաթանը դէմ չէր: Հինգ տարւայ անդուլ  
աշխատանքից յետոյ մի տարի գիւղումն ապրելը  
շատ ախորժելի էր նրա համար: Վիկտորը առաջ  
էր վճռել, այս տարի Պետերուրդ չը գնալ: Ռւս-  
ման վճարը կը ուղարկեմ, ես տանը կը պատրաստ-  
ւեմ, մտածում էր նա: Հային էր դէմ, նա էլ  
հօրը հակառակել չը կամեցաւ: Ի՞նչ կարիք ունես,  
մի տարի էլ մի աշխատի, փառք Աստծու, շատ  
ունեմ, քաղցած չես մնայ, որդիներիդ էլ բաւական  
է ունեցածս, ասաց նրան հայրը, և նա հնա-  
զանդւեց:

Միանգամայն որ դրականապէս որոշւած էր  
նրանց մնալը, հարկաւոր էր օրանցի միջոցներ  
գտնել որպէսզի ձանձրոյթը ներս չը սողայ նրանց  
յարկի տակ: Հայկը մի երկու շաբաթւայ ընթաց-  
քում արդէն ծանօթներ էր ձեռք բերել: Ասենք նրան  
շատերը վազուց էին ճանաչում: Ա. գիւղը իր  
մեծութեան շնորհիւ ունէր նաև ինտելիգենտների

շրջան: ուսուցիչները, վարժուհիները, պոստի  
ծառայողները, աքսիզնի չինովնիկները, փո-  
խատու-ինայողական գանձարակղի վարչութեան  
անդամները ժամանցի համար յարմար շրջան կա-  
րող էին կազմել: Նրանք ունէին իրանց համար  
մի համեստ ակումբ, ուր հաւաքւում էին՝ կարտ  
խաղում, խօսակցում: Հայկը ընկաւ այդ շրջանը,  
սկսեց մասնակցել գւարճութիւններին: Նա նոյն-  
իսկ Փրագիտութիւն տարածող ընկերութեան»  
Ճիւղ հիմնեց: Ուսուցիչները երբեմն ներկայացում-  
ներ էին տալիս: Մրանց էլ սկսեց օժանդակու-  
թիւն ցոյց տալ: Հարկաւոր է և գիւղի մասին հո-  
գալ, որոշեց նա:

Վիկտորը ունէր իր առանձին պարապմունք-  
ները, կարդում էր իր մասնագիտութեան վերա-  
բերեալ և թէ գեղարեւստական գրքեր, որոնցից  
բաւական բերել էր: Նաթանը գալուց մի քանի օր  
յետոյ հանեց իր գրքերը: Փիլիսոփայութեան գոկ-  
տօրը չէր մոռացել արտասահմանից իր հետ վերց-  
նել կլասիկ ու ժամանակակից մտածողների եր-  
կերը: Բայց նա չէր բաւականանում միայն այդ  
գիտական, վերացական խնդիրներով: Նա բերել  
էր պարբերական մամուլի բաւական ստար ժո-  
ղովածու: Այդ բաւական չէր համարում: Մօտա-  
կայ վանքում վանահօր մօտ գիւղած կար հայ  
պարբերական հրատարակալութիւնների և հայագի-  
տութեան գրքերի մեծ քանակութիւն: Մտեման  
Սանամեանը նամակ գրեց վանահօրը: Նա վանքի  
բարեկամ անձն էր, վանահայրը չըմերժեց: Մի  
քանի օրից յետոյ ասսնեակ հատորներ ստացւած  
էին: Դեռ աշակերտական հասակում նաթանը  
կարդացլ էր հայոց գրականութեան ընտիր երկերը

ամրողապէս: Այժմ նա ուզում էր իրագործել իր ծրագիրները՝ հասկանալ ժողովրդի ոգին և ձրդտումները և ամեն ինչ հիմնել այդ ձգտումների վրայ, գանել ժողովրդի առաջադիմութեան ճշմարիտ ուղին ու նրանով ընթանալ:

Այս բոլորից գուրս երիտասարդները միատեղ զբոսանքներ էին անում շրջակայթում, զնում էին ձորը, այգիները: Զարդարուն բնութիւնը նրանց բաւականութիւն էր տալիս:

Մի օր էլ պատրաստեցան գնալ Սրովեանների մօտ: Դեռ աշունը չէր վերջացել: Մի ժամաշափ կար, որ արևը մայր մտնէր, երբ նրանք ճանապարհ ընկան: Առաջին կառքում նստած էին Նաթաննու Վիկտորը, երկրորդում՝ Ստեփան Սանամիանը, տիրուհին և Հայկը:

Կառքերը անցան գիւղի բաւական երկար խճուղիով, ապա սկսեցին բարձրանալ սարալանջով դէպի հարաւ, նորից սկսեցին իջնել: Ճանապարհը մի քիչ տեղ միայն ընկած էր արտերի միջով, յետոյ սկսում էին այգիներ, անվերջ այգիներ: Արևի վերջին շողերը խաղում էին կանաչների հետ, որոնք կարծես հասկանում էին, որ մի քանի ըստէից յետոյ արեգակը կըծածկէի սարի միւս կողմում և իրանց կըթողնի գիշերւայ ցրտի ճանկերում անձար ու անօդնական: Երբ կառքերը մօտեցան ծառերի շարքերին, թախծոտ տրամադրութիւն պատեց ուղեւորներին: Խաղողի թփերը արդէն թաղւած էին, իսկ բարձր ընկուզեները հօճում էին իրանց վերամբարձ կատարները: Տերևները հանգարտ գետին էին նետում, Խիտ դեղին հագած ծիրանիները, նարնջագոյն տանձենիները մի դարդոտ, սօսափիւն էին բարձ-

րացըել, սը՝ս-սը՝ս, թափւում էին տերեները: Հոտաղները իրանց տաւարը տարել էին տուն, շայց մէկը, գուցէ ուշացած, քշում էր անասուններ էն և բարձրածայն երգում մի ժողովրդական լէլէ: Մի անբախտ սիրոյ երգ էր, որ հնչեցնում էր պարզ եղանակով ու հոգու ամբողջ թափով, ապա բում էր իր երգի վարագող զգացումներով: Քիչքիչ արկը մայր մտաւ, աղջամուղջը պատեց ամենուրէք: Օդը աւելի ցրտացաւ: Ընկուզենիները շարժում էին գլուխներնին, տերեները սօսափում էին, սըս, սըս...

Սկզբում նրանք լուռ էին: Ապա երկու կառքում էլ սկսեցին խօսել: Ստեփան Սանամեանը խօսեց հին-հին օրերի, յիշողութիւնների մասին: Տիրուհին հաստատում էր նրա ասածները: Հայկը ձեացնելով, թէ լսում է, մտքով ուրիշ տեղեր էր թափառում: Ծերունիները շատախօս են լինում, Սանամեանը այդ պակասութիւնից զուրկ չէր:

—Նաթան, ասաց Վիկտորը, սիրում հս այսպիսի տեսարաններ:

—Այն, սիրում եմ, հս աշունը շատ եմ սիրում, Վիկտոր: Երբ Գերմանիայում էի, ամենից շատ այստեղի աշունն էի յիշում, բոլորիդ դէմքերը տշնան տեսարանների մէջ էի պատկերացնում:

—Ես էլ հմ շատ սիրում: Աշունը գարդուն ներշնչումներ է անում. մարդ բաւականութիւն է ստանում, կարծես, հանգստանում է յոգնածութիւնից:

—Եմտ հս յոդնած:

—Է՛, սիրելիս, այն, ինչ ապրել ենք սուս

ուսանողներս վերջին տարիների ընթացքում,  
Գերմանիայում ապրողի համար անհասկանա-  
լի է:

— Ի՞նչնո՞ւ:

— Ի՞նարկէ պատճառներ կան, ազատագրական  
շարժում, յեղափոխութիւն, կուսակցութիւն ևու-  
սիշ այդպիսի շատ բաներ: Այժմ էլ բէտկցիա,   
սիրոյ լիգա, պրովոկատորութիւն, ես ինչ գիտեմ,  
էլ ինչ բաներ...

— Հա, գիտեմ, ես էլ եմ կարդացել, հաս-  
կանում եմ:

— Բայց դու հեղնում ես:

— Ամեն ոք կարող է իր կարծիքն ունենալ:  
Ես կասկածելու առիթներ շատ ունեմ: Զըմոռա-  
նամ հարցնել. հայերի շրջանում էիր, թէ ուու-  
ների:

— Այդ միևնոյն է մեզ համար, մենք ձըգ-  
տում էինք բարձր կանգնել ազգութիւնից: Սօ-  
ցիալիստները հայրենիք չունեն:

— Կովկասի ինգուշն ու քաղաքագէտ լեհը,  
հիւսիսի սամոելու ու հրեան, արքայասէր վելիկո-  
րուսը, միջին ասիական թուրքը, բոլորը մի-  
ևնոյն ճանապարհով...

— Բոլոր ճանապարհները Հռովմ են տանում:  
Կապիտալը խորտակել է ազգերի սահմանները:

— Մի հարց էլ. հաւատում ես գուծիդ, աստ-  
ւածներդ չեն տատանուում:

Վիկտորը իսկոյն չըպատասխանեց: Նա այդ  
հարցին վախենալով էր սպասում: Նրա հոգում  
վերակենդանացաւ այն պայքարը, որն ահա մի  
տարի է, տանջում էր նրան: Իսկապէս նրա հա-  
ւատը քիչ-քիչ թուլանում էր: Ի՞նչ է անում ինքը,

ում է պատկանում, Պետերը ուգին, թէ իրանց  
գիւղին երբեմն նրան թուում էր, որ ինքը ոչ մէ-  
կին չի կապծ, որ ինքը ոտքերի տակ հող չունի,  
ամուր պատանդան չունի, որ ինքը մնում է  
միշտ խօսքի շրջանում, որ իր սկզբունքների շենքը  
սկսում է խորտակել: Երբեմն ենթարկում էր  
մելանխոլիայի, սկսկում էր յափշտակել սեռական  
հաճոյքի գգացումով: Կասկածը բուն էր գրելնրա  
սրտում, հոգում կատարում էր տանջող դրամա:  
Երբեմն իր ներսում զգում էր մի դատարկութիւն  
և սարսափում էր նայել նրա խորքը...

— Լո՛տ մ ես, չես պատասխանում: — Հարցը եց  
նաթանը:

— Չը Գիտեմ: — Սպա քիչ լոռութիւնից յետոյ  
պատասխանեցի. — Նաթան, ես ոչ ոքի չեմ խոս-  
ովանել, ես բաւականին հպարտ եմ սրտիս ե-  
ղածը ուրիշներին յայտնելու համար: Դու ինձ  
սիրում ես անշուշտ, դու իմ ամենամօտիկ ընկերն  
էիր մի ժամանակ: Այժմ շատ բան է անցել, բայց  
ես գեռ հաւատում եմ քեզ, հաւատում եմ, ինչ-  
պէս մեր պատանեկական հասակումն էի հաւա-  
տում: Զիմ ծածկի, քեզ կասեմ: Ահա մի տարի  
է, ես կասկածում եմ: Այդ կասկածը որոշ և  
վերջնական ձեակերպութիւն չի ստացել, բայց  
թուում է, որ իմ հետ փորձութիւն է կատարում:  
Իմ սրտում փոթորիկ է, սակայն նրա հետքերը  
յայտնի չեն դեռ. չըգիտեմ, ինչ աւերմունքներ է  
լինելու իմ ներսը: Մի հարցնի, ոյժ չունեմ այդ  
հարցին պատասխանելու, անցեալը դեռ շատ մօտ  
է, զղես յողնած են: Ես թողել եմ գործերը, ըն-  
կերներիս: Նրանք անշուշտ ինձ նախատում են:  
Ես այժմ պատերազմի դաշտից փախած դիմուր

եմ, ինձ իրաւունք ունեն պարսաւելու, սակայն ես այլևս նոյն տեղը չեմ վերադառնալ: Երբ փոթորիկն անցաւ, ես զգացի, որ ներքին կապերով չեմ կապւած այնտեղի հետ: Բաւական է, Նաթան, ես խեղդում եմ. այնտնդ էլ էի այսպէս, այստեղ էլ մթնոլորտը խեղդում է. Էլ շարունակել չեմ կարող, հոգիս, թող հարցերդ, թող ես հանգստանամ, օգնիր ինձ այս դրութիւնից ազաւելու, խօսիր ծառերի մասին, զոյնզգոյն տերեների մասին, խօսիր աշնան մասին: Այն, աշունը գեղեցիկ է:

Նա թե՛ք ձգեց Նաթանի ուսովը և լռեց: Նաթանը քնքշութեամբ շոյեց նրա գլուխը և ասաց. հասկանում եմ քեզ:

Երկնքում երևում էին աստղերը: Աշնան աստղերն ել գեղեցիկ են: Նաթանն ու Վիկտորը երկնքին էին նայում, ասուաների տարրափ կար այնտեղ: Կառքը մտաւ գիւղանման քաղաքը: Փողոցներում մարդիկ կանգնուած զրոյց էին անում: Պատուհաններից լրյաը անդրադարձել էր փողոցի պատերի վրայ: Մի դրան առաջ կանգ առան: Մի քանի ըռպէից յետոյ նրանք ներսն էին:

Երբ Աբովեաններն իմացան հիւրերի գալուստը, ուրախացան: Սուսաննան համբերել չըկարողացաւ և հօր յետելից անմիջապէս դուրս եկաւ, որպէսզի, որքան կարելի է, շուտ տեսնի նրանց: Ելինան մնաց ներսը, բայց անհամբերութեամբ սպասում էր դրան յետևում: Երբ ներս

մտան Ստեփան Սանամեանը շտապեց երիտասարդներին ու օրիորդներին ծանօթացնել: Երբ մեծերն սկսեցին իրանց խօսակցութիւնը, ապա ձեռնարկեցին նարդի խաղալ, տղաներն ու օրիորդները մի քանի ըռպէ լուռ էին, և իւրաքանչիւրը նրանցից անյարմար դրութեան մէջ էր զգում իրան: Լոռութիւնը ճնշում էր նրանց, սակայն խօսելու նիւթ չէին գտնում: Վերջապէս Հայկը, որ սկըզբում ծերունիների խաղին էր հետեւում, աւելի մօտեցաւ նրանց և յաջողեցրեց ընդհանուր խօսակցութիւն առաջացնել: Նա օրիորդներին հարցեր էր առաջարկում օրանցի, պարապմունքների մասին: Սուսաննան պատասխանում էր նրան, իսկ ելենանքիչ էր խօսում, այն էլ այն ժամանակ, երբ հարցը յատկապէս իրեն էր ուզզւում: Խօսելիս նա շփոթւում էր և կարմրում:

Խօսակցութիւնը սովորական նիւթերից անցաւ գրականութեանը: Կէս ժամից յետոյ Սուսաննան այլևս ամենսեին չէր քաշւում, խօսում էր, ինչպէս հինծանօթների հետ, հարցնում էր Թիֆլիսի և Պետերբուրգի մասին, այնտեղի սովորութիւնների ու կանանց մասին: Նա նոյնիսկ մի քանի անգամ դիմեց Նաթանին՝ կամենալով տեղեկութիւն ստանալ արտասահմանի մասին: Նաթանը պատասխանում էր կարճ:

Թէյի ժամանակ Վիկտորը սկսեց կոճպէլիմենտներ ուղել օրիորդներին: Սուսաննան աշխատուում էր բողոքել, բայց այդ նրան այնքան էլ չէր յաջողուում: Ասենք, նա սաստիկ ուրախ էր այդ խօսքերի համար և բողոքում էր ձեւի համար, կամ մի աւելի սուր պատասխան ստանալու նպատակով: Վիկտորը այդ խնդրում վարպետ էր

Թէյից յետոյ աղաներից մէկը զբօսանքի գնալու ցանկութիւն յայտնեց: Տիկին Աննան հակառակեց, թէ ցուրտ է: —է՛, մայրիկ, ինչ ցուրտ է, դեռ ձմեռը հեռու է, ինչո՞ւ ես խանգարում, —ասաց Սուսաննան:

—Նրանք դեռ երիտասարդ են, նրանց արիւնը տաք է, չեն մրսի: Եթէ ուզում են, հարկաւոր չէ խանգարել, —մէջ ընկաւ Ստեփան Սանամեանը:

Արովեանը թէկ դէմ էր, որ աղջիկները այդ նորածանօթ երիտասարդների հետ, գիշեր ժամանակ, զբօսնելու գնան, բայց հիւրերին չը վշտացնելու համար այնպէս ցոյց տւեց, որ համաձայն է: Զրօսանքը գլուխ եկաւ:

Փողոցները դատարկ էին, Կըբեմներբեմն միայն շտապով անցնող մի անձնէր պատահում, մէկ էլ քաքարապահներն էին այս-այն փողոցի ծայրին կանգնած: Կառքերն էլ ակաւ էին: Պայծառ աստղագարդ գիշեր էր, լուսնեակ չըկար, օդը մրսեցնելու չափ ցուրտ էր: Նրանք եկան քաղաքի ծայրին դանող այգին: Զրօսնողներ չըկային, նստարանները դադարի էին: Նրանք տասուը րոպէի չափ նստեցին, ապա սկսեցին ծանը քայլել: Այգու ծառերը, համարեա, լիրկ էին, աերևները թափւած: Վիկտորն ու Սուսաննան ուրախ-ուրախ խօսում էին ու ծիծաղում: Նաթանը մաքերի հետ էր ընկեր: Հայկը Ելենայի հետ հանդարտ խօսակցում էր: Ելենան սովորականից աւելի ուրախ էր, հետաքրքրութեամբ հարցեր էր տալիս: Խօսակցութեան նիւթն էր կանանց կըրթութիւնը: Տղամարդկանց ներկայութիւնը, կար-

ծես, Ելենային ոյժ էր տալիս: Նա մտածում էր գիմնազիստկա ժամանակս ինձ ձանձրացնում էին պատանի գիմնազիստների հաճոյախօսութիւնները, աւարտելուց յետոյ հօրս կոպիտ ու տգէտ խօսքերը, խրատները: Ահա այսպիսի անձանց հետ պիսի կեանք անցնել: Սակայն նա ուզում էր խօսնեցնել Նաթանին: Երիտասարդների մասին առաջուց իր լսածներից նա եղակացրել էր, որ Նաթանը նրանցից ամենահետաքրքրականն է, հանելուկայինը: Առաջին տպաւորութիւններն էլ այդ էին հաստատում: Նաթանի լուսկեցութիւնը, փայլուն, սուր աչքերը, խոր հայեացը Ելենայի հետաքրքրութիւնը աւելի լարում էին:

—Ասացէք, պարոն Ամառունի, —դիմեց նա Նաթանին, —ինչ դրութեան մէջ է գերմանացի կանանց կրթութիւնը:

Նաթանը այս անգամ խօսեց բաւական երկար: Նա կարողացաւ ճշտօրէն ներկայացնել գերմանացի կնոջ կրթական-հուսարակական պատկերը: Նրա խօսակցութիւնը, խօսելու եղանակը օրիորդին դուք եկաւ:

Տուն գառնալու մասին ամենից առաջ Ելենան յիշեցրեց: Երբ տուն հասան, ընթրիքը պատրաստ էր: Նրանց էին սպասում: Ընթրիքի ժամանակ Սուսաննան երգում էր, Վիկտորը չափանց ուրախ էր: Կարմիր գինին էլ աղղեցութիւն էր անում: Բանն այսուեղ հասաւ, որ Վիկտորը սկսեց ինքն էլ երգել, և այդ անելու համար նա հրաւերի էլ չսպասեց: Նաթանն էլ էր խմում, բայց լուռ էր: Ծերունիները հիացել էին, նրանք կրկնակի անգամ մաղթեցին Վիկտորի կենացը, այն ինչ միւսները այդ պատւին մի-

այն մի մի անգամ արժանացան։ Ստեփան Սահնամեանը նոյնիսկ իր մօտ կանչեց նրան, համբուրեց։ Ծերունիսերի քէվը շատ լաւ էր։ Տիրուհին իր որդուց շատ գոհ էր, իրան ծանր է պահում, մտածում էր նա։ Տիկին Աննան մտքերի մէջ էր ընկել, Երիտասարդների ներկայութիւնը ։ Ինչեցնում էր իր հանգուցեալ որդուն։ Ա՛խ, Աստրած, ինչ լաւ կը լինէր, եթէ նա էլ մնար, մեծանար, օրանց պէս լաւ մարդ դառնար, որ ևս էլ մի թարեւէի, նա մի անգամ նոյնիսկ հառաչանք արձակեց, որ աննկատելի չը մնաց։ Տիրուհին կնոջ հոտառութեամբ հասկացաւ նրա վշտի պատճառը։ Ընթթեքից յետոյ անմիջապէս ցրւեցին։ Հիւրերի համար սենեակներ է պատրաստւած։ Վիկտորն ու Նաթանը մի սենեակում էին։

Նաթանը, երբ ընկաւ մահճակալի վրայ, զգաց, որ սենեակը պտտում է գլխովը. վեր կացաւ ու սկսեց ման գալ սենեակում։ Վիկտորը դեռ քնել չէր կամենում, քթի տակին դունդունում էր սուսերէն մի ուսանողական երգ։ Տեսնելով Նաթանի գունատած գէմքը, մօտեցաւ և ըսնեց նրա թեկից։

—Ի՞նչ է պատահել, այ տղայ, հը չը լինի՞ օրիորդները նետ են ուղղել սրտիդ։

—Թող, Վիկտոր, գլուխս ցաւում է։

—Հասկանում ես, օրհնւած գինին, գլուխդ տաքացրել է։ Դէ, տիսրելու ժամանակ չէ, արի ասա, տեսնեմ, որին ես հաւանում։ —Եւ նա բըռնեց Նաթանին, ձեռքը զցեց նրա վզովը և նստեց մահճակալի վրայ։ —Ասա, ասա, սիրելի Նաթան, որը քեզ ամենից շատ դուր եկաւ։ Անշուշտ ելենան, այս, դու նրան ես հաւանել ։ Նա խորա-

մանկ է, ես նկատեցի. իր լոռութեամբ, խորհըդաւոր հայեացքներով ու հառաչանքներով ուզում է ուշադրութիւն գրաւել, ես հասկանում եմ։ Գաւառացի է, տգէտ ծնողների աղջիկ, փեսացուի սպասող։ Զարժէ, ես իմ Աստւած, բաբա, ուրիշ ոչինչ։ Լաւ, լաւ, մի հակառակի, եթէ նեղանում ես, խօսք յետ եմ վերցնում, որ սրտիդ չըկպչի. բայց իմացիր, կեանք չըկայ նրա մէջ, ուրիշ բան է միւսը, կը լի է, բայց գդուշացիր մօտենալ…

—Ի՞նչ ես ասում, Վիկտոր, թող, ի սէր Աստծու։

—Դարձեալ կեղծեցիր, դու դեռ սեմինարիստ ես, Գերմանիան անգամ չի ազատել քեզ այդ հայկական համեստութիւնից. խոստովանիր, որ Ելենայի սկ աչքերը գերել են քեզ։ Իսկ ինձ կապոյտ աչքերը դուք եկան, հասկացա՞ր. կապոյտը լաւ է, ծովի պէս խոր, երկնքի պէս անսահման…

—Վիկտոր, թող այդ խօսակցութիւնը, գլուխը ցաւում է։

—Ա՛յ, հէնց դրանից է, որ գլուխդ ցաւում է։

—Դու հարբել ես,

—Գիսին սքանչելի բան է, մարդու նոր հոգի է տալիս, դարգերը ոչնչանցում։

—Թող, Վիկտոր, գլուխս կարգին ցաւում է, սենեակը, կարծես, պտտում է շուրջու։

—Ա՛յ, դու իսկապէս հարբած ես. դէ շուրպարկիր, հարկաւոր է չը մըսել։

Նա Նաթանին պարկեցրեց, թաշկինակը թրցեց և գրեց նրա ճակատին, նոյնիսկ նրա կօշիկները հանեց։ Նա երկար ժամանակ արթուն

էր, Նաթանին էր ծածկում, կամացուկ երգ էր  
մրմիջում: Ելք Նաթանը քնեց, նրա քունն էլ  
տարաւ, քէֆը անցաւ: Նա էլ հանւեց ու պարկեց:  
Կէս գիշերին երկուն էլ քնած էին, բայց նրանց  
քունը անհանդիստ էր:

**Սուսաննան** էլ շուտ քնեց: Զրօնանը լաւ  
էր աղղել: Մի քանի րոպէ միայն նրա միտքը  
կանգ առաւ Վիկուրի վրայ: Նաթանը նրան ա-  
մենկին դուր չեկաւ, Հայկին էլ շատ սառն ու  
լուրջ գտաւ, չէ, շատ չոր է, զգացմունք չի ունե-  
նայ, անցաւ նրա մտքով:

Քնած չէր միայն Ելենան: Երիտասարդները  
նրա սրտում միանգամից յեղաշրջում առաջացրին:  
Տարիների լուս մտորումները մի անգամից գլուխ  
բարձրացրին նրա հոգում: Տղամարդու հայեցք-  
ները բորբոքեցին նրա սրտի խեղդւած զգացում-  
ները: Ահա սրանք են, որ պիտի բռնեն իր թևից  
և ազատեն իրան ընտանիքի շրջանից: Նա մըտ-  
քով համեմատում էր երեքին ու կանգ էր առնում  
Նաթանի վրայ: Նրա փայլուն աչքերը շատ խոր-  
հըրդաւոր երևացին: Ի՞նչ լրջութեամբ էր խոռում,  
ինչ ոյժ կար նրա խօսքերում, ախ Աստած, ինչ  
լաւ բան է ոյժը: Այդ րոպէին, կարծես, նա ձըգ-  
տում էր գոլորշիանաւ ու ձուլւել իր մտքերում  
մարմին ստացած տղամարդ—ոյժի մէջ: Երբ յի-  
շում էր Նաթանի աչքերը, նրա նոր սկացած վե-  
րին շրթունքը, Նաթանը նրան գեղեցիկ էր պատ-  
կերանում, խորաթափանց, և նրա սիրաը սկսում  
էր բարախել: Քունը մօտ չէր գալի նրան, ճա-

կատը այրւում էր: Երբ գլուխը դնում էր բարձին,  
աչքերը խփում էր, ընկնում էր պատրանքների  
աշխարհը: Քաղցը ցնորքների մէջ անդամ նա լի-  
շում էր հօրը: Այդ, նա էլ ոյժ է, կոյր և յամառ  
ոյժ: կընդիմանայ և դրա համար պատճառներ նա  
կըդտնի: Ո՞հ, այն ժամանակ մեծ ջանքեր են հար-  
կաւոր դիմադրելու համար: Երան թւում էր, որ  
ինքը հօրը յաղթել չի կարող, որ վազուց է կորց-  
րել հօր դէմ բանեցնելու զէնքերը: Այդ մտքի  
հետ սարսափը բռնում էր նրան: Մտքերն այն-  
քան յաղթեցին, որ վերկացաւ տեղից, մի կողմ  
քաշեց պատուհանի վարագոյրը: Դուրսը մութն  
էր, աստղերի թոյլ լուսի տակ ծառերը հաղիւ  
էին նշմարում սկ ստեղների պէս: Սուսաննան  
քնած էր իր մահճակալի վրայ: Այս Աստած,  
ապա ինչու նա հանգիստ է: Եթէ Սուսաննան լի-  
նէր իմ տեղը, նա չէր վախենայ հօրից, նա իր  
սրտի ուղածին համելու համար ոչ ոքից չի վա-  
խենայ, ինքը, միայն ինքն է անզօր այդ բանի  
համար: Իր անգօրութեան միտքը նրան յուսա-  
հատեցնում էր Նա չոքեց մահճակալի մօտ, լու-  
սամուտի առաջ Նրա շրթերը շարժում էին, նա  
աղօթք էր մրմնջում, նա օգնութեան էր կան-  
չում ամենառութեղին՝ Աստծուն...

Աղօթքից յետոյ նա իրան թեթևացած զգաց:  
Լոյսը բացւում էր: Ելենան հանւեց ու պարկեց:  
Կարող էին նրան այդպէս տեսնել, իր գաղտնիքն  
իմանալ Զէ, նա որոշեց ոչ ոքի չը յայտնել իր սրտի  
յուղմունքը: Ի վերջոյ նա էլ քնեց:

Առաջին այցելութիւնից յետոյ անցել էր մի

ամիս: **Փոխայցելութիւնները** շատ էին կրկնւել: Հոկտեմբերի զարգարում օրերը վերջացել էին, նոյեմբերն էր, ձմբան նախակարապետը՝ Շառերը մերկացել էին իրանց զգեստներից ու սվավալով տատանուում էին երբեմնակի բարձր սարիցը փը-չող ցրտաբեր հողմից: Ա. գիւղի դիմացի լեւներն էլ երբեմն իրանց գագաթները կորցնում էին ամ-պերի մէջ, երբեմն էլ պարզ, արևոտ օրեր էին լինում: Այդպիսի մի օր նաթանը շուտ վեր կա-ցաւ և, առնելով սրբիչը՝ դուրս եկաւ ձորի վրայի բարձր պատշգամբը, կապոյտ երկնքին ու նոյն գոյնի գետին նայեց, ապա իջաւ ձորը՝ սառն աղբիւրում լւացւելու համար: Փայտեայ հին կա-մուրջից մի քանի գերաններ էին մնացել, որոնց գլուխները յենւած էին անսասան ժայռերին: Բնութիւնը ազդեց նրա հոգու վրայ, և երեակա-յութիւնը սկսեց գործել: Նա նախ մտածեց երե-կոյան վերջացրած իր գրքոյկի մասին:

Իր ծրագրած աշխատութիւնների այս առա-ջին համարում նա այն միտքն է զարգացնում ու պաշտպանում, որ անհատի ու միութիւնների հա-սարակական գործունէութիւնը պիտի ի հաշիւ առնի ժողովրդի հոգին և այն ուղիները, որոն-ցով ընթանում է ժողովրդի բնական առաջնա-ղացութիւնը և որ, եթէ մի մարդ, կամ մարդ-կային մի համախմբութիւն իր գործի օբեկտ ընտ-րած ժողովրդի հոգեկան կեանքը, մտքի ձգտում-ները չի հասկացել, օտար հորիզոններից փոխ բերած մեծ գաղափարները ժողովրդի սրտում պատւաստելիս բարոյական արդիւնք չի ստանայ, ընդհակառակը, կայլասեռի հասարակութեան խիղճը: Այս գրւածքում մի շարք յարձակումներ

կային: Գրւածքը շուտով պիտի ուղարկէր տպա-գրելու:

**Մտքերով ծանրաբեռնւած՝** նա հասաւ կա-մուրջին, բարձրացաւ գերանի վրայ, իր շուրջը նայեց: **Միտքը թոփչը գործեց:** Նաթանը սիրա-հարւած էր: Օրիորդ ելենա Աբովեանը կարողա-ցել էր գրաւել նրա սիրտը: **Սկսեց մտածել ելե-նայի մասին:** «Ելենա» կանչեց նա ժայռի վրայից ինքնարերաբար և լսեց ձայնի արձագանքը, «Ելե-նա: Եւ այդ հնչիւնները նորից շարժեցին նրա արիւնը:»

Նա սիրում էր առաջին անդամ: **Փոքը** հա-սակից սկսած նա սիրոյ, կամ ընդհանրապէս ալ-զամարդու և կնոջ հոգիների իրար ձգտելու մա-սին ունէր խորհրդաւոր հասկացողութիւն: Կինը, սրան հասնելը նրա համար եղել է մի քաղցր, սուրբ տենչ, որին հասնել է կամեցել անարատ սրտով, մի զաղտնի, տարրերային, գուրեկան փայփայանքով: Նա դեռ չէր ճաշակել առաջին համբոյրը, և նրան թւում էր, որ այդ երջանիկ ըոպէին մի արտասովոր, մի աստւածային հաճոյք պիտի զգայ: **Միշնակարդ կրթութիւնը գիշերօ-թիկ կեանքով անցաւ:** ուսանող ժամանակ փախ-չում էր կանաց հասարակութիւնից: Բայց երբ պատահեց Ելենային, նրա սիրտը նայեց այդ աղ-ջկան ու գրաւեց: Բայց Նաթանը դեռ մի խօսք չէր ասել ոչ ոքի և չէր կարծում, որ կարող է ասել: Նոյնիսկ Ելենային նա իր սիրտը բանալու համարձակութիւն չունէր: Նա, որ առաջին յօդ-ւածում արդէն պատերազմ էր յայտարարում շատ հայեցքների, հասարակական գործիչների ու կուսակցութիւնների, զգում էր, որ սիրոյ մասին

ուրիշների հետ խօսելու, նոյնիսկ իր ցնորքների թագուհուն մի խօսք ասելու ոյժ չունի: Նրան թում էր, որ եթէ այդպէս շարունակւի, իր սիրու կըտրաքւի: Երբեմն էլ նրան դուր էր դալիս այդ գաղտնիութիւնը: Երբեմն մարդ բաւականութիւն է ստանում, երբ զգում է, որ ինքը մի գաղտնի միտք է թագցնում իր կրծքի տակ, երբ աչքերը խփած մտորում է այդ մաքի շուրջը, հոգում կրում է մի սրբազն պատկեր, միենոյն ժամանակ գիտէ, որ ուրիշները նայում են իրան և չեն հասկանում, թէ ինչ է կատարում իր ներսը:

Կանգնած գետափին նա դարձեալ այս մըտքերով էր տարւել: Երբ մօտեցաւ աղբիւրին և սառը ջրով լացւեց առանց ուշը դարձնելու ցուրտ եղանակի վրայ, երկակայութիւնը դադարեց գործելոց: Նա արագ-արագ դուրս եկաւ ձուրից և տուն գնաց:

Պատշգամբում նրան պատահեց Վիկտորը Բարեկացին և երկուսով մտան Նաթանի սենեակը:

—Դիտես ինչ, ես վերջին օրերս նկատում եմ, որ դու անսովոր դրութեան մէջ ես, շուտ հո արթնանում, շուտ-շուտ ձորն ես գնում, երբեմն երկար ժամանակ լուսում ես ու մտածում, ինչ է պատահել, —ասաց Վիկտորը,

—Դարձեալ սկսեցիր մարդարէութիւններ անել:

—Առանց մարդարէ լինելու էլ փորձւած աչքը կարող է տեսնել:

—Եւ այդ փորձւած աչքը դու ես, հա:

—Այս Ուզում ես, ասեմ ինչու ես այդպէս:

—Ես սովորական դրութեան մէջ եմ:

—Սուտ ես խօսում: Նաթան, ի սէր Աստըծու, թող այդ ծածկամտութիւնդ: Մարդ պիտի իր սրտումը եղածը ուրիշն ասի: Եթէ ամեն բան պահենք ներսում, սիրու չի դիմանայ: Գոնէ մի սրտկից անձնաւորութիւն պիտի ունենաս:

—Ես իմ բոլոր ծրագիրների մասին քեզ հետ խօսում եմ, դու գիտես իմ ամբողջ կեանքը՝ անցեալս ու ներկաս ու ապագայի ցանկութիւններս:

—Մի խնդրի մասի միայն դու չես խօսում, և այդ զարմանալին է: Քանին մարեկան երիտասարդը իր ամենամօտ բարեկամի և ընկերոջ հետ չի խօսում աղջիկների մասին: Գոնէ ինձ կարող ես ասել, որ դու սիրահարւած ես:

—Վա, Վիկտոր, ինչ ես ասում, ես սիրահարւած չեմ:

—Զարմանալին հէնց այդ է, որ դու քսանուեինք տարեկան ես և հաւատացնում ես, թէ աղջիկներով չես հետաքրքրում: Աշակերտ ժամանակդ էլ այդպէս էիր: Գերմանիայից ոչ մի նամակում ակնարկ անդամ չէիր անում այդ մասին, այն ինչ ես բոլոր նամակներումն գրում էի Պետերբուրգի աղջիկների մասին: Առաջ ես հաւատում էի քեզ, իսկ այժմ համոզւած եմ, որ դու կեղծում ես, որովհետև դու սիրահարւած ես և այդ թագցնում ես: Դէ լաւ մի կարմրի, ամօթէ, կասես, գիւղացի աղջիկ լինես:

—Թող, մի տանջի ինձ, Վիկտոր, ի սէր Աստծու, ես սիրահարւած չեմ:

—Ա՛, դու տանջում ես, այդ հէնց սիրահարութեան առաջին նշանն է: Դէ մի յուզը,

արի, արի սիրահարւած բարեկամս, եղբայրս, մի  
տանջւի, ասա ինձ գաղտնիքդ:

—Դու ծաղրժւմ ես:

—Ոչ, ոչ. ես շատ եմ սիրում սիրահարւած-  
ներին, ամենկին չեմ կպչում նրանց սրտին. այդ-  
պիսի մարդիկ գուրգուրանքի կարիք են զգում:  
—Այժմ էլ փորձւած սիրտն է խօսում:

—Այս, ես շատ եմ սիրահարւել, չեմ ծած-  
կում, սեմինարիստի պէս չեմ կարմրում: Ես այժմ  
էլ սիրահարւած եմ:

—Սուսաննայի վրայ:

—Այս, այս. հանգիստ կաց, Երևան  
ազատ է:

—Ի՞նչ ես ուզում ասել:

—Ուզում եմ ասել, որ Երևանային սիրում ես:  
Դարձեալ կարմրեցիր:

Մի քանի վայրկեան լոռութիւն տիրեց:

—Թոյլ տուր հարցնել, Վիկտոր, մարդիկ  
ընդունակ են մի սէրը մոռանալ և մի ուրիշն  
սիրել:

—Այս, չորրորդ անգամն է, որ սիրահարւած  
եմ: Մարդիկ միշտ պիտի ազատ լինեն և ազատ  
սիրեն, ում ուզում են և երբ կամենում են: Կնոջ  
մէջ ես սիրում եմ գեղեցկութիւնը, քնքշութիւնը,  
մի խօսքով այն, ինչ որ կոչում է կանացիու-  
թիւն: Այսօր Սուսաննայի մէջ եմ տեսնում այդ,  
նրան եմ սիրում, երբ նրան այլևս չեմ տեսնի,  
կանցնի մի առ ժամանակ, կը պատահեմ մի ու-  
րիշ կնոջ, որը կունենայնոյն գրաւիչյատկութիւն-  
ները, նրան կը սիրեմ և այդպէս շարունակ: Մի  
խօսքով սէրը ազատ պիտի լինի: Նաթան, այ,  
դու ինձ ոչինչ չես ասում, իսկ ես յայտնում եմ,

որ երբ մէկին սիրում եմ, ամբողջ էռթեամբս  
նրան եմ նևիրում, ուզում եմ ինձ ձուլել նրա  
հետ, անվերջ ծծել նրա հոգու բուրմունքը: Եր-  
բեմն ինձ բռնում է մի սաստիկ տենչ, մի կատա-  
ղի ցանկութիւն: Այդ ժամանակ կինը իր մարմ-  
նական գեղեցկութեամբ դառնում է ինձ համար  
խենթացնող հրապուրանք...

—Ո՞հ, բաւական է, բաւական է, շատ հեռու  
գնացիր, թողնենք այս խօսակցութիւնը: Սակայն  
մի հարց. հայ ժողովրդի ապագան, Ռուսաստանի  
յեղափոխութիւնը, գիտական սօցիալիզմը, կնոջ  
մարմնի պաշտամունքը ինչպէս ես հաշտեցնում  
իրար հետ, ի՞նչպէս հասկանանք:

—Հայի ազատութիւն, այդ պառաւած գա-  
ղափարից վաղուց եմ ձեռք քաշել:

—Ե՞խ, մոռացայ. դու ամենից առաջ ոռւս  
քաղաքացի ես, մեծ հայրենիքի վիճակն է քեզ  
զբաղեցնում, կարծեմ, այսպէս են ասում ընկեր-  
ները:

—Այդ մասին մտածելուց անգամ դադա-  
րել եմ:

—Ներիր, դու ազգութիւնից, պետութիւնից  
բարձր ես կանգնած, դու ինտերնացեօնալիստ ես,  
բառիս կովկասեան ըմբռնումով...

—Թոյլ, Նաթան թոյլ, հեղնանքներդ, —ձայնը  
բարձրացրեց Վիկտորը:

—Բայց իսկապէս ոչ այս և ոչ այն...

—Նաթան, խնդրում եմ, այդ մասին չը խօ-  
սենք: Դու միշտ լրջանում ես. սիրուց իսկոյն  
այդտեղ հասար, ես յոզնոծ եմ, դու իմ ջղերը  
գրգռում ես: Այդ հարցերը ինձ ուժասպառ են ա-  
նում. մի յիշեցնի, չէ՞ որ ես քեզ ասել եմ, շէնքը

փուլ է եկել և ես այժմ նորը կառուցանելու  
ոյժեր չունեմ, ես հանգստանում եմ:  
—Կնոջ մարմի պաշտամունքի միջոցով,  
—Այս, կնոջ սիրոյ միջոցով, գեղեցկու-  
թեամբ, Դէ, մի շարունակի, բաւական է, գնանք  
թէյը պատրաստ կը լինի:

—Վիկտոր, ոչ մի խօսք այդ մասին, ոչ ոքի,  
հասկանում ես:

—Շատ լաւ, հասկանում եմ:  
—Նրանք մտան սեղանատուն, ուր սպասում  
էին նրանց:

— ար նաւառամ քի մասին նուարա զիս—

ժամանակը սիրոյ համար չափ չէ: Սէրը մի  
վայրկեանում տարիների կեանք է ունենում: Վիկ-  
տորը սիրում էր Սուսաննային, Սա էլ չափազանց  
ուրախ էր, ինքն է էր տաքանում, ինքն էլ էր  
սիրում: Երկու երիտասարդ սրտեր, փոխադարձ  
սիրով լցւած, աւելի բնական ինչ կարող է լի-  
նել: Տարբերութիւնն այն էր, որ Վիկտորը առա-  
ջին անգամ չէր սիրում, որ նա ամեն տեղ սիրե-  
լու արժանի կին էր գտնում: Նրան թւում էր,  
որ այս անգամ աւելի էր տարւած, ամբողջապէս  
կլանւած էր Սուսաննայի սիրով:

Սուսաննան առաջին անգամն էր լուրջ սի-  
րահարւած: Գիմնազիստկա ժամանակ, եօթներորդ  
դասարանում նա, համարեա, յափշտակւած էր մի  
հրեայ գիմնազիստով: Հետևեալ տարին հրեան  
գնաց, ուսանելու: Նրանց յարաբերութիւնը ընդ-  
հատեցաւ և հարցը դրանով էլ լուծեց: Այդ  
դէպքը լուրջ չէր, աշակերտական յափշտակու-

թիւն, ուրիշ ոչինչ: Վիկտորն առաջին տղամարդն  
էր, որին սիրում էր Սուսաննան: Սէրը, ըստ  
սորա մի հատիկ է: Նա քիչ քիչ համոզւում էր,  
որ Վիկտորը դառնալու է իր առաջին ու միակ  
սէրը:

Վերջին օրերս Վիկտորը այնքան էր գրաւ-  
ուել, որ, համարեա, ամեն օր ձի էր նստում, և,  
առանց տանը մի բան ասելու, գնում էր Վ. քա-  
ղաքը: Այդ յաճախակի այցելութիւնների պատ-  
տառը Սուսաննան էր: Օրիորդը նրան միշտ դի-  
մաւորում էր քնքոյց ժամկտով: Նա ծնողներից չէր  
քաշում, իր ուրախութիւնը ոչ ոքից չէր թագ-  
ցընում: Հայրը յօնքերը կիտում էր, ներսից բար-  
կանում, այց Ստեփան Սանամեանի պատի հա-  
մար լրում էր: Սուսաննայի վրայ էլ չէր բար-  
կանում: Առհասարակ նա աղջիկների վերաբեր-  
մամբ տարբեր վարմունք էր բանեցնում: Սուսան-  
նան, նրա կարծիքով, թեթևամիտ էր, կարճ մը-  
տածող, հեշտութեամբ կարող էր ըմբոստանալ իր  
դէմ և անպատարեր արարք ցոյց տալ: Նամուսի  
մասին Բագարադ Սրովեանը շատ էր հոգում: Ան-  
նամուս չը լինելու համար նա զգոյց էր փոքր  
դստեր վերաբերմամբ: Այս էր պատճառը, որ  
ներսից այրուում էր բարկութիւնից, բայց չէր  
յանդիմանում: Ուրիշ կերպ էր նայում Ելենային:  
Նա խորամիտ է, խելացի, նա հօր պատիւը գետ-  
նովը չի տայ, ուստի և նրան սիրում էր: Բայց  
այդ սէրը չէր խանգարում, որ նրա հետ խիստ  
վարւի: Ելենայի իւրաքանչիւր անզգոյց քայլը տր-  
ժամանում էր յանդիմանութեան:

Ելենան սիրում էր Նաթանին, բայց ոչ մի  
առիթ չէր տալիս, որ ծնողները կասկածեն այդ  
մասին։ Նա սիրում էր շատ խոր, շատ քըն-  
քոյշ, սիրում էր լուռ, անբարբառ։ Երբ վերջալու-  
սի կամիր շողերը խաղում էին պատռհանի ա-  
պակիների վրայ, երբ անձրևի կաթիները ծե-  
ծում էին ապակուն և կրակը չըրթ-չըրթալով այր-  
ւում էր վասարանում, երբ տանը խաղաղութիւնն  
էր իշխում կէս գիշերին և կապոյտ լամպը պլազում  
էր սեղանի վրայ,—այն ժամանակ նա լուռ, մտա-  
խոհ էր գաղտնի սիրովն էր ապրում։

Երբեմն նա կարծում էր, որ ինքը փոխա-  
դարձ սիրոյ չի արժանանալու, որ բազմաթիւ  
արգելված պիտի խանգարեն իրեն, որ հայրը չի  
համաձայնի իրեն տալ մի անապահով երիտա-  
սարդի: Լինում էին բոպէներ, երբ նա լցում էր  
արիութեամբ, ցանկանում էր արհամարել ամեն  
ինչ և լսել իր սրտի ձայնին. բայց այդ բոպէները  
թռչում էին արագութեամբ և նա իրեն դարձեալ  
թոյլ էր զգում: Թող ես երբէք նրանը չը լինեմ,  
երբէք չը զգամ նրա ոյժը իմ սրտում, բայց ես  
կը սիրեմ նրան, կը պաշտեմ նրան իմ հոգում,  
գաղտնի, մարդկանց թունաւոր աչքերից հեռու:  
Այս մրմունջներն էին լցնում նրա սիրտը: Մե-  
նակութեան ժամերին նա աղօթում էր:

Նաթանին պատահելիս նա աւելի լրակեաց  
էր դառնում: Ասենք, Նաթանն էլ քիչ էր խօսում:  
Միւսները սրախօսում էին, ծիծաղում, նրանք  
լուս էին: Մի անգամ այնաէս պատահեց, «Ո  
նրանք սենեակում մենակ մնացին: Երկուսի սիրտն  
էլ բարախում էր, երկուսն էլ խեղդում էին յու-  
զումից, քիչ էր մնում, որ ճշան, բայց նրանք խօ-

սել չը կարողացան: Մի քանի վայրկեան բարձրացրին իրանց գլուխները, իրար նայեցին, հասկացան միմիանց, բայց լուցին... լուզի մասնաւոր տրամադրությունը սկսվում է պարզապես ուժականությունով:

Նոյեմբերն անցաւ: Դեկտեմբերի վերջն էր, Հայկը գնացել էր Թիֆլիս ստիպողական գործերով և պիտի վերադառնար: Նրան սպասում էին տանը: Հայրը ամենից անհամբեր էր: Նա մի ինչ որ բանի մասի շատ էր մտածում, Հայկի ներկայութիւնն էլ անհրաժեշտ էր համարում:

Վիկտորը յաճախ բացակայում էր: Նա կամ Աբովեանների մօտ էր գնում, կամ մի գիւղացի երիտասարդի հետ անյայտանում էր: Այդ երիտասարդի մասին նա հետաքրքիր արկածներ էր պատմում Նաթանին: Մի օր էլ յայտնեց, որ այդ տղան սիրահարւած է մի շատ գեղեցիկ աղջկայ վրայ, իսկ աղջկայ ծնողները չեն տալիս: Այժմ իրենք ծրագրում են փախզնել նորան:

—Սակայն այդ բոլորը ի՞նչ կապ ունեն քեզ  
հետ,—հարցրեց Նաթանը:

Նա պատասխանեց, որ երիտասարդը իր  
մանկութեան ընկերն է, որ սիրահարւածին մու-  
րազին հասցնելը ազնիւ գործ է: Քիչ յետոյ սկսեց  
սքանչացած պատմել գիւղացի տղայի սիրածի  
գեղեցկութեան մասին: Ոգևորւեց և այնտեղ հա-  
սաւ, որ գեղեցկութեան պաշտամունքին էլ մի  
քանի սրտառուչ բառեր նւիրեց:

—Այսպէս ես խօսում, որ կարծես դու ես  
նրա սիրահարը, —նկատեց Նաթանը:

—Կասկածու, —բացագանչեց նա, սակայն

իսկոյն շարունակեց խօսքը, աւելացնելով, որ  
ինքը ընդունակ է սիրահարել ամեն մի գեղեց-  
կութեան վրայ:

Խօսակցութիւնը այդպէս վերջացաւ: Երկու  
օրից յետոյ նրանք մի ուրիշ խօսակցութիւն ու-  
նեցան: Պատճառը Նաթանի նոր գործոյն էր, որ  
նա նախքան տպագրելու ուղարկելը տւել էր  
Վիկտորին կարդալու: Գրքոյկը կրում էր «Կրօնն  
ու եկեղեցին և ինտելիգենցիան» վերնագիրը:  
Վիկտորը նախ յայտնեց, որ ինքը շատէ հա-  
ւանում նրա հրապարակախօսական թափը,  
տաք լեզուն ու կրակոտ ոճը, որ համաձայն է  
եկեղեցու ու հոգևորականութեան վերաբերմամբ  
նրա ասածներին, բայց հակառակ է կրօնի նշանա-  
կութեան մասին արծարծած մտքերին:

—Իսկ ինտելիգենցիային վերաբերող գլու-  
խը—աւելացրեց նա—ուղղակի անսարդարութիւն  
է: Դու նրան մեղադրում ես ժողովրդին չը հաս-  
կանալու մէջ, համարում ես մոլորւած, դու բէակ-  
ցիային ես ծառայութիւն մատուցանում...

—Բէակցիային հանդիսաւ թող, մի ըոսէ  
ազատւիր շաբլոն մտածելակերպից և խօստովա-  
նիր, որ ամեն ինտելիգենտ իր հոգու մասնիկ-  
ները կը գտնի այնտեղ նկարագրւած, դու էլ քո  
պատկերն ես տեսել այնաեղ, ու այդ պատճառով  
քեզ դուր չի եկել այն...

—Նաթան,—գոռաց Վիկտորը, —մի մոռանայ  
քեզ:

Ի պատասխան Նաթանը ծիծաղեց: Վիկտորը  
զայրացած դուռը ամուր խփեց ու դուրս եկաւ  
սենեակից: Երեկոյն նրանք արդէն հաշտել էին:

Հայկը եկաւ: Ստեփան Սանամեանը նրա հետ  
առանձնանում էր և երկար խօսում: Մինչ այդ  
եկաւ դեկտեմբերի քսանինդը: Այդ օրը Սանա-  
մեանի ծննդեան և անւանակոչութեան տօնն էր:  
Աբրովիանները ամբողջ ընտանիքով հիւր էին ե-  
կել: Ճաշից յետոյ մեղմիկ ձիւն էր գալիս, եղա-  
նակը մեղմ էր: Ստեփան Սանամեանի պատէրով  
մի քանի սահնակներ փողոցում սպասում էին:  
Պիտի գնային զքօսանքի: Նոյնիսկ պառաւ տի-  
րուհին ու Աննան փաթաթւեցին տաք շուպկա-  
ների մէջ ու սահնակ նստեցին:

Վիկտորը մի բան փսխսաց Սուսաննայի ա-  
կանջին: Նրանք շտապով մօտեցան առաջին սահ-  
նակին, նստեցին, հրամայեցին արագ քշել: Քիչ  
յետոյ Վիկտորը կառապանին պատւիրեց ճանա-  
պարհը փոխել: Նրանք հեռացան միւսներից: Զիւնի  
կաթիլները թափւում էին հա, թափւում, երկինքը  
համատարած ամպ էր, ոչ մի տեղից կապոյտի  
կտոր չէր երեւում: Սար ու ձոր սպիտակ էին,  
ծառերն էլ ձիւնի շապիկ էին հագել: Սուսաննան  
կարմրել էր, նա ձիւնը ճմռում էր ձեռքում և  
խոնաւ ափով երեսը շփում: Վիկտորը սեղմէց  
նրա ձեռքը: Սուսաննան շփոթւեց և շշուկով  
ասաց.

—Զգնյաց, կառապանը կը տեսնի,

—Ոչինչ, —դողդողացող շըթերով ասաց Վիկ-  
տորը և աւելի ամուր սեղմէց:

—Ցետ դառնանք, —ասաց օրիորդը:

Այդ նրա համար մի աստւածային միտք էր:  
Վիկտորը կառապանին հրամայեց յետ դառնալ մի  
ուրիշ ճանապարհով: Պատէրը կատարւեց: Տասը  
բոպէից յետոյ նրանք տանն էին: Վիկտորը բռնեց

օրիորդի ձեռքից և, համարեա, զբկած ներս տարաւ իր սենեակը:

— Թու իմն ես, — ասում էր Վիկտորը, — հոգում  
շուշանը, թող համբուրեմ...

Եւ համբուրում էլի բազմաթիւ անդամ:

—Ա՞յս, թուլանում եմ... հալում եմ,—ասում  
էր Սուսանան:

Եւ Վիկտորը գրկեց նրան, փաթաթեց իր  
բազուկների մէջ։ Նրա կրակող շրթունքները  
համբուրում էին անդադար։ Սուսաննան զգաց,  
որ իր ոյժերը թուլացան. ընկաւ մահճակալի վրայ,  
ապա մի ծանրութիւն զգաց իր կրծքի վրայ. բո-  
լորովին կորցրեց իրան, գլուխը տաքացաւ աշ-  
քերը խիեց։ Խրաքանչիւր համբոյրի հետ ջերմի  
մի ուժեղ հոսանք էր անցնում նրա մարմնով։ Այդ-  
հարբած դրութեան մէջ նա հասկացաւ, որ իր  
սիրտը մինչև այդ անծանօթ մի զգացում էլ աղ-  
դեց, մի սոսկալի զգացում, որ սկզբում նրան  
ուժգին ցնցում պատճառեց, ապա հաճոյք, յետոյ  
մի ներքին ցաւ։ Մի քանի րոպէից յետոյ նրա  
հոգում ծննեց յանցանքի գիտակցութեան առաջին  
կայծը, ուշքը վրայ եկաւ, աչքերը բաց արեց ու  
նայեց Վիկտորին։ Սա էլ էր հարբած, թմրած ու  
ու կարծնս դեռ չէր հասկանում իր արածը, Նրա  
աչքերում փայլում էր բաւականութեան զգա-  
ցումը։

Երեկոյան, երբ իւրաքանչիւ ոք գնաց քննելու, Սուսաննան լամպը հանգջրեց, մտաւ անկողին: Խաւարի մէջ վերյիշելով անցածը նա նորից

սոսկաց ու հեկեկաց: Բայց նրա մէջ կենդանի էր  
այն հաւատը, թէ Վիկտորը սիրում է իրան: Այդ  
համոզմունքը նրան յենալրան էր:

Այդ միկնոյն ժամին Վիկտորը մտաւ Նաթանի սենեակը զբոյց անելու։ Նա չը մոռացաւ պատմել և նոյն օրւայ իր յաղթութեան մասին։ Նաթանը զարմանքից սառեց, մի քանի ըստէ լուռ նայեց նրան և ասաց. «մենք իրավից շատ ենք տարբերւում»։



ոյժ հմարտմի էն այս ըլամ ըպաթմին ու զայլու բամ : Յայդ չ նեղին ցիսորմի Ֆի ցուաւա՛ միս ոյժ մաղամի մայժ ցգևանկրուած ամ առան ցղորմիյ մինան միումին բամ ացառոն ց ամ այցեւա ցրոցը ցիւամեն հման սիստան մամիւոնիքալ ոյժ լայզ միու և յնուար ժույ իւազ ին ունուս ցիցմանկար ցմանիամ ունչ բժիշադ գամնա Բ. ՄԱՍ ու մայժ ընչառ ույ ։  
I ։ ՀԱՅԱՐԴԵԿԱՄ գլու

Զմեոը մօտենում էր իր վախճանին։ Հարաւից երբեմն տաք քամի էր փչում։ Զիւնը վերջանալու վրայ էր, սակայն դեռ ցուրտ օրեր էին լինում, սառնամանի գիշերներ։ Հայկ Սանամեանը, որ ձմեռայ ընթացքում երկու անգամ համբերութիւնից դուրս եկաւ և, հօրը վերադարձի խոստում տալով, Թիֆլիս գնաց, նորից գիւղումն էր։ Նա անառվոր դրութեան մէջ էր, լաւ չէր ըընում, ցուրտ ու լուսնեակ երեկոները մենակ ման էր գալիս լայն, այդիների ամբողջ երկարութեամբ ընկած խճուղիում։ Զիւնապատ անորոշ տարածութիւնները, ցուրտ օդը նրան դուր էին գալիս, և այդպիսի ժամերին նրա այտերը կարմրում էին, չէին մրսում, այլ այրում էին։

Դեռ աշնան սկզբին, երբ նա հազիւ տասն օրւայ եկած էր, հայրը նրան պսակելու խօսք ձգեց, նոյնիսկ անուղղակի համկացրեց, որ իր ամենամեծ փափակն է այդ։ Հայրը, համարեա, ինդրում էր և հասկացնում, որ հակառակ դէպքում իրան շատ անբախտ կզայց։ Հայկը հօրն անորոշ պատասխան տեեց, բայց շուտով նա անձնաառւ եղաւ ներքին խորհրդածութիւնների և

համոզւեց, որ ինքը սրտանց ցանկանում է ամուսնանալ։

Դեկտեմբերի սկզբներին հայրը կրկին անգամ խօսք ձգեց։ Նըանք երկուսով էին այլ ժամանակ, ուրիշ ոչ ոք ներկայ չէր։ Հայրը սկզբում քմծիծաղով, ապա բաւական լուրջ ասաց, որ ինքը դժոն չի լինի, եթէ Հայկը Արովեանի աղջիկներից մէկին ընտրի։ Հայկը ժամանակ խընդրեց վերջին պատասխանը յայտնելու համար։ Նա առաջ էլ Արովեանի գուստիներին հետաքըրքութեամբ ու քննական հայեացքով էր հետեւում։ Առաջին անգամ Թիֆլիս գնալիս նա երկար կանգառաւ այլ մտքի վրայ։ Մի ձիւնոտ օր էր, դուրս մառախլապատ։ Վաղոնի պատուհաննենից ու չինչ չէր նշմարուում։ Երկրորդ կարգի վագոնը համարեա դատարկ էր։ Խօսակից չը կար։ Ամբողջ օրը նա մտածեց, Ելենային ու Սուսաննային համեմատեց իրար հետ։ Սրտի խորքում զեգաց, որ Ելենան իրան դուր է գալի։ Այդ մտքի հետ մի մեղմ ու քաղցր ջերմութիւն պատեց նըրան։ Ամենից շատ նրան դուր էր գալիս Ելենայի համեստութիւնը, լրակեցութիւնը։ Նա կանգնեց և ճակատը կպցրեց պատուհանի սառը ապակուն։ Ջերմութիւնն անցաւ։ Նա սկսեց մտածել։ Լաւ կին կը լինի, հաւատարիմ, վճռեց նա։ Նըա մէջ նահապետական հասկացողութիւններ կան, գիմնապիան չի ոչնչացրել հայկական խիստ և մաքուր վարը ու բարբը. ես հէսց այդպիսին եմ որոնում... Այս և նման մոռքերի մի անբողջ շարան մի քանի անգամ անցան Հայկի գլխով ամբողջ օրը։ Երբ Թիֆլիսից վերադարձաւ, հայրը այս

անգամ նրան վճռականապէս յայտնեց, թէ ինքը  
հաւատացած է, որ մի տարուց աւելի չի ապրի,  
արցունքուտ աչքերով աղերսեց նրան՝ ամուսնա-  
նալ:

—Պատկեր, զաւակս, մի կարմիրդ կապեմ,  
մի համբուրեմ թագ ու պսակդ, նոր մեռնեմ:  
Մայրդ աչքը վրադ մեռաւ, գոնէ ևս փափակիս  
հասնեմ...

Հայկը մի քանի րոպէ հօրը պատասխանել  
չը կարողացաւ։ Այդ լուռթեան ժամանակ նա  
զբաղւած էր իր համար մի կարևոր հարցով։  
Վերջին տարիներս նա կապւել էր մի ուսւ կնոջ  
հետ։ Բայց քիչ-քիչ յափշտակութեանը տեղի էր  
տեղի մի այնպիսի անտարբերութիւն, որից ա-  
տելութիւն էր բուրում։ Սակայն նա մի բաւա-  
կան խոշոր գումարի մուրհակ էր տեղ այդ կնո-  
ջը։ Այս մասին էր նրա մտատանջութիւնը։ Երբ  
հայրը հարցը կտրուկ դրեց, նա իսկոյն յիշեց իր  
երիտասարդութեան այդ գործը։

— Հայրիկ, սիրելի հայրիկ, պատրաստ եմ  
կտտարել քո կամքը, միայն մի խնդիր ունեմ,  
աղաչում եմ քիչ սպասել, տալ խնդրածս, այ-  
նուհետև ինչպէս կամենաս:

—Պատրաստ եմ, որդիս, պատրաստ եմ...  
Դէ, արի, արի համբուրեմ: Դու միշտ էլ հնա-  
զանդ զաւակ ես եղել, նման չես ուրիշ երիտա-  
սարդների: Դեռ փոքրիկ հասակիցդ ծնողներիդ  
առաջ խոնարհուում էիր, ծնողագէտ զաւակս, հայ-  
րեկը ինչպէս կը մերժի քո խնդիրը: Դու եր-  
բէք, երբէք ծուռ ճանապարհով չես գնացել, վատ  
բան չես խնդրես... Արի համբուրեմ:

Եւ Հայկը մօտնցաւ հօրը, Սանամեանը

Համբուրեց նրան, ծերուկի ձեռքելը դողում  
էին:

— Սակայն, հայրիկ, այս անգամ խելօք որդիից ծուռ ճանապարհի համար է խնդրում:

Հայրը մի քանի վայրկեան այլայլւած հայեացքով որդուն նայեց։ Նրա դէմքը զարմանք ու հարցում էր արտայայտում։ Հայկը չը կարողացաւ տանել այդ հայեացքը, գլուխը քարշ արեց ու ասաց։

—Ներից, հայրիկ, ներիր իմ երիտասարդութեան յանցանքները:

—Հա, հասկանում եմ. հարկաւոր չէր, որդիս, չէ, չէ, հարկաւոր չէր. բայց ներում եմ, հա, էլ ըստ լինի, իհարկէ չի լինի...

Մի շաբաթից յետոյ Հայկը նորից Թիֆլիս-  
գնաց: Երբ նա վերադարձաւ, խոչընդոտը չքացել  
էր: Նա այժմ ամբողջովին զբաղւած էր պատե-  
լու հարցով: Ելենան նրան ըստ ամենայնի դուր  
էր գալիս: Նա գիտէր նաև, որ Աբովեանը որդի-  
չունի, աղջիկները նրա ժառանգներն էին:

Նաթանն անհանդիստ էր: Նրա աշխատանք-ներն էլ դանդաղութեամբ էին առաջ գնում: Պատուհանի առաջ կանգնած՝ նայում էր գետին, որ ժայռերի սուբերի առաջ սպղալով գնում էր: Գարնան հրդեհոտ վերջալոյսն էլ բիշ-բիշ մա-

բում, գունատուում էր: Դիմացի սարի վրայ ձիւնն չէր երկում այլս: Նաթանը մի վշտոտ կարօտ էր զգում:

Դուռը բացեց, և ներս մտաւ ծառան: Նա մի սկ պայուսակ դրեց սեղանի վրայ ու դուրս գնաց:

Պատը բերեցիր,—ասաց Նաթանը՝ դառնալով դէպի նա: Ապա բացաւ պայուսակը: Ինքը երկու նամակ ունէր, մնացածները Վիկտորին էին: Նաթանը նախ նամակները կարդաց: Առաջինը ուսանող ընկերներից մէկն էր դրել, միւսը Թիֆլիսի մի գրավաճառ: Ընկերը գրում էր, որ ուսանողական շըջաններում մնեծ հետաքըրութեամբ են կարդում նրա գրքոյիները: Իսկ գրավաճառը յայտնում էր, որ գրքոյիների վաճառքը յաջող է, սպասում են երրորդ մասին:

Նամակներից յետոյ նա դարձաւ լրագրերին: Նախ բաց արեց «Մունետիկը»: Շտապով շուռէ շուռ տևեց: «Երկու գրքոյիկ» ընկաւ նրա աչքին. կարդաց: Յօգևածագիրը բուռն թափով յարձակւում էր հեղինակի վրայ՝ անւանելով աղգուրաց, եկեղեցի քանդող, անրարոյական քարոզիչ: Նաթանը յօգւածը վերջացրեց ներքին դառը յուղումով: Առաւ միւսը, որ «Բանւոր» էր կոչում: Բանասիրականի բաժնում կարդաց «Նոր քարոզիչը» վերտառութեամբ յօգւածը: Բննադատը զայրացկոտ եղանակով վեր էր լուծում գրքոյիները և գտնում, որ հեղինակը ինդիուդուալիստ է, միստիկ, նիշշէիստ, ուրեմն և ըէակցիոն աճն է: Նաթանն այդ էլ ծալեց: Երբորդ թերթի՝ «Միջորէականի», քննադատը իր յօգւածին «Ուշացած

ձշմարտութիւնը» անունն էր տւել: Սա էլ սկսել էր Քրիստոսից և վերջացրել Տօմանոյով:

Նաթանը կարդալուց յետոյ՝ արմունկները յենեց սեղանին ու գլուխը ձեռքերի մէջ առաւ: Ոչ ոք իսկութիւնը չի հասկացել, մտածեց նա: Մի առ ժամանակ նա յօգւածների աղղեցութեան տակ էր: Ապա նրանց տպաւորութիւնը չքացաւ: Նրան թւաց, որ իր հոգում մի գատարկ անդունդ կայ: Նրա մէջ ծնւել էր մի բուռն պահանջ, լցնել այդ անդունդը, լցնել քաղցր հայեացքով, հրեշտակային ժպիտներով: Նա իրան մենակ էր ըղգում, մեն-մենակ: Վիկտորը տարւել էր իր զգացումներով, Հայկ նրան ընկեր չէր կարող լինել: Նրանը բարեկամներ էին, յարգող, քաղաքավարի բարեկամներ: Մայրը նրան սիրում էր անսահման, բայց մօր սէրը բաւական չէր նրա հոգու անդունդը լցնելու համար: Նա զգում էր, որ ելենան, միայն ելենան կարող է փրկել իրեն սպանիչ մենակութիւնից: Նա վեր կացաւ տեղից: Սենեակը մթնել էր: Նա մօտեցաւ պատուհանին: Կաթնագոյն լուսինը անդրադարձել էր գետի մէջ: Լուռ էր ամեն ինչ: Ապակու աղօտ թափանցկութեան միջից նա աչքերը ժայռերին, գետին ու սարին յառած՝ մտածում էր ելենայի մասին: «Միրում եմ», կրկնում էին նրան շրթունքները տենդոտ ու ջղային: Ծառան ներս մտաւ, վառեց լամպը ու դուրս գնաց: Նաթանը շուռ եկաւ, ձեռքերը դարդու շարժումով բարձրացրեց, իրար փաթաթեց գլխի վրայ և սկսեց քայլել յետ ու առաջ: Նա ամբողջ էութեամբ զգացմունք էր դարձել և ընկել ինքնամուացութեան մէջ: Միրտը, քիչ էր մնում, զարկերով ջարդի կուրծքը և դուրս

թոչի: Միայն նա կը փրկի ինձ այս վշտից, ժա-  
շող մենակութիւնից, իր աստւածային շրթուն-  
քներով կը պահի ինձ և կը լցնի հոգուս անդունդը  
բաւականութեամբ, անցնում էր նրա գլխով: Սա-  
կայն ինչպէս: Ինքը չի կարողանում ոտի տակ  
տալ ամեն ինչ և գնալ, բռնել նրա թւից ու ասել  
աշխարհին. սա իմ է, և ոչ ոք չի կարող ձեռք  
տալ սրան: Իսկ Ելենան. նա աւելի ևս ոյժ չու-  
նի: Չէ, չէ, հարկաւոր է կարուկ լինել: Պէտք է  
յայտնել վճռապէս, որ ես սիրում եմ նրան, ու  
եթէ նա էլ սիրում է, էլ ոչ ոք խանգարել չի  
կարող...

Նա բաց արեց սեղանի արկղիկը, մի թերթ  
նամակի թուղթ հանեց և սկսեց գրել:

Սիրելի Ելենա.

Թոյլ տուր քեզ սիրելի անւանել և եղակի  
խօսել քեզ հետ: Ես քեզ սիրում եմ: Այս մի հա-  
տիկ խօսքը բաւական է, որ հասկանաս, որ դու  
ինձ համար աշխարհի վրայ ամենաթանկագին  
էտական ես: Ես քեզ սիրում եմ և իմ սէրը աւելի  
քնքոյշ է, քան աղանու գուրգուրանքը, աւելի  
վճիտ, քան արցունքի կաթիլը: Դու իմ հոգու  
ջանն ես, եթէ չըլինի նրա լոյսը, ես կըհանդչեմ:  
Ես ամբողջովին քեզնով եմ ապրում, դու իմ  
սրտի բովանդակութիւնն ես: Քո պատկերը դրօշ-  
մեկ է հոգումս, ես կեանք ունեմ, որովհետև այդ  
պատկերը կրում եմ իմ մէջ, եթէ մի վայրկեան  
հանեն այդ իմ սրտից, սա կը պատուի կարօտից:  
Իմ սիրալ իրեւ մի կարապ լողում է քո սիրոյ  
վճիդ ազգիւրի մէջ: Ելենա, սիրել ինձ, որպէսզի  
ես չերգեմ կարապի երզը: Ուզում եմ շատ բա-  
ներ գրել, բայց չեմ կարողանում, յուզումից դո-

դում եմ, պատկերները խառնում են գլխում:  
Դու ինձ համար աստւածային սրբութիւն ես,  
խոնարհած այդ սրբութեան առաջ համբուրում  
եմ ձեռքդ, միմիայն ձեռքդ: Առ այժմ այդ էլ բա-  
ւական է:

Նաթան

19...

Նամակը ծրարեց ու ծառայի ձեռքով պօստն  
ուղարկեց:

II

Գարունն եկաւ իր բոլոր հետեռդներով.  
Ճիւնը վերջացաւ, արտերը կանաչեցին: Կապոյտ  
մանուշակը բարձրացրեց իր համեստ գյուխը ու  
սկսեց ժպտալ ժիր մանուկներին:

Վիկտորը օրերն անցնում էր վերին աս-  
տիճանի յուզած: Նրա հոգին նոր դեզերտումների  
մէջ էր ընկել: Այս, Սուսաննան նրան սիրում էր  
անսահման, Վիկտորը նրան տեսնելիս լցւում էր  
կրակով: Սակայն սրա հոգում նոր տեսակի յոյ-  
զեր էին արթնանում: Երբեմն թւում էր, որ Սու-  
սանն այլ ևս չի կարողանում բաւականացնել նրա  
այրող սրտին: Երբ նա մենակ էր մնում ու ան-  
ձնատուր լինում իր սրտին, կլանւում կանաց  
գեղեցկութեան հաճոյքով, Սուսաննայի պատ-  
կերի առաջ քիչ-քիչ կանգնում էր Ելենայի  
դէմքը: Ելենան իր լուսկեցութեամբ, խորհրդա-  
ւոր գաղտնապահութեամբ, գոցէ և հպար-  
տութեամբ սկսել էր գրգռել Վիկտորին: Երբեմն  
սա լցւում էր անչափ ցանկութեամբ՝ բռնել Ելե-  
նային ամուր բազուկներով, նրա սրտից դուրս

հանել գրգուիչ խորհրդաւորութիւնը և նրա սև  
աշքերը համբուրել, անթիւ անգամ համբուրել:  
Քանի անցնում էին օրերը, այնքան Ելենան Վիկ-  
տորի հոգում մէծանում էր ու աղօտացնում  
Սուսաննայի պատկերը: Երբեմն էլ Վիկտորը աշ-  
խատում էր սառը լինել, մտքերը կենտրոնացնել  
Սուսաննայի վրայ: Ահա քանի ամիս է, որ նրա  
հետ մօտ յարաբերութեան մէջ են, քանի անգամ  
են սրտերնին բաց արել, յուզել, համբուրել, երդ-  
ել... Մտածում էր նա, բայց հէնց որ գնում  
էր Արովիանների մօտ, աչքը գցում էր Ելենայի  
գէմքին, նրա մէջ նորից ծնում էր հզօր կիրքը,  
որ նրա սիրտը քաշում էր դէպի Ելենան...

Խոկ Նաթանը, ճարցրեց նա մի անգամ ինքն  
իրեն: Կարծես, սրտում մի ծակոց զգաց: Իր բա-  
րեկամը, մանկութեան ընկերը սիրում է Ելենա-  
յին, այո, սիրում է, թէն չի խոստովանում: Զէ  
որ նա կըդքախտանայ: Բայց այս միտքն էլ դա-  
գարեց տանջող դառնալուց: Մի այցելութիւն, մի  
հանդիպում, կանացի աշքերի մի հայեացք բաւա-  
կան էր, որ նա ամեն ինչ զոհաբերէր իր զգաց-  
մունքներին: Զէ, ես Ելենային սիրում եմ, նրա  
սև աշքերը պիտի փայլեն հէնց մի աշքերին կը-  
պած, նրա ալ շրթունքները պիտի անվերջ համ-  
բուրեմ, և նա պիտի դոզդողայ իմ գրկում, պիտի  
փարսի վզովս ու հեկեկալով սէր խոստովանի:  
Այս եթէ այլ կերպ լինի, իսքը դիմանալ չի կա-  
րող, կը խելազարւի: Եւ նա յաճախ ժամերով  
ման էր գալիս իր սենեակում տարւած այս մըտ-  
քերով:

Վիկտորի աշքից չէր խուսափում, որ հայրը  
ինչ որ գաղտնի խօսակցութիւններ է ունենում

Հայկի հետ: Նա գլխի էր ընկնում, թէ բան ինչ է,  
գիտէր, որ հայրը ցանկանում է Հայկին ամուսնաց-  
նել, և որ Հայկն էլ այդ մտքից հեռու չէր: Հօր  
ակնարկներից հասկացել էր, որ նա Արովիանի  
աղջիկներին հաւան է, Հայկի հայեացքներն էլ  
յայտնի էին իրան: Արովիանի աղջիկները իրանց  
բաւական հարուստ օժիտով նրան գրաւել կարող  
էին: Մի առ ժամանկ նրան զբաղեցնում էր  
այն միտքը, թէ որին կընարեն նրանք: Ի վեր-  
ջոյ եկաւ այն եղրակացութեան, որ հայրը Սու-  
սաննային հաւանել չի կարող, Ելենան կըլինի  
նրա ուզածը: Սակայն Վիկտորը կուզէր, որ եր-  
կուսից ոչ մէկը Հայկին չը հասնի: Նրա սիրու  
բողոքում էր, մի ուժեղ խանդ բոնում էր նրան:  
Թւում էր, երբ նրանցից մէկն ու մէկին տեսնի  
եղրօր գրկում, ինքը կը տրաքւի ցասման զգա-  
ցումից:

Արդեօք Ելենան սիրում է Նաթանին: Այս  
հարցն էլ տևեց նա մի անգամ իրեն, ոչ մի փաստ,  
ոչ մի նշան այդ չեն ապացուցանում: Ուրեմն նա ոչ  
ոքի չի սիրում, աւելի լաւ: Սակայն հարկաւոր  
է վճռական քայլեր անել:

Մի անգամ պատահեց, որ Վիկտորը երեք  
օր փակւեց իր սենեակում: Անդադար քայլում  
էր յետ ու առաջ և մտածում: Նոյնիսկ հայրը  
անհանգստացաւ, խնդրեց որդուն, բաց անի դու-  
ռը Հայրը երկար նստեց մօտին, խնդրեց, աղա-  
չեց, բայց ոչինչ իմանալ չը կարողացաւ: Հօր  
հարցին նա պատասխանում էր, որ ինքը առողջ  
է, ոչինչ չըկայ, ընկերներից նամակ է ստացել,  
այդ մասին է մտածում:

Որ նա նամակներ էր ստանում, այն էլ խիստ

յանդիմանական նամակներ, այդ ձիշտ էր: Ծնկերները նրան մեղաղում էին սկզբունքների դաւաճանութեան մէջ: Բացի այդ Նաթանի գըրքոյներից մէկում հետաքրքրական ակնարկներ կային Պետերբուրգի ուսանողութեան մասին: Ընկերները փաստերի մատակարարութիւնը վերակրում էին Վիկտորին:

Բայց Վիկտորի յուղած դրութեան պատճառը այդ չէր: Երեք օր առաջ նա Արովեանների տանն էր: Օրիորդները մենակ էին, ծնողները բացակայում էին: Ելենան երկար ժամանակ չէր երևում, Վիկտորը իբրև թէ զրադւած էր Սուսաննայով: Ներքուստ անհամբերութեամբ սպասում էր Ելենային: Սուսաննան նկատում էր, որ Վիկտորը մի տեսակ սառն է դէպի ինքը, որ նամի գաղտնիք ունի:

—Անհանգիստ ես երեսում, ինչ է պատահել հարցը նա:

—Ոչինչ, ըիչ յոզնած եմ, գլուխս ցաւում է, —պատախանեց Վիկտորը:

Նախաճաշին Ելենան եկաւ սեղանատուն և անտարեր բարեեց նրան: Վիկտորի դէմքով մի կարմիր հոսանք անցաւ: Նա աշխատում էր անտարեր երեսի, որ Սուսաննան չը նկատի: Բայց նա երկար չը համբերեց և իբրև թէ յանկարծակի սեղանի տակից ոտքով կամացուկ խփեց Ելենայի ոտքին: Ելենան պատահմունք ընդունեց, բայց երբ հարւածը կրկնեց, նա հասկացաւ, որ Վիկտորը դիտմամբ է անում, շտապեց սուրճի բաժակը դադարկել ու դուրս գնալ:

Երբ Սուսաննան դիպւածով դուրս գնաց, Վիկտորը չը համբերեց: Ներքին թափը նրան

առարաւ Ելենայի սենեակը: Ելենան կանգնած էր պատուհանի առաջ և նայում էր պարտիզին: Բարակ արձրկ էր եկել: Արկեի ճառագայթները ամպերի արանքից թոյլ-թոյլ տաքացնում էին նորաբոյ կանաչների դալար գլխիկները ու ծառերի կիսարաց կոկոնները: Ելենան գարնան հետաւելի էր տարւել իր սիրով: Երբ Վիկտորը սերս մտաւ, նա շուր եկաւ ու անտարբեր դէմք ընդունեց: Վիկտորը նրան տեսելուն պէս յափշտակեց, նա նոյնիսկ մի քանի քայլ արաւ դէպի օրիորդը, սակայն, երբ վերջինս իւր քիչ վախեցած աչքերը բարձրացրեց, նա կանգ առաւ, կարծես, հմայւած: Մի քանի վայրկեան չը գիտէր, ինչ ասել: Ապա բարձրացրեց իր յաղթանակների սովոր աչքերը և կրակու հայեացքով նայեց օրիորդին: Ելենան սոսկաց այդ հայեացքից, քիչ մնաց, սարսափի ճիչ արձակէր, բայց կարողացաւ ոյժերը հաւաքել և անցնել հետեւել սենեակը:

—Մի փախչէք, ես ոչինչ վատ բան չեմ անի, ես ձեզ սիրում եմ,—բացագանչեց Վիկտորը: Բայց ուշ էր: Նրա հայեացքը մնաց փակւած դըռան վրայ: Նա մնաց շփոթւած, մի քանի քայլ յետ-յետ եկաւ եկաւ և մէջքը դէմ տւաւ պատին ու մոռացաւ ամեն ինչ: Սուսաննան այդպէս շփոթւած գտաւ նրան:

—Ի՞նչ պատահեց քեզ, —հարցը նրան և պատախան չստացաւ: Նա բռնեց Վիկտորի ձեռքից, շատ տաք էր: Մի քանի ըոպէից յետոյ նրանք նստած էին Սուսաննայի սինեակում: Օրիորդը իրան վատ էր զգում, մի սոսկալի կասուկած էր ծագել նրա մէջ:

—Վիկտոր, ասա, ինչն ես այդպէս, հիւանդացմբ:

—Ոչինչ, ինձ մենակ թող, մենակ, Եւ նրանք լուցին: Երկուսն էլ մտածում էին: Իսկ Ելենան, անցաւ Սուսաննայի մըտքով: Նա վեր կացաւ և մտաւ Ելենայի ննջարանը: Ելենան ընկած էր մահճակալի վրայ այլայլած դէմքով: Այլևս գաղտնիք չը կար, Սուսաննան հասկացաւ, կասկածները ճիշտ էին: Նա զգաց, որ շուրջը ամեն ինչ մըթնեց, խաւարը պատեց աչքերին, գլուխը պատւեց, նա մի սիրտ մաշող ձիչ արձակեց ու ընկաւ յատակի վրայ:

Վիկտորը լսեց այդ ճիշը, սթափւեց, վեր կացաւ տեղից: Նա հասկացաւ ճիշ պատճառը, մէկ կամեցաւ գնալ այն դռնով, որով Սուսաննան էր գնացել, գնալ, գտնել նրան, ընկնել նրա ոռքերը, ներումն խնդրել, բայց մտածածը իրականացնել չը կարողացաւ, Նա դուրս եկաւ փողոց, նստեց առաջին պատահած կառքը և հրաժայեց քշել իրանց գիւղը:

Երկինքն էլ ամպում էր, քիչ-քիչ քաղաքը կորաւ մառախուղի մէջ: Զիերը հազիւ էին քառում, քամին ու անձրել սկսեցին խանդարել նրանց:

Ահա թէ ինչու էր Վիկտորը փակւել: Երեք օր մտքերն ու յոյզերը նրան փորձութեան անթարկեցին: Երեք օրից յիսոյ նա իրան թեթևացած էր զգում: Սուսաննան այլն գոյութիւն չունէր նրա համար, Շատերն են նրան տանջել ու յուղել, շատերը համբուրել, պտել, ապա մոռացել: Սուսաննան մտաւ նրանց շարս

քը: Այժմ նրա համար հրապուրանքի առարկայ էր ելենան, որին տիրելու համար նա պատրաստում էր նոր կուի:

### III

Սուսաննան հիւանդ է, Սուսաննան այրուում է: Բժիշկը յուսադրում է ծնողներին, որոնք չը գիտէին նրա հիւանդութեան գաղտնիքը: Ելենան նստում է քրոջ կողքին ու մտածում, թէ արդեօք քոյրը իրան է մեղագրում տանջանքների համար: Այդ միտքը կտրատում է նրա սիրտը, սակայն նա քրոջը ոչինչ հարցնել չի կարողանում, որովհետեւ հիւանդը գիտակցութիւնը կորցրել էր, հարցերին չէր պատասխանում, միայն զառանցում էր:

Ծնողները շատ բան չին հասկանում նրա զառանցանքներից, որովհետեւ նա մտքերն ու անունները խառնում էր, նախադասութիւնները թողնում էր կիսատ: Զէ, չէ, քոյրս, հանգստացիր, ես նրան չեմ սիրում, դու գիտես, որ նա ինձ դուր չը եկաւ առաջին օրւանից, կրկնում էր Ելենան մտքում, և այդ լուռ խօսքերը նրան հանգըստացնում էին:

Ստեփան Սանամեանը մի բանի անգամ քրոջ հետ հիւանդին տեսութեան եկաւ: Նա տիրում էր, որովհետեւ հիւանդութիւնը խանդարում էր Հայկի նշանադրութիւնը: Նա արդէն վերջնականապէս որդուցը խոստում էր ստացել: Հայկը հաւանում էր Ելենային:

Հիւանդութիւն ճնաժամը անցաւ, և Սուսաննան սկսեց քիչ-քիչ առողջանար: Սակայն անյաջող սէրը վշտի մի կնիք էր դրել նրա դէմքին:

Երբ նա բաւական կազդուրւեց, մի անգամ Ելենան ասաց.

—Սուսաննա, դու ի՞նձ էլ ես մեղադրում:  
—Ո՞չ, պատասխանեց նա:

Այս կարճ պատասխանը Ելենայի սիրությանգության միտքը: Այն միտքը, որ քոյրը իրան իր տանջանքի պատճառ չի համարում, նրան վերին աստիճանի ուրախացրեց:

—Սուսաննա, դու նրան դարձեալ սիրում ես:

—Այո,—եղաւ պատասխանը:—Ես նրան միշտ կը սիրեմ, բայց նրան այդ այլս չեմ ասի. ես նրա եթէ տեսնեմ, նորից կը հիւանդանամ, բայց նրան սիրում եմ:

—Զէ՞ որ նա յանցաւոր է քո առաջ:

—Յանցաւորներին էլ կարելի է սիրել:  
Երկուսն էլ լոեցին:

—Ելենա:

—Ի՞նչ է, Սուսաննա.

—Խսկ եթէ նա քեզ է սիրում:

—Ես նրան չեմ սիրում:

—Այդ զիտեմ. խսկ եթէ նա քեզ սիրում է:

—Կասեմ, որ նա պարտաւոր է քեզ սիրել:  
Նորից լոեցին, մտածում էին:

—Ելենա:

—Ի՞նչ է:

—Դու հեմ ես սիրում:

—Ոչ ոքի:

—Կեղծում ես:

—Ելենան չը պատասխանեց: Դարձեալ լոեցին և երկար ժամանակ իրաը երեսի էին նայում:

—Ելենա: Դու ու մասի նվազ ու մեծ զանդ էին առաջ բարձրացնելու մասին համար մասնաւություն կատարելու մասին:

—Ի՞նչ է:

—Հայրիկը գիտէ:

—Ո՞չ:

—Մայրիկը:

—Ո՞չ:

—Այդ լու է:

Դարձեալ լոեցին, Վերջալոյսի շողերը խաղում էին պատուհանի ապակիների վրայ: Դուրսը խաղաղութիւն էր թագաւորում: պարտիզի ծառերը հանգիստ էին: Մեղմիկ զեփիւռն անգամ չէր պատռմ տերեների երեսին: Լուռ խաղաղութեան մէջ օրիորդները շարունակում էին մտածել՝ Սուսաննան իր անցեալ, իսկ Ելենան ապագայ սիրոյ մասին:

#### IV

Նաթանի նամակն ստանալու օրը Ելենան մենակ էր: Ծնողները գնացել էին իրանց հիւանդ բարեկամին այցելութեան: Սուսաննան հիւր էր գնացել ընկերուու մօտ: Այն ժամանակ նա դեռ չէր հիւանդացել:

Երբ ցըիշը նամակը բերեց, Ելենան կանգնած էր դռան առաջ: Դեռ նամակը չստացած նրա սիրությանց բարախել: Նա իսկոյն չը պատռեց ծրարը, այլ մի քիչ կանգնեց անորոշ դրութեան մէջ, յետոյ շտապով գնաց ննջարանը: Սանամեանների տանը եղած ժամերին նա ուշադրութեամբ դիտել է Նաթանի ձեռագիրը, ուստի հասցեից ճանաչեց, թէ ով է զրոյը: Կարծես նա վաղուց էր սպասում այդ նամակին. նա հասկանում էր, որ

իրանք դէմ առ դէմ խօսելու ոյժ չեն ունենայ,  
ուստի պիտի նամակով սկսել: Այս պատճառով  
էլ սպասում էր:

Նա նամակը բանալ չէր կարողանում. ձեռ-  
քերը դողում էին: Առաջին անգամ կարդալիս նա  
ոչինչ չը հասկացաւ: Ամբողջ նամակը նրա հա-  
մար մի ջերմութեան աղբիւր էր, դուրեկան ու  
հարթեցնող ջերմութեան: Նա խսկապէս հարթեց:  
Մի անուշ ու շամեցնող հոսանք սրտից անցնում  
էր դէպի մարմնի բոլոր մասերը, մանաւանդ դէ-  
պի այտերը, որոնք վառւում էին սրտի կրակից:  
Նա երկրորդ անգամ կարդաց նամակը, այս ան-  
գամ ծանր ու բառ առ բառ կարդաց: Ո՞հ, նա  
սիրում է ինձ, նրա սիրու բարախում է իմ  
սիրոյ մէջ. ես նրա սրտի ջահն եմ. նրա հոգու  
սպիտակ թևերը փարւում են ինձ, ո՞հ, երջանկու-  
թիւն: Նա երրորդ անգամ կարդաց, ապա նա-  
մակը համբուրեց, կրծքին սեղմեց, նորից համ-  
բուրեց:

Նա իմ հոգու բաղէն է, որ ճախրում է եթե-  
րում, նա սպիտակ կարապ է, որ լողում է սրտիս  
վճիտ ովկիանում: Նա հզօր է անսահման, նա ան-  
յաղթ է ընդ միշտ: Նա կը գայ, կը տանի ինձ,  
կազատի բոլոր շղթաներից: Ես նրանն եմ, նրանն  
եմ յաւետեան: Չեմ վախենում, տէր ունեմ, ըն-  
կեր ունեմ. բաւական է, որ կանչեմ, նա կը գայ,  
իմ բաղէն կը գայ, կը տանի իմ հոգին դէպի վեր,  
դէպի վեր, դէպի անսահման աղատութիւնը... կը  
փարւեմ նրան, կը ձուլւեմ նրա հոգում, նրա մօտ  
կը մոռանամ ամեն ինչ, և թախիծը և վիշտը...  
նա կը գայ, իմ բաղէն կը գայ...

Դաները փակւած չը մնացին: Բախտը յաջո-  
ղեցրեց, և նրանք մի անգամ խօսեցին իրար հետ  
իրանց սիրոյ մասին: Դէպը պատահեց Սուսան-  
նայի հիւանդութեան ժամանակ, երբ ճդնաժամն  
անցել էր: Սանամեանները բոլորն եկել էին այս  
անգամ: Թէ ինչպէս պատահեց, որ Նաթանն ու  
Ելենան մենակ հանդիպեցին պարտիզում, այդ  
իրանք էլ բացատրել չեն կարող: Լսեցին սրտերի  
ձայնին, բնազգաբար, առանց մտածելու, զգաց-  
մունքի հոսանքով պատահեցին իրար: Գարնան  
արեւ ծակում էր զգուած, կանաչները սիրտ ա-  
ռած գուրս էին գալիս հողի տակից: Նրանք  
սկզբում չը գիտէին, ինչպէս սկսեն և ինչ ասեն.  
լուս էին, իրար էին նայում անվատահ հայեաց-  
քով...

—Ի՞նչ գեղեցիկ մանուշակ է, —յանկարծ ընդ-  
հատեց լուսութիւնը Ելենան:

—Այս, գեղեցիկ է, բայց ոչ քո աչքերի  
պէս, —ասաց Նաթանը, բայց իր ձայնից քաշւեց,  
քիչ կարմրեց ու սկսեց իր նոր ծլած բեխերի հետ  
խաղալ:

Ելենան քնքոյց ժպիտով նրան նայեց: Նրանք  
լուցին: Գնում էին դէպի պարտիզի խորքը: Մի  
անգամ Ելենան յետ նայեց: Նրան թւաց, որ ի-  
րանց հետում են. նա սաստիկ վախեցաւ, երբ  
յիշեց հօրը: Բայց չը կարողացաւ մտքեղը հաւա-  
քել, կամ յետ դառնալ, այլ շարունակեց դէպի  
առաջ գնալ: Երկուսն էլ ներքուստ յուզւած էին,  
զգում էին, որ իրանք կապւում են իրար հետ:  
Հասան մի առւի թմրի:

—Նստենք այստեղ, ասաց Ելենան:

—Նստենք, —կրկնեց Նաթանը: Նրանք նըստեցին:

—Ի՞նչ կարմիր արև է, ասաց Ելենան:

—Այն, շատ լաւ արև է:

Նորից լռեցին, սրտերն էին խօսում:

—Ելենա, —թոյլ ու ամաչկոտ ձայնով կանչեց Նաթանը: Ելենան նրան նայեց: —Ելենա, սիրում ես ինձ:

—Այո, —ասաց Ելենան առանց մտածելու: Նրան այտերը շիկնեցին, իսկ սիրաը սկսեց աւելի արագ բարախել:

—Ինչու նամակիս չը պատասխանեցիր:

—Չը գիտեմ:

Նրանք դարձեալ լռեցին. ապա վեր կացան ու սկսեցին նորից առաջ գնալ հեռու, ծառերի մէջ: Ելենան բռնեց Նաթանի թեր, Մի էլէքտրական հոսանք անցաւ Նաթանի մարմնով: Նա իր թեռվ սեղմում էր Ելենայի թեր և կողքին կպցնում Ելենան զգում էր, որ ոյժերը հատնում են, ոտները՝ թուլանում: Աչքերի առաջ խաւարն էր պատում, իսկ ականջներում հնչում էր ինչ որ քաղցր երաժշտութիւն... Առաջ էին գնում, Ելենան հազիւ էր քայլում...

—Ուրեմն դու սիրում ես ինձ, —կամացուկ շշնջաց Նաթանը, ապա ձեռքը բարձրացրեց ու գցեց Ելենայի ուսովը. միւս ձեռքով բռնեց նրա իրանը: Ելենան վայրկենապէս երկու ձեռքը փաթաթեց նրա վզովը: Նրանց շրթունքները մօտեցան իրար: Ամեն ինչ չքացաւ նրանց աչքից: Մի անմահական հաճոյք պատեց նրացն: Նրանց սրտերը իրար հանդիպեցին, նրանց հոգում ծնեց սիրոյ

կարմիր արևը՝ ջերմ քան հուրը, քաղցր քան անմահական խնձորը:

Նըսնց սրտերը բարախում էին, մօտակայ առւակը խոխոջում էր, իսկ ծառերի վրայ երգում էին սարեակները:

V

Անցան դարձեալ մի շարք օրեր: Նաթանն իր սենեակում աշխատում էր, երրորդ գիրքը արգէն վերջանում էր: Ներս մտաւ Վիկտորը:

—Բարե, բարեկամս, դու երկար ժամանակ է, ինձ մօտ չես գալիս, —ասաց Նաթանը:

—Բարե, բարե. անձանգիստ եմ, քիչ հիշանդ եմ:

—Ի՞նչ նորութիւն:

—Առանձին ոչինչ: Մի նորութիւն միայն. այսօր հայրիկս մեզ բոլորիս իր սենեակն է կանչել. ասում է, թէ կարեռը բան ունի յայտնելու:

—Հետաքրքիր է: Երբեմն ծերունիներն էլ խելօք բաներ են ասում:

—Գուցէ հետաքրքիր է, բայց ինձ թւում է, որ մեզ, զոնէ ինձ դուք չի գալու. ես մի քիչ հասկանում եմ, թւում է, որ նա...

—Չը ի՞նչ:

—Բայց մարդարէանալս աւելորդ է, աւելի լաւ է, գնանք, ինքը կասի և դու բռն աղբիւրից կիմանաս:

—Նա մեզ անշուշտ հիւր չի կանչում իր սենեակը, այլ խորհրդակցութեան: Եթէ ձեռնտու բան չըլինի, ինչպէս վկայում են աչքերդ, մենք

խորհուրդ կըտանք, չանել: Եթէ ընտանեկան ժողով է, մենք էլ վճռական ձայն կունենաք: Բայց զարմանալի է, թէ ինչու յատկապէս իր սենեակն է կանչում, սովորաբար այդպիսի դէպքում նաշի ժամանակ է խօսք բաց անում:

—Գնանք, կիմանանք:

Նրանք դուրս եկան սենեակից:

Ծերունի Սանամեանը շատ ուրախ էր: Ուրախ էր և տիրուհին: Եկաւ և Հայկը ժպտագէմ նայւածքով:

—Դէ, որդիներս,—սկսեց Ստեփան Սանամեանը,—բաւական է, որքան աշխատեցիք, որքան ձանձրացաք: Մեր օրեւը այնպէս չեն անցնում, որպէս ես եմ կամենում: Ես ուզում եմ, որ նոր կեանք լինի իմ տանը: Դէ, ի հարկէ, մեծ-մեծ քաղաք-ներում ապրած մարդիկ էք, լսեցիք ծերունուս, մնացիք այստեղ, որ մեր հին տանը մի տարի էլ կեանք լինի, ուրախ կեանք: Ես ուզում եմ կրկին ու կրկին բորբոքել մեր օջախը: Դուք չը գիտէք ինչ է նշանակում հայրենական օջախ, քուք դեռ երիտասարդ էք, կը մեծանաք, կը ծերանաք, կը հասկանաք...

—Այո, այո, կը ծերանաք, կը հասկանաք,—մէջ ընկաւ տիրուհին:

—Սպասիր,—շարունակեց ծերունին, —ես ծերացել եմ, մի ոսս գերեղմանումն է, բայց շատ եմ ցանկանում, որ իմ տանը մի անգամ էլ հնչի հարսանեաց երգն ու ցնծութիւնը: Ես կը մեռնեմ, քոյրս էլ կը մեռնի, մենք այս տան սիւներն ենք. վախենում եմ, մեր մահից յետոյ այս տունը քան-դւի...

—Այո, մենք կը մեռնենք, ծերացել ենք,—

շշնջաց տիրուհին և արտասուակալած աչքերով որդուն նայեց: Ծերունին շարունակեց.

—Մեր մահից յետոյ դուք այստեղ չէք մնայ, այս տարի էլ հազիւ սպահեցինք ձեզ: Այս մի փորձ էր: Ես միշտ մտքումս ասում եմ, որ դուք այստեղի հետ չէք կապւած: Այդպէս են նոր մարդիկ, նրանք գիւղը չեն սիրում, քաղաքի կեանքն ու վայելքը չեն կարող փոխել նրանք գիւղական խաղաղ յարկի հետ: Ուսումը քանդում է գիւղը: Առանց ուսումի էլ չի լինի: Աստւած է այդպէս կամինում:

—Ասելիքդ ասա, հայրիկ, մի երկարացնի,—ընդհատեց Վիկտորը:

—Համբերիր, որդի: Այ, տեսնում ես, անհամբեր ես: Մենք հին մարդիկս այդպէս չենք, ես իմ հօր առաջ ծպտուն չէի հանում: Ժամանակն է փոխել, չեմ մեղադրում: Հա, զաւակներս, ես ուզում եմ իմ հին տանը մի անգամ էլ ուրախութիւն լինի: Չեզ պսակեն այժմ իմ ամենամեծ իղձն է: Պաւակելը հերթով է, նախ Հայկին պիտի ամուսնացնենք, յետոյ միւսներիդ...

—Հայկն ինքը կարող է իրան պսակել, ժողովդ բոլորովին աւելորդ է, —նկատեց Վիկտորը:

—Զէ, չէ, որդի, ես սիրում եմ հին սովորութիւնները, ես ուզում եմ, որ ամբողջ ընտանիքով խորհուրդ անենք: Աստւած սիրում է համաձայնութիւնն ու միախօսք լինելը, ու միութիւն, այստեղ և Աստւած: Ի հարկէ առաջին խօսքը Հայկինն է, բայց նա ինձ արդէն ասել է: Նա հօրը սիրում է, նա չը հակառակեց ձեզ հետ խորհրդակցելու մտքին, իմացաւ, որ դրանով ինձ

ուրախացնում է, նա միշտ ուզում է, որ ես չը  
տիրեմ:

—Կարծես մենք ուզում ենք, որ դու տիրես,  
—Նկատեց Վիկտորը:

—Զէ, դուք էլ չէք ուզում, բայց նրա ու  
ձեր մէջ շատ տարբերութիւն կայ: Հա, շարունա-  
կեմ: Հայկը հաւանել է Բագարադի աղջկան: Ես  
նրա հետ խօսել եմ, նա համաձայն է, նոյ-  
նիսկ ուրախ է: Դէ, ով իմ տղաներին աղջիկ չի  
տայ:

—Ի՞նչ լաւ է, որ համաձայն է, ես միշտ  
կասկածում էի, թարս մարդէ, նա, —ուրախացաւ  
տիրուժին:

—Ո՞վ է համաձայն, —հարցը Վիկտորը:

—Աղջկայ հայրը, Բագարադ Աբովեանը, —  
պատասխանեց ծերունին:

—Խակ աղջիկը, նրա ձայնը չի յարգւում:

—Յարգւում է, ինչպէս չէ: Հայրն ասում  
էր, իմ աղջիկը իմ խօսքից գուրս եկող չի, բայց  
ես ուզում եմ, որ Հայկը հէնց այսօր գնա, և  
խնդրի Ելենայի ձեռքը:

—Ում ձեռքը, —կայծակնահար եղածի պէս  
վեր թռաւ Նաթանը: Նա մինչև այդ ուշադրու-  
թեամբ չէր լսում ծերունուն: Բոլորը զարմացած  
նրա երեխն նայեցին: Տիրուհին վայրկենապէս  
գունատեց և վախեցաւ: Նա մօտեցաւ որդուն և  
թուլացած ձայնով հարցը եց:

—Նաթան, ի՞նչ պատահեց:

—Ոչինչ, մայրիկ, ոչինչ, ես լաւ չը հաս-  
կացայ մօրեղմօր ասածը: Դուք շարունակէք, իմ  
գլուխը քիչ ցաւում է, ես զուրս կը գնամ:  
Նա դուրս եկաւ: Ստեփան Սանամեանը

շփոթւեց: Վիկտորը բարկութիւնից սկսեց դողալ:  
Հայկը զարմացած նայում էր միւսների երե-  
սին:

—Ահա ձեզ մի կօմեղիա, —ընդհատեց լուռ-  
թիւնը Վիկտորը:

—Ի՞նչ, —հարցը Հայկը:

—Այո, մի յիմար կուեղիա, որի անունն է  
հայրասիրութիւն: Թողնենք այդ, եղբայրս, բայց  
իմացիր, որքան զիջես հայրերին, այնքան աւելի  
ծիծաղելի գրութեան մէջ կընկնես, ինչպէս՝ այ-  
սօր:

—Հարկաւոր չէ վիրաւորել, մանաւանդ որ  
ես քո մեծն եմ:

—Ես մեծութեանը մազաշափ, անգամ չեմ  
զիջանի: Բայց ասա, գու սիրում ես Ելենային:

—Ես ուզում եմ նրա առնել:

—Միընձն ես, հարցնում եմ:

—Այդ երկրորդական հարց է:

—Ուրեմն նա քեզ չի առնի:

—Կը տեսնենք:

—Այդ չի կարող լինել:

—Բո խօսքով չեմ ամուսնանալու:

—Հա, հա... Եթէ այդպէս է, այս կօ-  
մեղիան ինչ էր, այս խորհրդաժողովը՝ նախագա-  
հութեամբ այս խեղճ ծերունու: Ամուսնանում է  
պարունը, բազմաթիւ ընկերութիւնների նախա-  
գահը, երգւեալ հաւատարմատար Սանամեանը, և  
խնդրում է ութսունամեայ հօրը ընտանեկան ժո-  
ղով գումարել, որպէսպի պապերի ուրւականները  
չը խոռվին:

—Դու ինձ ծաղրում ես:

—Այո, մանաւանդ, որ սէրը երկրորդական

հարց է: Իմացիր, որ առանց սիրոյ ամուսնութիւն չը կայ: Եկեղեցի գնալը, կամ պայմանադրութիւնը ստեղծւած են քեզ պէս մարդկանց ձեռքով՝ ներքին անհամաձայնութիւնը ծածկելու համար: Ամենաանհրաժեշտը դու չունես, Ելենան քեզ չի սիրում: — Ես Ելենային կառնեմ...

— Բաւական է, զաւակներս — ընդհատեց հայրը, — բաւական է, ես այլևս ոյժ չունեմ: Ձեր արարքը բոլորովին անսպասելի էր, ձեր երկախուակութիւնը աւելի ես թուլացնում ինձ: Ես այժմ դժբախտ եմ, այժմ մեր տունը իրօք բանդում է, ես ոյժ չունեմ, որ ուսս պատին դէմ տամ, ձեռքերով տանիքն ամրացնեմ, այդ դժուք պիտի անէք, դուք, իսկ դուք կուռմ էք...

Նրա ձայնը դողաց, խեղդւեց կոկորդում, նաբռնեց Հայկի ձեռքն ու ակսեց հեկեկար:

Մի քանի ժամից յետոյ Հայկի կառքը սլանում էր դէպի Վ. քաղաքը: Փոշին կառքի յետեկից բարձրանում էր և քիչ-քիչ անգոյն օդի մէջ ձուլւում, անհետանում:

Նաթանը վշտահար եղաւ: Նրան թւաց, թէ սիրաը անհուն ցաւից տրաքւեց: Չը հասկացաւ, թէ ինչպէս իր սենեակն հասաւ: Նա ընկաւ մահանակալի վրայ երեսն ի վեր, աչքերն ամուր խփեց և գլուխը փաթաթեց ձեռքերով: Ամբողջ աշխար-

հը կորաւ նրա համար, սրտում ծնւեց մի սարսուցնող ցաւ, և նա սկսեց հեծեծալ վշտից: Ժամանակն անցնում էր, բայց նրա միտքը չէր կարողանում գործել, նա չէր սթափւում շշմեցնող հարւածից: Սենեակում ոչ մի ձայն չէր լսւում, ոչինչ չէր շարժւում, բայց նրա ականջներում հնչում էր մի տժժոց, նման այն ձայնին, որ մարդ գուռմ է գլխին ահարկու հարւած ստանալիս: Նրա մարմինը այրւում էր, տաքութիւնից քրտնում:

Մտաւ մայրը: Մրա դէմքը արտայայտում էր երկիրդ և շփոթութիւն:

— Նաթան, Նաթան, վեր կաց, ինչ պատահեց:

Նաթանը ոչ մի պատասխան չը տւեց: Մօր սիրտն աւելի ևս տիրեց: Նա հազիւ էր կարողանում կանգնել ոտքերի վրայ, որոնք առանց այն էլ թոյլ էին:

— Նաթան, արկիդ մեռնեմ, վեր կաց, — հեկեկաց մայրը, ապա մօտեցաւ ու ձեռքը դրեց նրա ճակատին: Ճակատը տաք էր: Մայրը աւելի ևս վշտացաւ:

— Նաթան, — ճչաց նա լացակամած ու վախեցած ձայնով:

Նաթանը գլուխը բարձրացրեց, աչքերը բաց արաւ, նկատեց մօրը:

— Մայրիկ, — ասաց նա թոյլ ու խղճալի ձայնով:

— Ի՞նչ է, զաւակս, ի՞նչ է եղել վեր կաց, ասս ինձ ցաւդ...

— Ոչինչ, մայրիկ, ես քիչ հիւանդ եմ...  
— Ի՞նչդ է ցաւում:

—Հոգիս, սիրաս է զաւում:

—Մայրիկ, սիրելի՞ մայրիկ, թող Հայկը եւնային չուզի, ևս նրան սիրում եմ:—Մայրը իսկոյն չը կարողացաւ պատասխանել, մի քանի ըստէ լոռութիւնն տիրեց, որից յետոյ մայրն ասաց:

— Շուտ ասէիր, զաւակս: Եթէ Ստեփանն  
մանար ալո, չէր խօսի Աբրովեանի հետ:

—Ես չը գիտէի, որ այդպէս բան կը լինի:  
Հայկի ուշը Թիֆլիսումն էր, չէինկարծում, որ նա  
այդպիսի միտք ունի: Ա՛խ, ես չեմ կարող առանց  
նրան ապրել, ես նրան սիրում եմ, և եթէ նրան  
խլեն ինձանից, ես ինձ կպահեմ, առանց նրան  
օր ու արև չեմ ուղում:

— Դու տարտել իրէ քո զըբերով, լուռ  
էիր, քիչ էիր խօսում, սրտինդ մօրդ չէիր  
յայտնում, ևս թնջղէս իմանայի... Նստիր, հան-  
գտացիր, ևս Ստեփանին կասիմ։ Նա ինձանից  
խելօթ է, նա մի ճար կանի։

Մայրը գուրս եկաւ: Նաթանն ընկաւ իր  
մտքերի հետ: Նրա աշխի առաջ պատկերացաւ ե-  
լենան իր սկ աշխերով: Նաթանն սկսեց յուզել  
ու մրմթակ, ես նրան սիրում եմ, սիրում եմ...

—Զէ, քոյրս, չէ, իմ տունը քանդում է, —  
ասում էր Ստեփան Սանամեանը պարկած մահ-  
ճակալի վրայ, յուզւած ու թուլցած, —կորաւ իմ  
ընտանիքի միութիւնը, Հայկն ու Վիկտորը կուե-  
ցին, իրար անպատճեցին... Ասում ես, Նաթանը  
հիւանդ է, նա էլ է սիրում Ելենային, այդ պատ-  
ճառով է հիւանդ, այս ես ինչ անեմ, ոտքերս

թուլացել են, էլ ոյժ չունեմ .. Հայկը գնաց. Նա  
եկաւ այստեղ, ասաց. Հայրիկ, ես կէս ճանապար-  
հից չեմ դառնայ, ես պիտի գնամք քաղաք, ես  
պիտի առաջարկութիւն անեմ Ելենային... Նա  
այսպէս խելօք էր խօսում, նա բարկացած էր,  
յուզւած: Ես Հայկին շատ եմ սիրում, ես սրան  
հակառակել չը կարողացայ... Ա՛խ, սիրոս կտրա-  
տւում է, Ես այս տան սիւնն եմ, հին սիւնը ու-  
ժամապառ է եղել, շուտով կընկնի, և տունը իս-  
պառ կը քանդի:

—Այս, Ասուուած իմ, Աստեած իմ, ես ի՞նչ  
անեմ, Ստեփան, իսկ ես ի՞նչ անեմ, Նախանին  
ի՞նչ ասեմ, նա այսպէս հիւանդ է, նա թառամում  
է, չէ՞ որ նա է իմ յոյսերի ծաղկելը, Ստեփան...

— զը գիտեմ, քոյլս, ոյժ չունեմ կաւելուր  
Երեքը մէկին են ուզում, ես ի՞նչ կարող եմ անել:  
Իմ ծերացած խելքը այդ հանգոյցը լուծել չե կա-  
րող: Երեքը մէկին են ուզում, իսկ հաւատը ուր  
մնաց. ախ, Աստված ներէ նրանց... Նաթանը խե-  
լօք տղայ է, ես կուզէի նրա մօտ գնալ, բայց  
ոտքերս թուլացել են, նա կը գայ, գնա, կան-  
չիր նրան այստեղ...

Տիրուհին մտաւ Նաթանի սենեակը, խնդրեց  
նրան, որ գնայ Սանամեանի մօտ: Նաթանը կա-  
տարեց մօր ցանկութիւնը, մտամոլոր քալիերով  
պնազ մօրեղբօր մօտ:

—Արի, որդին, արին, —ասաց Սանամեանը  
Նրան տեսնելուն պէս: —Դժու էլ ես սիրահարեւել:  
Դու խելօք ես, արտասահմանում ես կրթւել, ես  
քեզ միշտ լաւ մարդ եմ համարել, որդիներիցու  
չեմ զանազանել, վերևն Աստւած կայ, ճիշտ եմ  
ասում, հաւատամ...

—Հաւատում եմ, մօրեղբայր:

—Ապրիս, ես քեզ սիրում եմ: Դէ ասա, մի աղջիկը երեք տղայի կը տան. եկեղեցին, կրօնը միթէ այդ թնջլ կը տան, այդ հնարանոր բան է: Մենք ի՞նչ իմանայինք, որ դու էլ, Վիկտորն էլ այդ աղջկայ վրայ աչքի ունէք: Դիրծ է, սկսեցինք, ձեր մեծերն ենք, մեզ պիտի պատէք, մեր սկսած գործը կիսատ չը թողնէք: Որդիս, այդ մեծ ամօթ է մեզ, որ գործի կիսիցը յետ դառնանք: Ի՞նչ կասեն ուրիշները, որ իմանան, թէ դուք երեք եղբայրներով դու էլ իմ որդին ես, այս, երեք եղբայրներով իրար հետ կռւում էք մի աղջկայ համար: Երեքդ էլ ուսում առած մարդկիկ էք: Զէ, չէ, ամօթ է մեզ: Իմ խելքով երեքցդ Հայկը միայն իրաւունք ունի, նա մեծն է, նրանն է հերթը. նա է առաջին անդամ ուզել ուրեմն նա պիտի առնի, դու էլ Վիկտորն էլ պիտի յետ կենաք այդ ճանապարհից...

Երբ ծերունին խօսում էր, տիրուհին կանգնած նրա կողքին մէկ եղոր երեսին էր նայում, մէկ որդու: Մտքում համոզում էր, որ եղբայրը ճիշտ է ասում, իսկ երբ որդուն էր նայում, նրա վշտու գէմքին, մոայլ ճակատին, տիրութիւնից ըիչ բարձ ընկած շրթունքին և մանաւանդ այրուղ ու աչքերին, սիրու կտոր-կտոր էր լինում: Իմ Նաթանը ազատի այդ դարդից, մնացածը ինչ ուզում է, լինի, անցաւ նրա մտքով:

Նաթանը լսում էր Ստեփան Սանամեանին, բայց ոչինչ չէր պատասխանում: Զգում էր, որ ինչ էլ ասի, ծերունուն ոչ մսիթարեկ և ոչ էլ համոզել կարող է: Նա քիչ-քիչ յետ գնաց, մէջքը դէմ տւեց պատին ու մի ձեռքով բռնից դռնից:

Երբ ծերունին յայտնեց իր եղբակացութիւնը, թէ Ելենան միայն Հայկին կարող է պատկանել, նա միւս ձեռքն էլ մօտեցրեց դռանը, գլուխը յենեց ձեռքերին և բարձր ձայնով հեկեկաց, «Իսկ ես սիրում եմ նրան, նա էլ ինձ է սիրում: Սիրոյ իրաւունքն իմ կողմն է:»

Այս խօսքերի հետ նրա հոգում ծնեց յոյս մի շող. նա էլ ինձ է սիրում:

VI

Երբ Հայկը Վ. քաղաքը հասաւ, ուղղակի գնաց Արովեանի տունը: Նա առանց հարցը ձըգձգելու, առանց բաշւելու ու երիտասարդական ամօթիածութեան, նախաճաշից անմիջապէս յետոյ, երբ ամբողջ ընտանիքը դեռ բոլորած էր սեղանի շուրջը, յայտնեց, որ ինքն եկել է յատկապէս Ելենայի ձեռքը խնդրելու: Դեռ մի քանի օր առաջ հայրը խրատել էր, որ հարկաւոր չէ օրիորդին ծածուկ առաջարկութիւն անհել, որովհետեւ, նախ օրիորդը չափազանց ամօթիած լինելով մի կանոնաւոր պատասխան չի տայ, երկրորդ որովհետեւ Արովեանն այդպիսի գաղտնի քչչիցներ: Չի սիրում, կարող է բարկանալ և մերժել: Նրա առաջարկութիւնից յետոյ մի քանի լուսէ լուսութիւն տիրեց: Ամենից առաջ խօսեց մայրը:

—Ես համաձայն եմ, եթէ Ելենան դէմ չէ:

—Ես իմ համաձայնութիւնը երկու օր առաջ եմ տւել: Իսկ Ելենան ինչո՞ւ պիտի գէմ լինի, — ասաց հայրը:

— Իու ինչ կասես, Սուսաննա, — հարցրեց  
մայրը:

— Ես ոչինչ ասել չեմ կարող, Ելենան եթէ  
համաձայն է, ինձ մառւմ է շնորհաւորել:

Բոլորն էլ աչքերնին ուղղեցին Ելենայի ե-  
րեսին, նրա խօսքին էին սպասում: Ելենան լուռ  
էր, նա շփոթել էր, ոչինչ ասել չէր կարողանում,  
կոկորդը խեղւում էր: Նաև ամաչում էր և վա-  
խենում: Լոռութիւնը աւելի էր շփոթում նրա: Նա  
վեր կացաւ յուզւած, շառագունած, իրան կոր-  
ցրած:

— Ես... ես չեմ... ես համաձայն չեմ, չեմ  
ուզում ամուսնանալ — ասաց նա և գնաց իր սե-  
նեակը:

Նրա ձայնի մէջ հնչում էր և վիշտ, և եր-  
կիւդ...

Մի վայրկեան միւսները իրար երեսի նայե-  
ցին: Բազարադ Արովիւսնը մի ներքին զայրոյթ  
զգաց: Հայկը ամենակին չէր սպասում այդպիսի  
պատասխանի, տխրեց ու յուսահատ դէմքով միւս-  
ներին էր նայում: Սուսաննան միայն չը զարմա-  
ցաւ, նա հաւատացած էր, որ բոյրը Նաթանին էր  
սիրում, բայց չէր կարծում, որ Ելենան այդքան  
ոյժ կունենայ, կը միրժի:

— Վեր կաց, — ասաց Բազարադը կնոջը, — վեր  
կաց, տես, ինչ եղաւ, իսկ դուք, պարոն Հայկ,  
անհանգիստ մի լինէք, իմ աղջիկը հօր խօսքից  
դուրս եկող չի, ես լաւ եմ ճանաչում Ելենային,  
նա ամաչեց, նա այնքան երկիւղան է, որ հօր  
առաջ չը համարձակւեց համաձայնել: Սուսաննա,  
դու էլ գնա նրա մօտ, իսկոյն:

Տիկին Աննան ու Սուսաննան գնացին Ելե-

նայի մօտ: Սա իր սենեակում էր, մի քանի ըռպէէ  
չէր իմանում, ինչ անի, գլուխը պտտում էր:  
Ընկաւ մահճակալի վրայ, սկսեց մտածել: Յիշեց  
Նաթանին. չէ, ուրիշին առնել չի կարող, սէրը  
մէկ է: ինքը մէկին է սիրում, Նաթանին է սի-  
րում: Սէրը նրան ոյժ էր տալիս: լաւ արեց, որ  
մերժեց: Իսկ հայրը, կը բարկանայ, ոյժ կը բա-  
նեցնի... Սակայն նա կը գայ, նա կազատի իրեն  
նաև հայրական բռնակալութիւնից...

— Ելենա, Ելենա, նստիր տեսնեմ, աղջիկս,  
— ասում էր մայրը կանգնած նրա կողքին:

Ելենան նստեց, ապա վեր կացաւ, մօ-  
տեցաւ պատուհանին, նորից եկաւ, նստեց ու  
գլուխը յենեց մահճակալի թիկնոցին:

— Ելենա, ուշքի եկ, քեզ հաւաքիր, չէ՞ որ  
սպասում են սեղանատանը, գնա, պատասխանիր  
աղջիկս, երեխայութիւն մի անի:

— Ես ամուսնանալ չեմ ուզում:

— Ի՞նչ ես ասում, դու արդէն հասած աղ-  
ջիկ ես, այլևս սպասելու կարիք չունես, երեխայ  
մի լինիր, մի ամաչի, բոլոր աղջիկներն են ա-  
մուսնանում, քաշւելու ինչ կարիք կայ: Դէ, վեր,  
գնա, ասա, որ դու պ: Հայկի առաջարկութիւնն  
ընդունում ես:

— Ինձ մի տանջի, մայրիկ, ես չեմ կամե-  
նում մարդու գնալ:

— Գուցէ դու Հայկին չես հաւանում, — մէջ  
ընկաւ Սուսաննան:

— Ի՞նչ բաներ ես ասում, Սուսաննա: Հայկը

փաստաբան է, անուն ունի, ամբողջ Թիֆլիսն է  
նրան ճանաչում: Նա հարուստ է, առողջ է, նա  
նշանաւոր մարդ է, ովք նրան աղջիկ չի տայ, ովք  
աղջիկը նրան չի գնայ, —ասաց մայրը:

—Ամուսնութիւնը սիրոյ հարց է, եթէ չի  
սիրում, ինչպէս համաձայնի:

—Չայնդ կտրիր, Սուսաննան, գու ամենից  
փոքրն ես, այդպիսի խօսքեր ես ասում: Ամենաշ  
լաւ սէրը պսակւելուց յիտոյ է վալին: Հարուստ,  
առողջ, ուսումով տղային ովք չի սիրիւ:

—Մայրիկ, ես չեմ ուզում, —սորից խօսեց  
Ելենան:

—Հօ տանը չե՞ս միալու:

—Ես նրան չեմ սիրում, նրան գնալ չեմ կա-  
րող, —սիրտ առաւ Ելենան,

—Այդպիսի խօսքեր չը լսեմ: Հայրիկդ սաս-  
տիկ կը բարկանայ: այդ խօսքերը նրա ականջը  
չընկնեն, թէ չէ ինձ էլ քեզ հետ կը վասի: Նա  
միշտ ասում է: աղջիկների յանցանքների պատ-  
ճառը մայրերն են:

—Ինձ մենակ թողէք:

—Հասկանում եմ, ուզում ես մտածել, մտա-  
ծիր, խելքդ զլուխդ հաւաքիր, այսպիսի բախտ  
ամեն անգամ չի լինում: Արի, Սուսաննա, մենք  
գնանք, թող մտածի, հանգստանայ: Լաւ մտածիր,  
հայրիկդ խօսքից դարձող մարդ չէ:

Տիկին Աննան եկաւ սեղանատուն, յայտնեց,  
որ Ելենան յուղած է, որ առաջարկութիւնը նրա  
համար անակնակալ էր, որ կամենում է քիչ մտա-  
ծել, որ անշուշտ համաձայնելու է, քիչ քաշում  
է, և որ աղջկայ սովորութիւնն այդպէս է: Բա-  
գարադ Աբովեանը դեռ իրան զսպում էր:

Ելենան հանգստանալ չէր կարողանում: Մօր  
խօսքերից նա միայն այն հասկացաւ, որ հայրը  
վճռել է: Որ հայրը իր խօսքին հաստատ մարդ  
է, Ելենան լաւ գիտէր, բայց որ ինքը Հայկին  
սիրել չէր կարող, այդ էլ պարզ էր երեսում նրան:  
Նրա երեակայութեան առաջ հազար ու մի պատ-  
կերներ ներկայացան: Մէկ նրան թւում էր, որ  
հարկաւոր է դուրս գալ, յայտնել ամենքին, որ  
ինքը ուրիշին է սիրում, ուստի խօսք տալ չի  
կարող, բայց յանկարծ նրա աչքի առաջ ցցւում էր  
հօր սպառնական դէմքը, որ միշտ սովոր էր հրա-  
մայել, հնագանդութիւն տեսնել և ոչ զիմալլու-  
թիւն: Մէկ էլ նա կամենում էր դուրս գալ պար-  
տէզ, ապա անցնել փողոց և գնալ, արհամարել  
մարդկանց հարցական ու ծաղրող ակնարկներն և  
գնալ, գտնել նրան: Նա կարող է աղատել այս  
անելանելի դրութիւնից: Նա կը գրկի, կը համ-  
բուրէ և չի թողնի, որ բռնութեամբ ճնշեն իրան:  
Նաթանի պատկերն աւելի ու աւելի գրաւում էր  
նրա երեակայութիւնը: Նա բարձի տակից հանեց  
Նաթանի նամակը ու մկնեց կարդալ: Մի քանի  
անգամ կարդաց: Այդ ընթերցումը նրան սփոփում  
էր, մի վայրկեան մոռացնել էր տալիս ահաւոր  
հարցը, որ գրւած էր նրա առաջ: համաձայն ես,  
թէ չէ: Զէ, համաձայն չէ, նա մէկին է սիրում,  
սէրը մէկ է: Բայց միթէ Նաթանը տեղեկութիւն  
չիւնի այդ մասին: Զէ որ նա միենոյն տանն է  
ապրում, ինչ որ Հայկը, նրանք մի ընտանիքի  
անդամներ են: Չի կարող, նա այդ չիմանալ... Ապա  
ինչու չի գալիս, ինչու չի հասնում: Միթէ նա  
տանը չէր, նա միշտ տանն է լինում: Մոռացաւ,  
ախ Աստւած, մոռացաւ... այդքան շուտ... չէ, չէ,

այդ չի կարող լինել... ախ տէր իմ Աստւած, իսկ  
եթէ ճիշտ է, որ նա մոռացաւ... Այդ միտքը  
սկսեց տանջել նրան: Նա չէր կարողանում մի  
բան վճռել, մոլորւել էր անորոշ մտքերի մէջ:  
Քիչ-քիչ նա տարւեց մտքերով, իրան մոռացաւ:  
Նամակն ընկաւ ձեռքից...

Հայկը անհամբերութիւնից չը գիտէր, ինչ  
անէր, դուրս էր գալիս պարտէզ, բայց այստեղ  
էլ մնալ չէր կարողանում, ոչինչ չէր դրաւումնրա  
ուշագրութիւնը, ոչ ծաղիկները և ոչ ձնձուկների  
ծլվլցները: Նա նորից ներս էր մտնում:

Աբովիանը չէր խօսում, բայց սիրու համ-  
բերութիւնից դուրս էր գալիս, բարկութիւնը ամ-  
բարւում էր ներսը: Տիկին Աննան չը գիտէր, ինչ  
ասի, ինչ անի: Վախից չէր համարձակւում  
որևէ հարց տալ ամուսնուն: Նա սրտաց ուզում  
էր, որ Ելենան համաձայնի, միւս կողմից սիրու  
ցաւում էր դատեր յուսահատ ու վշտու դէմքը  
յիշելիս: Գուցէ նրա սիրու ուրիշին է կպել  
աչքը ուրիշի վրայ է, անցնում էր նրա  
մտքով:

Սուսաննան էլ էր մտածում: Եթէ ևս լինէի,  
այդպէս չէի ձգձգի: Նա յիշում էր իր սէրը, վիկ-  
տորին, և նրա սիրու նորից ընկնում էր տխուր  
յուշերի մէջ: Վիկտորի աշխոյժ, կրակոտ պատկե-  
րը գծագրում էր նրա երկակայութեան մէջ: Եթէ  
ևս լինէի Ելենայի տեղ, կասէի, որ համաձայն չեմ,  
ուրիշին ո՛մ սիրում և առանց վախենալու դուրս  
կը գայի տանից, նրա մօտ կը գնայի, ախ, եթէ  
նա կամենար...

Հայրը համբերութիւնից դուրս եկաւ: Նա  
մտաւ Ելենայի սենեակը: Ելենան նոյն յուսահատ

դրութեան մէջ էր, հօր մտնելը չը նկատեց, սա-  
կայն նրա ձայնը լսելուն պէս ուշքի եկաւ: Ար-  
դէն ուշ էր, հայրը նամակը վերցրեց գետնից:  
— Այս բնչ նամակ է,— ասաց նա:  
— Հայրիկ, տուր այդ թուղթը, մի կարդա,  
— աղերսեց ելենան:

— Դու ինձնից ծածուկ թղթեր էլ ունես: Այդ միջոցին ներս մտաւ տիկին Աննան, որ  
վախենում էր, թէ մի գուցէ հայրը խիստ վարւի  
ելենայի հետ: Սուսաննան էլ ներս մտաւ:

— Ահա թէ ինչ,— ասաց Բագարադ Աբովիանը  
թուղթը կարդալոց յետոյ, — տեսնում ես, Աննա,  
աղջիկդ ուրիշին է սիրում: Այդ էր պակաս, ծա-  
ծուկ նամակագրութիւն, դրա համար ուսումնի  
տւի ձեզ: Ես այդ քեզնից չէի սպասում, Ելենա:  
Զէ, չէ, այդ լինելու բան չէ:

— Ո՞ւմէ, սիրում, նամակն ումից է, — վախե-  
ցած հարցրեց տիկին Աննան:  
— Նաթանին:  
— Նաթանին:

— Այն, խօսք չունեմ, լաւ տղայ է, ուսումով,  
խելօք, բայց ես նրան աղջիկ չեմ տալ: Մեր ժա-  
մանակներում ուսումը բաւական չէ, քիչ ուսում-  
մականներ կան, արտասահմանում կրթւածներ,  
որոնք քաղցած են ման գալիս: Մեր ժամանակի  
ամենամեծ արժանիքը փող ունենալն է: Նաթանը  
ոչինչ չունի, հայրը ոչինչ չի թողել, ունեցածը  
ծախսել, քէֆ է արել: Փողը փողի մօտ է հաւաք-  
ւում: Ուզում է, թող փիլլասոփայ լինի, եթէ փող  
չունի, իմ փեսան չի կարող լինել: Նա յոյսը իմ  
կարողութեան վրայ է դրել, գուցէ: Զէ, աղջիկս  
տղան հաւասար պիտի լինի, կարողութեանս չափ

էլ կարողութիւն պիտի ունենայ իմ փեսան։  
Դլուխ գալու բան չի։

Հօր յանկարծակի ներս մոռնելը, իր գաղա-  
նիքի բացւելը, ապս հօր խօսքերը այնպէս խիստ  
ազդեցին Ելենայի վրայ, որ նա թուլացաւ, քիչ  
մնաց ուշքից գնար, գոյնը թոցընց, մէկ շիկնում  
էր, մէկ սպրդնում, ոչ մի խօսք ասել չէր կարո-  
ղանում։

—Հայրիկ, սիրելի հայրիկ, մեղք է Ելենան,  
մի բարկանա, մի ստիպի նրան։ Միթէ մնաք քի՞չ  
կարողութիւն ունենք —, ասաց Սուսաննան։

—Դու ի՞նչ ես ասում, բեզ խօսք չի հասնի,  
—աւելի բարկացաւ հայրը, —ամեն ոք իր վերմակի  
չափ պիտի ոտը մեկնի։ Վերջապէս ես խօսք եմ  
տւել, Բազարադ Արովեանը իր խօսքից դարձող  
մարդ չի, նա նամուս ունի, գլխարկ է ծած-  
կում։

—Երեխաս ձեռքից գնում է, անիծւի այդ փո-  
ղը, —ասաց տիկին Աննան։

—Հը, գիտեմ, դու էլ ես նրանց հետ հա-  
մաձայն։ Դուք ուզում էք, որ ես Ստեփան Սա-  
համեանի առաջ սևերես դուրս գամ, ոչ, այդ չի  
կարող լինի։ Վերջապէս Հայկը յայտնի մարդ է,  
փաստաբան է, անուն ունի, ով նըան աղջիկ չի  
տայ։ Ես ձեր օգտի մասին եմ մտածում։ Ինձ  
համար հօ չի, ես ուզում եմ, մահիցս յետոյ, այն  
ժամանակ, երբ կը մեծանաք ու դատարկ ցնդա-  
րանութիւնները դուրս կը թողնեք գլխներիցդ,  
ինձ ողորմի տաք, յիշէք օրհնանքով և ոչ անէծ-  
քով։ Այլևս երկարացնելչեմ ուզում։ Այս թուղթն  
էլ ահա պատռում եմ։ Սրա գրող, եթէ լաւ մարդ  
լինէր, այս խորմանկութեանը չէր դիմի։ Նա կա-

մեցել է իմ աղջիկը գողանալ, հը։ Դէ, Ելենա.  
դու համաձայն ես, ես իսկոյն այդպէս էլ կասեմ  
պ. Հայկին։ Պատրաստւիր, այսօր քոնշանադրու-  
թիւնն է...

Խօսքը վերջացնելուն պէս նա դուրս եկաւ։  
Ելենան ընկաւ Սուսաննայի գիրկը ու սկսեց հե-  
կեկալ։ Տիկին Աննան շարած կանգնել է։ Երբ  
ամուսինը խօսում էր, նա մի քանի բոպէ էլ  
զրադաց այն մտքով, թէ ինչպէս է, որ Հայկը  
չը գիտէ Նաթանի սիրոյ մասին, միթէ նրանք  
մի տան չեն ապրում, այդպէս էլ ընտանիք կը  
լինի։ Նրա սիրտը լցւեց դառնութեամբ։

Սուսաննան Ելենային պարկեցրեց, մայրը  
մօտեցաւ ու սկսեց շփել նրա ճակատը։ Սև, ան-  
լուսին գիշերը իր թևերը տարածեց քաղաքի  
վրայ։ Պարտէզի ծառերն էլ կորան խաւարի մէջ։  
Ելենան դուան էր նայում։ Զէ, չէ, նա չեկաւ,  
չեկաւ։ Ես մենակ եմ, մեն-մենակ, անօգնական,  
մտածում էր նա։

## VII

Օրն արդէն վերջանում էր, բայց Նաթանը  
դեռ իր սենեակում յետ ու առաջ էր գնում։  
Մտքերի ու զգացմունքների տարափի տակ նա-  
չը գիտէր, ինչ անի։ Հայկը գնաց, նա արդէն ա-  
ռաջարկութիւն է անում, բոլոր համաձայն են,  
գուցէ և նա... Բայց չէ, նա չի համաձայնի...

Արեն էլ մայր մտաւ, ապրիլի կարմիր օր-  
ւայ վերջալոյսն էլ խաղաց լեռների կատարներին  
ու թռաւ, թռչուններն իրանց երեկոյան երգերն  
ասացին ու թառ եղան ծառերի վրայ, հօտաղնե-  
րը տաւարը արօտից տան բերին։

Նաթանը դեռ քայլում էր սենեակում: Մայրը ձեռքերը խաչած կանգնել էր սեղանի առաջ: Միւս սենեակում Ստեփան Սանամեանն էր հառաջում, իսկ Վիկտորը զայրացած գրբերը դարսում էր պայուսակում և եղբօրը հայհոյում. .

Պիտի գնալ, իդուր է ուշանում, պիտի թըռչուններից թև առնել, թուել, նրան համել որոշում է Նաթանը և գուրս գալիս սենեակից: Նա սովորական շորերով է, միայն մի գաւազան ունի բռնած ձեռքին: Մութ է փողոցներում, խաւար, միայն պատուհանների լոյսն է անդրադարձած հանդիպակաց պատերի վրայ: Մարդիկ քաշել են իրանց տները: Գիւղում կառքեր քիչ կան, իսկ շոտապ ժամերին նրանք իսպառ կորչում են..

Նաթանը հասաւ շուկային: Մի կառք կայ միայն կանգնած: Նաթանն սպասում է, կառապանը չը կայ: Վերջապէս գալիս է և նա, հարբած: Նաթանն սպում է, որ քաղաք պիտի գնալ: Կառապանը նախ անորոշ պատասխան է տալիս.

—Մութն է, աղա, տարաֆամ է:

—Զէ, պիտի գնանք անպատճառ:

—Դին դուր, աղա, գիշերւայ գին:

—Ի՞նչ ուզում ես, կը տամ:

—Արադի գին:

—Այո, միայն շուտ:

Կառապանը նախ զրում է ձիերին, փնփընթալով ու հայհոյելով գուրգուրում է նրանց, բաշերն ուղղում: Նաթանն սպասում է անհամբեր, յուզւած: Վերջապէս ճանապարհ են ընկնում: Բոպէները ժամեր են թւում, ժամանակն երկարում է, անծայր երկարում, ճանապարհը չի վերջանում: Եղանակն էլ ցրտում է: Նաթանը բարակ է հագ-

նւած, նոյնիսկ վերարկուն չի վերցրել: Արինն ոկում է արագացնել հոսանքը, Նաթանն ընկնում է երեսակայութեան մէջ, կառքը սլանում է, կառապանը երգում է, իսկ ձիերի զանգակների ձայնը տարածում է խաւար ու զադարկ տարածութեան մէջ, մելամաղձիկ ու տիուր տրամադրութիւն առաջացնում: Երկնքում էլ աստղերն են փայլում. .

Ահա և քաղաքը: Կառքը կանգ է առնում: Նաթանն սթափում է մտքերից: Փառք Աստծու, հասայ, առում է Նա մտքում: Նա շտապով վճարում է կառապանի փողը և գնում է դէպի Արդվեսի տուն: Փողոցներում ոչ ոք չը կար, քաղաքապահներն էին միայն այս կամ այե դռան առաջ կանգնած: Նաթանն անցնում է առանց ուշադրութիւն դարձնելու: Ահա և Արովեանի տունը: Վերին յարկում լոյս է երեսում: Նաթանը թակում է զուռը, և նրա հարւածները՝ ջղային ու շտապկոտ, խանգարում են փողոցի լոռութիւնը:

—Ո՞վ ես, —հարցնում է մի ձայն ներսից:

—Ես եմ, —պատասխանում Նաթանը:

—Դու ով ես:

—Բաց արա, կը ճանաչես:

Զայնը լոռում է, դուռը չի բացւում: Նաթանը նորից բախում է զուռը աւելի ոյժեղ, աւելի ջղային: Նորից ոտնաձայներ է լսում:

—Ո՞վ ես, հարցնում է նոյն ձայնը:

—Ես Նաթանն եմ, դուռը բաց արէք:

—Նաթանը, —բացագնչում է մի ուրիշ ձայն, —սպասիր, սպասիր, մինչև գամ:

Մէկը վազում է դէպի տուն, նորից լսում

են ոտնաձայններ, լսում է նաև տան դրան ձայշ-  
նը: Մի քանի ըռպակ լոռութիւն է տիրում, ապա  
շփոթութիւն: Դուռը բաց են անում: Մէկը բռ-  
նում է նրան:

—Նաթան դու ես, այս ժամինը գիշերւայ  
կիսին:

Նաթանին թւում է, որ խօսողը Հայկն է:  
—Հեռու ինձանից, —շնջում է նա:

—Նաթան, ինչու ես եկել, ինչու ես ինձ  
անբախտացնում:

—Ո՞ւր է նա, ուր է, ես եկել եմ նրան  
տեսնելու:

—Նաթան, եղբայրս, ինչ ես անում:  
—Նո չը կայ, դու արդէն խլել ես ինձանից:

—Նաթան, զառանցնում ես, հիւանդ ես...

Հայկը բռնում է Նաթանին, տանում է ներս:  
Բոլորը խառնում են իրար: Տիկին Աննան քնում  
է ելենայի մօտ: Ելենային չեն յայտնում, թէ  
ինչ է կատարում միւս սենեակում: Բագարադ  
Աբովեանը բարկութիւնից շրթունքներն էր կրծո-  
տում, բայց չէր խօսում: Նաթանը Ստեփան Սա-  
նամեանի ըըոջ որդին է, նրան տանը ամենը  
սիրում են, յարգում: Նրա մայրը՝ տիրուհին,  
Ստեփանին հաւասար գիրք ունի տանը: Զէ, նրան  
վիրաւորական խօսքեր չի կարելի ասել, մտա-  
ծում է Աբովեանը:

Սուսաննան ու Հայկը աշխատում են Նա-  
թանին հանգստացնել, բայց այդ չի յաջողութ:  
Հայկը տեսում է, որ Նաթանը յուզւած դրու-  
թեան մէջ է, տաքացնում է, զառանցում է: Նա  
բարակ է հագնւած, ուրեմն և մըսել է: Թէ Հայ-  
կին նամակի մասին ոչինչ չէր ասւած, բայց նա

հասկանում էր Նաթանի գալու բուն պատճառը:  
Նա չէր սպասում, որ Նաթանի առաւօտուայ ճիշը  
այդ աստիճանի խորութիւնից էր դուրս գալի:  
Հայկը տիրեց, զղաց ու ցաւեց, որ իրերը այս  
ընթացքն են ստացել: Ուշ է, այլևս ճանապարհի  
կիսից դառնալ անհնար էր, արդէն բոլորը հա-  
մաձայն են, նոյնիսկ Ելենան իր համաձայնու-  
թիւնն է ուղարկել հօր բերանով: Նրա զլուխը  
ցաւում է, անսովոր է այդպիսի առաջարկութիւն-  
ների, ասաց հայրը, բայց ուրախ է, վաղը ան-  
ձամբ կը խօսի: Իսկ Նաթանին ինչ ասել: Յետ  
դպունալը խայտառակութիւն է: Ինչպիսի ամբախ-  
տութիւն, Աստեած իմ:

Նաթանը մըսել է: Օդի են խմացնում, որ  
մըսելու վտանգն անցնի: Նրան հարկաւոր է հե-  
ռոացնել այստեղից, հասկացնում է Սուսաննան,  
գտնելով, որ Ելենան կիմանայ: Համաձայնում է  
և Հայկը, որ վախենում էր մի անախորժ անա-  
կընկալից: Նրան զարմացնում էր այն, որ Արո-  
վեանն ու կինը չեն գալիս Նաթանին տեսնելու:  
Այդ երեսոյթը նոյնիսկ վիրաւորում էր նրան:  
Այն, պիտի նրան հեռացնել, որոշում է Հայկը,  
նրան տաք վերարկու է հազցնում, ծառային հրա-  
մայում է կառք կանչել: Կառքը գալիս է, նա  
Նաթանին նստեցնում է կառքի մէջ, ինքն էլ  
նստում է կողքին և հրամայում քշել:

—Պարոն Հայկ, գուք էլ էք գնում, հարցնում  
է Սուսաննան:

—Այո, նա հիւանդ է, հարկաւոր է անվտանգ  
տուն հասցնել: Ես կը վերադառնամ:

Կառքը առաջ է շարժում մութ փողոցնե-  
րում. քիչ-քիչ քաղաքը կորչում է նրանց աշրից,

Նրանք յայտնւում են բայց դաշտում, լազուր երկնքի տակ: Զանգակները զնդնդում էին պարզ ու լուս օդի մէջ:

Երբ Հայկը Նաթանին տուն հասցրեց, տաճը բոլորը յուզւած էին: Տիրուհին լաց էր լինում, Ստեփան Անաստեանը հառաջում էր ու գաւազանին յենած մի սենեակից միւսն անցնում:

Վիկտորը սկզբում ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում հօր և հօրաքրոջ դրութեան վրայ, բայց յետոյ սենեակից գուրս եկաւ և յայտնեց, որ ինքը գնում է Նաթանի յետեից, որ նրան կը գտնի, յետ կը բերի: Բայց նա ոչ կառք գտնել կարողացաւ, ոչ ձի: Կէս գիշեր էր, ոչ ոք չէր համաձայնում դուռ բանալ, ուր մնաց ձի տալ: Նա որոշեց ոտքով գնալ: Տանը հաստատ չը գիտէին, թէ նա ուր գնաց, միայն կասկածում էին, որ Վ.քաղաքի ճանապարհը բռնած կը լինի: Ահա այս տագնապի ժամին Հայկը Նաթանին տուն բերեց:

Նաթանը արդէն լուրջ հիւանդ էր, տաքութեան աստիճանը քառասունի էր հասել, նա բիշ-քիշ գիտակցութիւնը կորցնում էր: Նրան պարկեցրին, նա ընկաւ զառանցանքների մէջ. յաճախակի ելենայի անունն էր կրկնում:

Հարկաւոր էր բժշկական օգնութիւն: Վիկտորը գնաց երթեւեկների հիւանդանոցի բժշկի մօտ: Գիւղի միակ բժշկն էր նա: Երկար սպասեցին: Մինչ այդ տիրուհին մի անգամ ուշաթափ-

ւեց, Հայկը նաշաղիրի ոգու օգնութեամբ նրան ուշքի բերեց ու սկսեց մխիթարել, յուսագրել: Եկաւ և բժիշկը, մի կարճահասակ, սեաներ անձն: Նա քննեց, յայտնեց, որ մրսել է, տաքութիւնը կարող է մինչև առաւօտ անցնել, բայց կարող և երկարել: Քննեց և թոքերը, վտանգ չը կայ, յուսագրեց նա: Մի քանի պատւէրներ տւեց նա, դեղնշանակեց ու դնաց:

Առաւօտեան Նաթանը աչքը բաց արեց, սկզբում զարմացաւ, որ իրան անկողնում գտաւ: Ակայն քիշ-քիշ յիշեց երեկւայ օրը և հասկացաւ պատճառը: Նա ուզեց նստել բայց շատ թոյլ զգաց իրեն: Գլուխը ծանր էր, բերանը դառը: Նրան յայտնեցին, որ բժշկի պատւէրների համաձայն պիտի դեռ պարկի, վերկենալ չի կարող...

Անցած գիշերը նրանց համար տանջանքների ու մտածունքների գիշեր էր: Իրերի ընթացքը անսպասելի լինելով հանդերձ նրանց թէ զարմացրել էր և թէ վշտացրել: Տիրուհին ամբողջ գիշեր նստած էր որդու մօտ: Ստեփան Սահմեանը իր սենեակում նստած, աչքերը մի կէտի յառած, անշարժ մտածում էր: Նա մի ելք գտնել չէր կարողանում: Արհամարել ամեն ինչ, ձեռք քաշել այդ աղջկանից անհնար էր թւում նրան, հասարակական կարծիքը, պապենական սովորութիւնները նրան հեռու էին պահում այդ մտքից: Մի աղջկայ անուն վեր անելը, հաւասար է մի եկեղեցի բանդելու, ասում է հին առածը, և նա այդ գիշեր հարիւրաւոր անգամ կրկնեց այդ խօսքը: Միւս կողմից ընտանեկան այդ անսխորժ գրութիւնը նրա սիրտը ճմլում էր: Հայկը մնա-

ցել է վիզը թեք, Վիկտորը խօսք լսել չի ուզում և արդէն պատրաստւել է գնալու, մեղադրում / հօրը, եղբօրը, Նաթանն այդ նոյն աղջկայ պատճառով անյոյս պարկած է: Քոյրը ձեռքերը խաշած, արտասւակալած աչքերով նստած է հիւանդի մօտ... Ուրիշ բազմաթիւ մտքեր էին անցնում Ստեփան Սանամեանի գլխով:

Հայկը կամացուկ մտաւ հօր սենեակը: Ծերունին ոչ մի ուշադրութիւն չը դարձրեց, դեռ նայում էր նոյն կէտին անթարթ աչքերով:

—Հայրիկ,—կամացուկ արտասանեց Հայկը,

Ծերունին սթափւեց, աչքերը նախ խփեց, ապա լայն բաց արեց ու ձեռքով ճակատը տրորեց: Ուզում էր մտքերն իրենից հալածել:

—Հայրիկ, ես ինչ անեմ, նրանք էլ այնտեղ են սպասում:

—Չեմ իմանում, որդի, խելքս կորցրել եմ արդէն, ոչինչ չեմ կարող որոշել:

—Արդէն ուշ է, հայրիկ, Ելենան արդէն համաձայն է, ես չեմ կարող խօսքս յետ վերցնել...

—Ուշ է, այն, ուշ է, այլս յետ դառնալն անկարելի է: Ասում ես նրանք սպասում են, — Ծերունին լոեց ու, կարծես, Հայկին մոռանալով՝ նորից ընկաւ մտածմունքների մէջ:

Հայկը մի առ ժամանակ կանգնեց, ապա առանց մի խօսք ասելու՝ դուրս եկաւ սենեակից և իսկոյն նոյն կառքով ուղեւորւեց Արովեանների տունը:

Մի քանի օրից յետոյ Հայկը ամուսնացաւ, առաւ կնոջը՝ Ելենային, ու գնաց ճանապարհորդելու յայտնի ամառանոցներում, ծովափնեայ տեղերում: Վիկտորը գնաց Պետերբուրգ քննութիւններ տալու Նաթանային չը մոռացաւ, ընդհակառակը, երդւեց մտքում, վերադառնալ, գտնել նրան: Ելենան Հայկին չի սիրում, նրան բռնութեամբ ամուսնացրին, ասում էր նա, ուրեմն հեշտութեամբ կը թողնի Հայկին:

Նաթանը երկու շաբաթ պարկած էր: Առողջանալուց յետոյ ծրագրեց մի նոր աշխատանք, որ կրում էր «Իմ յուշատեսը» վերնագիրը: Այս երկում նա նպատակ ունէր տալ իր անբախտ սիրոյ պատմութիւնը, նկարագրել իր յոյսերն ու գաղտնի տանջանքները: Ամառայ կիսին տիրուհին հիւանդացաւ: Նաթանի գլխաւոր հոգսը մի առ ժամանակ դարձաւ մօրը խնամելը: Այդ նրան բաւականութիւն էր տալիս, սփոփում էր նրա սիրութը: Երբեմն նա ժամերով նստում էր պատուհանի առաջ, նայում էր բարձրաբերձ սարերին, նրանց կատարները շղթայող ամպերին ու մտածում էր մարդու կեանքի նպատակի մասին: Ուրիշ է մարդկանց երջանկութիւնը, միթէ կեանքը հէնց տանջւելի՞ւ, որոնելի՞ւ մէջ է. Ուրիշ է վիրջապէս այն փայլուն աստղը, որին յառած իր աչքերը՝ մարդկութիւնը առաջ գնայ, բռնի երջանկութեան ճամբան...

Երեկոները, երբ ամեն ինչ խաղաղում էր գիւղում ու ամենուրեք տիրում խաւարը, և լութիւնը իր իշխանութիւնն էր տարածում գիւղի վրայ, նա բաց էր անում յուշատեսը ու շաբունակում գրել: Գրելիս նա յիշում էր Ելենային,

սիրտը լցւում էր կրակով, անդաւաճան սէրը  
արթնանում էր նրա հոգում։ Սիրում եմ, շնչում  
էր նա, գրիչը ձեռքից վայր էր ընկնամ, գլուխը  
դնում էր սեղանի վրայ ու հեկեկում։ Երբեմ  
էլ նա բացազանչում էր. ախ, արգեօք ելենան  
իսկապէս ինձ մոռացաւ...

፭. ቤር

I

Ամառն անցաւ: Աշնան գալուստը նորից  
Նաթանի սրտում արթնացրեց նոր յոյզեր: Նա  
վերսկսեց իր ընդհատուած աշխատանքը: Նա ու-  
ղում էր իր սիրտն և հոգին, իր կհանքն ու սէրը  
Նկարել թղթի վրայ: Թւում էր, որ եթէ գրի  
չառնի իր զգացմունքները, սիրտը չի դիմանայ  
նրանց ծանրութեան տակ, կը փշրւի: Ամեն երե-  
կոյ, երբ ներսում նղածը թղթին էր յանձնում,  
իրան թեթևացած, հանգտացած էր զգում: Գրա-  
ծը կարդում էր, զգում էր, որ գեղեցիկ է, և այդ  
գեղեցկութիւնը նրա սիրտը լցնում էր մեղմ բա-  
ւականութեամբ: Ելենան էր նրա յօյզերի կենդ-  
րոնը, նոր ու նոր վշտերի աղբիւրը, որ գիշերնե-  
րը զբաղեցնում էր նրա մտքերը, առաւօտեան  
նրա առաջ զնում այդ մտքերից ազատելու, նո-  
րից գրելու պահանջ: Ա՛խ, ինչո՞ւ գեղեցկութիւնը  
մի անգամ ժպտաց, հառաջում էր նա: Աշունը  
սիրոյ վշտերի ընկերն է: Քանի ամառը չքանում  
էր, այնքան Նաթանը տարւում էր սրտի ձայնով:  
Նրա սրտում բորբոքւում էր գեղեցկութեան պաշ-  
տամունքի յօյզը: Թող նա այստեղ լինէր, թոյլ  
տար միայն իրան նայել, խոնարհել նրա գեղեց-

կութեան առաջ, երկրպագել, բաւական էր. Մը-  
տածմունքի այսպիսի լոպէներին մարդկութիւնը  
իր կենսական հաշիւներով, քաղաքականութեամբ  
և տնտեսական պայքարով, անհետանում էր նրա  
մտքից. Նաթանն զգում էր, որ հրապարակի  
ժխորից, կուից ու մաքառումից գուրս ուրիշ աշ-  
խարհ էլ կայ. Այդ մենութեան խոհերի շրջանն  
է, հեռու մարդկանց աչքերից, ինքն իր մէջ ամ-  
փոփւած, մի անձի ներքին մտորումներն ու մա-  
քառումները, անհատի հօգու տենչերն ու վշտերը:  
Սառը լօգիկայի աշխարհից բացի կայ և սրտի ու  
հոգու աշխարհը, որ եռաման ժամին ըմբոստ է ու  
հուժգու...»

Երբեմն Նաթանի մէջ ծնւում էր շրջապատեց ազատւելու բուռն ցանկութիւն. զգում էր, որ, համարեա, թիւրիմացութեամբ է կապւել հին տան հետ, որ գիւղը իր տեղը չի նոյնիսկ կարձ ժամանակով: Նա սկսում էր ծրագիրներ կազմել...

Ծի օր Ստեփան Սանամեանն ասաց, որ  
Հայկը շուտով վերադառնալու է ճանապարհոր-  
դութիւնից և մի առ ժամանակ ապրելու է զիւ-  
ղում իր տիկնոջ հետ: Ծերունին դողդողալով ա-  
սաց այդ և մի զնող հայեացքով Նաթանին նա-  
յեց: Վերջինն աշխատեց անտարբեր ձևանալ,  
միայն տիրուհին տարակուսանքով որդուն նա-  
եց:

Նա գալիս է, գալիս է, մտածում էր Նա-  
թանն իր սենեակում, և այդ միտքը նորից արե-

կոծում էր նրա սիրաց: Այս, գալիս է, իր ցնորք-  
ների թագուհին գալիս է: Բնութիւնը նրան ա-  
ւելի հրապուրիչ էր թւում, թռչունների ճռու-  
ղիւննը սիրոյ հրեշտակային էլեզեաններ... Բայց  
նա մենակ չէ, նրա հետ է օրինաւոր ամուսինը:  
Այս, անիծւեն այդ օրէնքները, որ շղթայում են  
մարդուն սուս ու պատիք՝ հասկացողութիւննե-  
րով: Աստւած մարդուն ազատ է ստեղծել, ինչու  
այդ աստւածային պարզեն ոտնահարւած է, ին-  
չու անհատը չը պիտի լսի իր հոգու, իր հաճոյքի  
ձայնին, ինչու զանազան պարտականութիւններ  
կնոջը կապում են ծնողների, եկեղեցու, օրինա-  
ւոր ամուսնու հետ: Գեղանի եղնիկը կարող է  
թափառել անտառում և գնալ այն արուի հետ,  
որին ինքն է սիրում, աղաւնին գուրգուրում է  
այն վարուժանին, գէպի որը սիրուն է քաշում,  
իսկ ելենան պարտական է կապւած մնալ Հայկի  
հետ... Եթէ նա ինձ է սիրում, ցնորալից երազ-  
ներում ինձ է տեսնում, եթէ նրա մրայօն աշբերի  
ամայկոտ հայեցքը ինձ է որոնում...

Ամբողջ ամառը Հայկը ման եկու, կնոջը  
ցոյց տևեց բնութեան գեղեցիկ տեսարաններ,  
ապրեց ծովի ափին, գիշերեց կզկիների վրայ,  
ննջեց ալիքների աղմուկի տակ, նոճիների ստե-  
րում: Նա ամեն միջոց գործ էր զնում իր գեղե-  
ցիկ կնոջ սիրտը զբաւելու համար:

Ելեւան հասկանում էր այդ: Նա երկար  
մտածում էր նստած ծովափին, ժայռերի ծիրպե-  
րին: Հանդառտիկ զեփիւովց անգամ ալիքները

տատանւում էին, և ծովը ծածկւում էր մետաքսի կոյտերով։ Վու, վու, ոռնում էր քամին երբեմն, խըշ, խըշ, կատաղում էին ալիքները, հարւածում ժայռերին։ Զառամեալ ժայռերը տնքում էին հարւածներից։ Բնութեան տարերքի այս խաղը աւելի էր թափուտում ելենայի սիրտը։ Զէ, նա մէկին է սիրում, ոչ ամուսնու գուրզուրանքները, ոչ արած ծախսերը, ոչ մետաքսի թանկապին զգեստները, ոչինչ և ոչ ոք չի կարող հանել իր սրտից այդ սէրը։ Նա մտածում էր ու ցաւ էր զգում, որ Հայկը այդպէս ուշադիր է, իսկ ինքը փոխարէնը հատուցնել չի կարող։ Զէ, ուրիշ կերպ չի կարող լինել նա նաթանի պատկերով է ապրում, նրա սիրոյ յուշերով...

Հայկն զգում էր, որ կինը մի գաղտնիք ունի թագցրած իր սրտում, որ նա անձնատուր է լինում գաղտնի խոհերի։ Նա սկսում էր կասկածել, որ կինը ուրիշին է սիրում, յիշում էր այն օրը, որ առաջարկութիւն արեց։ Ելենան ինչպէս գունատւեց, ուշը կորցրեց։ Զէ, այն երիտասարդական ամաչկոտութիւնից չէր, ինչպէս ասաց աները, չէ, նա ուրիշի մասին էր մտածում։ Կասկածը մնեանում էր նրա մէջ և կոծում էր նրա սիրտը, նա սկսում էր տանջւել, խանդել։ Նա ելենային ոչինչ չէր ասում՝ վախենալով վշտացնել նրան։

Երբ ամառը վերջանում էր, ելենան նրան խնդրեց՝ աշնանը գնալ հայրենիք։

— Եթէ դու երկար մնալ չես կարող, վերադարձիր Թիֆլիս, իսկ ես ցանկանում եմ աշնանը այստեղ լինել, կարօտել եմ ծնողներիս և զիւղական կեանքին։

Հայկը համաձայնեց, սակայն նա իսկապէս տուն դառնալ չէր ուզում։ Նա կասկածում էր, որ կնոջ մտածմունքների առարկան Վիկտորն էր, որը հաւանօրէն Պետերբուրգում էր, բայց նաթանը զիւղում էր։ Նաթանը սիրում էր Ելենային, անշուշտ դեռ չի մոռացել, Աստած զիտի, ինչ կըպատահի, մտածում էր նա։ Բայց Ելենան ցանկանում էր, և նա չէր կամենում ընդիմանալ։

Սեպտեմբերի մի անուշ երեկոյ Հայկն ու Ելենան զիւղն եկան ի մեծ ուրախութիւն Ստեփան Սանամիեանի և Արովեանների։ Մի շաբաթից յետոյ Հայկը զնաց Թիֆլիս իր գործերը շարունակելու, իսկ Ելենան մնաց սկեսարի մօտ։ Տիկին Սննան աղջկայ մօտ էր ապրելու, քանի նա զիւղում էր։ Ի զարմանս բոլորի Հայկի զնալուց մի օր յետոյ Վիկտորը եկաւ։ Նրան ոչ ոք չէր սպասում, բոլորն հաւատացած էին, որ նա Պետերբուրգում է և իր գործերով է զբաղւած։ Հայրը որ նրան սիրում էր, դարձեալ զայրացած էր նրա արարքի վրայ։

— Որդի, — ասաց նա մի քանի օրից յետոյ, — քանի տարի պիտի քարշ զաս համալսարանների դաներում, բաւական է, խելքի եկ, սովորիր, ես շուտով կը մեռնեմ, ուզում եմ, որ մահիցս յետոյ դու մարդ լինես, լաւ օր ու կեանք ունենաս, բարձր պատիւ։

Վիկտորը հանգստացրեց, թէ ինքը կարճ ժամանակով է եկել, թէ Թիֆլիսում անհրաժեշտ

գործ ունէր, այդ պատճառով է եկել, իսկ Թիֆ-  
լիս համեստուց յետոյ չէր կարող գիւղը չը դաւ,  
և որ շուտ կը գնայ:

## II

Ելենայի գալուց յետոյ Նաթանը փակւում  
էր սենեակում, խուսափում էր մարդկանցից և  
մանաւանդ Ելենային հանդիպելուց: Նրանք մի  
անգամ միայն իրար պատահեցին ճաշի ժամա-  
նակ, ամենքի առաջ: Երկուսն էլ շփոթւեցին, շա-  
ռագունեցին: Նաթանը գողդողալով բռնեց նրա  
ձեռքը և հազիւ կարողացաւ ասել: բարև էք եկել:  
իսկ Ելենան այդ էլ չարտասանեց: Նա չը կա-  
րողացաւ խօսել, ճայնը խեղդւեց կոկորդում, բա-  
ռերը մոռացւեցին: Ճաշի ժամանակ նրանք ուտել  
չէին կարողանում, կամ գունատում էին, կամ  
երբեմն կարմրում: Ստեփան Սանամեանը, տի-  
րուհին, տիկին Աննան հասկանում էին, ինչ է  
կատարում նրանց մէջ, գողտուկ հայեացքով կամ  
նրանց էին նայում, կամ իրար երեսի: Այսպէս  
վերջացաւ նրանց տեսակցութիւնը. ոչ մի խօսք,  
ոչ մի հնչիւն, ձմւող, բարախուն սրտով: Նա-  
թանը այլևս ընդհանուր սեղանի չէր գալիս, մար-  
դիկ իրանց ներկայութեամբ նրան խեղդում էին,  
նա մենակութիւն էր որոնում...

Այլ ընթացք ունէր Վիկորի կեանքը: Նա  
հաւատում էր, որ լուրջ սիրահարւած է: Աւելի  
քան վեց ամիս էր, որ նա հեռացել էր, բայց  
Ելենային մոռանալ չէր կարողանում: Այդ էր  
պատճառը, որ նա թողել էր գասախօսութիւն-  
ներն ու եկել, իսկ գնալու մասին դեռ չէր մտա-

ծում: Ես միշտ գրաւել եմ կանացի բնքշութեամբ,  
սիրել եմ կնոջ գեղեցկութիւնը: Այդ գեղեցկու-  
թիւնը ես քաղել եմ զանազան կանացից, ինչպէս  
մեղուն մեղուի նիւթը հաւաքում է զանազան ծա-  
ղիկներից: Մի ծաղիկ հեշտութեամբ փոխարինում  
է միւսին, և մեղուն գրա համար չի արտնջում,  
միայն իր հիւթը գտնի, բայց Ելենային չը կարո-  
ղացայ մոռանալ, նրան ուրիշը չի կարողանում  
փոխարինել, մտածում էր Վիկորը: Մինչև Էրը  
է տեկլու այդ զգացումը, մինչև Էրը է Ելենան  
անփոխարինելի մնալու, նա վճռել չէր կարողա-  
նում: Լինում էին բոպէներ, երբ նա մոռանում  
էր ամեն ինչ, յափշտակւում էր, ուզում էր գնալ  
գտնել Ելենային, տանել նրան հեռու, ամենքից  
հեռու, ծծել նրա շթունքները անվերջ ու անյագ:   
Այս փափակի հետ նրա մէջ ծնւում էր հարբե-  
լու, յաւիտեանս հարբելուցանկութիւն, մոռանալ,  
մոռանալ ամեն ինչ ու հարբել...

---

Մի երեկոյ Ելենան նստած սեղանի մօտ,  
արմունկները սեղանին յենած, իսկ գլուխը ձնո-  
քերին՝ մտածում էր: Հայկը Թիֆլիսումն էր, ևնա  
մի առ ժամանակ ստիպւած չէր ամուսնուն չը  
տանջելու համար նրա գուրգուրանքներին կեղծ  
ժպիտով պատասխանել: Սակայն Նաթանն ապրում  
էր այն տանը, ուր ինքն էր: Նրա սիրալ ուզում  
էր թուչել Նաթանի սենեակը: Նաթանն այնտեղ  
տիսուր ու թախծոտ աչքերով մտածում է իմ մա-  
սին: Նա չի մոռացել, չէ, չի մոռացել: Նա գու-

Նատւեց, շփոթւեց, նրա ձեռքը դողում էր: Նա նստած է մենակ ու մտածում է, մտածում է իմ մասին: Նա քայլում է յետ ու առաջ, խորհում է, մտորում է իմ մասին: Նա մենակ է, նու տանջում է և ոչ ոք չը կայ, որ միխթարի նրան, մեղմացնէ նրա ցաւերը: Այդ բոլորի պատճառը ես եմ, ես եմ տանջում նրան, աշխարհի վրայ իմ համար ամենաթանկ կեանքին: Ինչու: Որովհետեւ ես հնագանդւեցի ծնողներիս, որովհետեւ ես կին եմ, ամուսին ունեմ, որովհետեւ այդպէս է պահանջում օրէնքը, սովորութիւնը, այդպէս են պահանջում մարդիկ... Սուսաննան այլ կերպ կը վարւէր Նա այսօր էլ ասաց ինձ, որ ինք եմ մեղաւոր, ես թոյլ եմ, չեմ կարողանում ընդիմանալ ոյժին, ուստի և զգբախտանում եմ: Նա իրաւացի է: Եթէ Վիկորը մտնի միւս սենեակը, ուր նստած է այժմ Սուսաննան մայրիկի հետ, և ասի, որ սիրում է նրան, նա իսկոյն, հէնց մայրիկի ներկայութեամբ կընկնինրա վզովս և կասի, տար ինձ, ուր կամենում ես... Այն, Նաթանը քայլում է իր սենեակում յետ ու առաջ և մտորում ամեկին, տանջում սիրուց... ես խեղդում եմ վշտից, ելք չը կայ, չէ... ես արդէն պատրաստում եմ մայր լինել, ախ, Աստւած, չէ, ելք չը կայ...

Մինչ Ելենան իր մտքերով էր տարւած, Վիկորը կամացուկ բացեց դուռը ու ներս մտաւ: Մի քանի բոպէ նա կանգնեց դռան առաջ: Ելենան տեղից չը շարժւեց, չը նկատեց Վիկորին:

—Ելենա, —կամացուկ արտասանեց Վիկորը:

Կայութիւնը նրան շփոթեցրեց: Զէր սպասում նրան, մանաւանդ այդպիսի ուշ երեկոյան:

—Ելենա, ես եկայ մի քանի խորը ասելու, ես գտնում եմ, որ հարկաւոր է իմ դրութեանս մասին ձեզ յայտնել:

—Խնդրում եմ, ինձ հանդիստ թողէք:

—Ելենա, մի տանջէք ինձ, ես սիրում եմ ձեզ, ես այլս չեմ կարող լուռ տանջել, ես ուզում եմ, որ դուք...

—Մի շարունակէք, ի սէր Աստծու, յիշէք, ես ձեր կղզօր կինն եմ:

—Այդ ինձ համար նշանակութիւն չունէ...

—Հեռացէք...

Ելենայի ոտքերը սկսեցին թուլանալ զլուխը ցաւեց, նա վախենում էր, Վիկորը նրան երկիր էր ներշնչում:

Վիկորը իրան կորցրեց, նրան պատեց մի դուրեկան ջերմութիւն: Նա մօտեցաւ Ելենային և բոնեց նրա ձեռքը, նայեց նրա շփոթած աչքերին և ասաց.

—Այն, ես ձեզ սիրում եմ:

—Թողէք ինձ, հեռացէք...

Վիկորի աչքերում փայլեց լարւած հոգու կատաղի հուրը, նա կամեցաւ համբուրել Ելենայի ձեռքը, որ գեռ բանած ունէր: Հէնց նոյն վայրկեանին Ելենան մի սարսափեցնող ճիչ արձակեց ու ընկաւ յատակի վրայ ուժահատ: Նրա ճիչը լսւեց բոլոր սենեակներում: Ամենքը դուրս վազեցին յանկարծակի եկած: Սկսեց իրարանցում:

Վիկորը այդ ճիչից սթափւեց: Կարծես նրա գլխին սառը ջուր ածեցին: Նրան շը ապատող

ջերմութիւնը մի անգամից չքացաւ: Նա մի քանի վայրկեան մնաց սառած կանգնած, ապա կարծես հասկացաւ եղելութիւնը: Մինչ միւսները ներս էին մտնում, նա դուրս եկաւ սենեակիցև մոլորւած քայլերով ցած իջաւ, գնաց պարտէզ: Պարտիզում նա երկար ման էր գալիս առանց հասկանալու, թէ ինչու: Նա ման եկաւ խաւարի մէջ, գտաւ մեծ, ստերախիտ ընկուզենու տակի հսկայ ժայռը, պարկեց նրա վրայ: Մի բարակ քամի շարժում էր տերեները: Նա մտածեց, մտածեց և կէս քուն-կէս արթուն դրութեան մէջ ընկաւ:

Բոլորը տեսան Վիկտորին՝ սենեակից դուրս գալիս, նրանք նախ զբաղւեցին Ելենայով: Երբ ուշաթափւած Ելենային ուշքի բերին, պարկեցրին, բժիշկին էլ եկաւ, Սուսաննան կամացուկ դուրս եկաւ տանից: Նա հասկանում էր, կարծես, թէ ինչ է պատահել: Որ Վիկտորը իր սենեակում չէր, նա շուտ իմացաւ: Նրա մէջ ծնւեց ինչ որ կասկած: Վիկտորը ինքնամուացութեան մէջ դուրս եկաւ: Գիշերւայ խաւարի և լուսութեան մէջ նա ուր գնաց, հաղար չար ու շառի կը հանդիպի, իր յանցանքի առաջին տպաւորութեան տակ կարող է իրան վտանգի ենթարկել: Նրա մէջ գլուխ բարձրացրեց մի հին յոյզ: Նա շալը ձգեց ուսին ու պարտէզ իջաւ, երկար որոշնեց և գտաւ Վիկտորին ժայռի վրայ: Շալը վերցրեց իր ուսերից և ծածկեց նրան: Տեսնելով, որ այդ բաւտկան չէ նա նորից տուն վերտպարձաւ, որպէսզի Վիկտորի վերարկուն ու զլխարկը տանի: Տանը նա Ելենային սոսկալի տանջանքների մէջ գտաւ: Կասկածում էին, որ նա կը վիժի: Մի առ ժամանակ Սուսաննան չը գիտէր, տանը

մնալ, թէ պարտէզ գնալ: Մտածեց, մտածեց և վերջապէս նորից պարտէզ իջաւ, հասաւ Վիկտորի մօտ, վերարկուն ձգեց նրա վրայ, գլխարկը դրեց զլխին ու կողքին նստեց: Վիկտորը զգում էր, որ մի մարդ կայ իր մօտ, բայց գլուխը չէր բարձրացնում, որովհետեւսարի պէս ծանր էր: Վիկտորը տարել է զառանցանքներով, Սուսաննան մտածում էր: Նա մի անգամ կռացաւ ու համբուեց Վիկտորի այրուղ շրթունքները: Այդ համբուրը նրա սիրութ լցրեց քնքոյշ հաճոյքով:

—Ես սիրում եմ քեզ, յանցաւորիդ, —մըմնջաց Սուսաննան:

Երբ աքաղաղները կանչել սկսեցին, արևելքում նշմարւեցին արեի առաջին շողերը, և աստղերի ցոլքը սկսեց գունատեել Վիկտորը աչքերը բաց արեց ու նստեց: Նա ազատւեց կօշմարից: Երբ Սուսաննային տեսաւ, հասկացաւ ամեն ինչ, յիշեց երեկոյան անցքը, գլխի ընկաւ, թէ ովէ բերել վերարկուն ու զլխարկը, առաց.

—Շնորհակալ եմ:

Ապա նա կանգնեց, չորս կողմը դիտեց, ձեռքերով յետ քաշեց մազերը ճակատից, յետոյ մօտեցաւ Սուսաննային, բռնեց նրա ձեռքը և սաց.

—Շնորհակալ եմ, ներիր ինձ:  
դժբախտ եմ, արժանի եմ կարեկցութեան:

—Ես պարտաւոր եմ քեզ օգնել...

—Արժանի չեմ, դուք կարող էք ինձ ներել, բայց ոչ սիրել... Այստեղ մնալը ինձ համար աւելորդ է, մնաք բարե, —ասաց նա և վերարկուն ուսին ձգելով քայլերը դէպի տուն ուղղեց:

— Սպասիր, սպասիր, այնտեղ անէծքով կընդունեն:

— Այդ գէպքում ես միւս կողմով կը գնամ, մնաք բարեւ:

— Ես կարժղ եմ ուղեկցել:

— Ծնորհակալ եմ, հարկաւոր չէ, արժանի չեմ:

Եւ նա գնաց պարտիզի հակառակ կողմը, դէպի խճուղին, որ տանում էր կայարան: Գիւղը քիշ-քիշ կորչում էր նրա աչքից: Որբան մօտենում էր կայարանին, այնքան, կարծես, յոյզերը մեղմանում էին: Նա յիշեց ելենային և հոգին մի սուր ցաւ զգաց: Բայց երբ երկաթուղու ծուխը նկատեց, զգաց, որ փրկութիւնը մօտ է: Գիւղի նեղ ու խեղդող փողոցների փոխարէն աղմկոտ քաղաքի պատկերը ծագեց նրա մէջ: Նոր կեանք, նոր հաճոյքներ, նոր կանայք, նոր սէր, ծրագրում էին նրա գլխում...

Երբ Սուսուննան կսկծու սրտով տուն եկաւ, ելենան ծնել էր հնդամսական մի տղայ և ուշաթափ պարկած էր: Ստեփան Սանամեանը վշտից խօսել չէր կարողանում: Կանայք շփոթւած ու տիսուր նստած էին ծննդկանի մօտ: Նաթանը մոայլած կանգնած էր դռան առաջ, նրան չէին թողնում ծննդկանի սենեակը:

Երկու օրից յետոյ Հայկն եկաւ, իսկ դրանից մի օր յետոյ Ստեփան Սանամեանը կաթւածահար եղաւ:

## III

Հին տան վրայ մի խորհրդաւոր խաղաղութիւն էր տարածւել: Ոչ ուրախութեան աղմուկ էր լսւում, ոչ դարդից ուսած սրտի բարձրածայն հեկեկանը: Ամենքը տիսուր էին, խօսում էին կամացուկ, խորհրդաւոր շշուկներով, աչք-ունքի շարժումներով: Նրանք, կարծես, վախենում էին, թէ որ ձայն հանեն, մի յանկարծական արհաւիրք կը ծնւի հնչիւններից: Դարբասի դուները փակւած էին, գիւղացիներից ոչ ոք ներս չէր ընդունւում:

Նաթանի սիրտը պատուում էր: Ելենայի սենեակը փակւած էր նրա համար: Երբեմն կամաց, մատաների վրայ քայլելով կանգնում էր դռան յետեւում, կամ դուրս, պատուհանի տակ, ականջ էր դնում: Նրա ականջին հասնում էին փսփսոցներ: Երկի հիւանդապահները՝ մայրս ու տիկին Աննան են մտքեր փոխանակում, մտածում էր նա: Մի օր էլ նկատեց, որ մայրը աւելի քան տիսուր է, բերանը չի բացում խօսելու: Նրա աչքերի մէջ ինչ որ գաղտնիք կար: Մօրը ոչինչ չը հարցրեց: Հարկաւոր չի նրան աւելի ևս տանջել, առանց այն էլ նա շատ է այրւում ամենքի ցաւերով, վճռեց նա: Միրտը հանգստանալ չէր կարողանում: Աշխատանք, գործ նա թողել էր այն օրւանից, երբ ելենան եկաւ և մանաւանդ երբ հիւանդացաւ: Նա դուրս եկաւ իր սենեակից և մտաւ Ստեփան Սանամեանի սենեակը: Ծերունին լուր պարկած էր, աչքերը խփած: Նրա մարմինի ամբողջ աջ մասը չէր գործում: Բագարադ

Արովեանը կնճռոտած ճակատով, յօնքերը կիտած,  
լուռ նստած էր հիւանդի կողքին: Հիւանդի գրու-  
թիւնը ազդեց Նաթանի վրայ, նա հառաչեց ու  
նստեց պատի մօտի աթոռի վրայ: Ներս մտաւ  
Հայկը և Արովեանի հարցին՝ ինչպէս է, պատաս-  
խանեց ուսերի յուսահատական շարժումով, Նա-  
թանը երկար չը համբերեց, դուրս եկաւ երբ  
անցնում էր միջանցքով, նրա ականջին հասաւ  
մի երգի ձայն: Մէկը երգում էր կանացի, քաղցր  
ու հիւանդ ձայնով, ձայնի ջղային տատանում-  
ներով: Աստւած իմ, այս Ելենայի ձայնն է, ան-  
ցաւ Նաթանի մտքով: Նա զարմացած կանդ ա-  
ռաւ: Այս, նա է, նրա ձայնն է, ինչ է նշանա-  
կում այս: Նա ամբողջ մարմուկ լսելիք դարձաւ,  
աշխատում էր կանել իւրաքանչիւր ճնշիւն: Ե-  
ղանակները շուտ-շուտ փոփոխում էին, Նաթա-  
նի սրտում ճնշեց մի սարսափեցնող կասկած:  
Զայնը յանկարծ լոեց: Նա զգում էր, որ այլև  
այդ խորհրդաւոր գաղտնիքը տանել չի կարող,  
որ ոյժերը սպառում են, հարկաւոր է գնալ նրա  
սենեակը և տեսնել նրան: Զէ որ նա հիւանդ է,  
քո ներկայութիւնը վտանգաւոր է, ասում էր  
նրան մի ուրիշ ձայն: Յետոյ մտքերը խառնւե-  
ցին, ապա նրան տեսնելու փափակը լսեցրեց  
սրտի միւս ձայներին: Նա բայլերն ուղղեց զէպի  
հիւանդի սենեակը, Բայց այդ նոյն վայրկեանին  
դուռը բացւեց և Սուսաննան դուրս եկաւ: Նա-  
թանը մնաց կանգնած: Սուսաննան, հասկացաւ,  
թէ նա ինչու է այստեղ, նայեց նրա աչքերին,  
նրանց մէջ կարդաց նրա տանջանքները, ապա  
բռնեց նրա թերից և ասաց.

—Գնանք, այստեղ կանգնելը անյարմար է:

Նաթանը չընդիմացաւ, հետևեց նրան: Սու-  
սաննան նրան տարաւ իր սենեակը: Նաթանը  
հարցրեց նրան:

—Ասէք ինձ, Սուսաննա, Ելենան ինչու էր  
երգում, ինչպէս է, որ հիւանդը երգում է, միթէ  
այդ կարելի՞ է:

—Հանգստացէք, կը պատմեմ: Նա այնպիսի  
հիւանդ է, որ երգում է: Նրա հիւանդութիւնը  
կոչում է ճննդաբերական ջերմ: Նա զառանցում  
է և զառանցաքների մէջ երգում է, անկողնից  
դուրս է զալիս և զէպի դուռն է զիմում: Նա այդ  
դրութեան մէջ անդամ ձեզ չի մոռացել, ձեր սէրը  
դեռ նրա սրտումն է, սակայն դուք մի գունատ-  
էք, ընդհակառակը, այդ ձեզ ոյժ պիտի տայ..

Եւ Սուսաննան պատմում էր հիւանդի հո-  
գու անշէջ սիրոյ մասին: Նաթանն էլ լսում էր  
յուզւած սրտով: Մէրը աճում էր նրա ներսը և  
լցում ամբողջ կուրծքը, աչքերում փայլում էր  
անբախտ սիրոյ դալուկ հուրը...

Ներս մտաւ տիրուհին: «Հանգստացաւ», ա-  
սաց նա, ոքիշին ասում էր, եթէ հանգստանայ,  
լաւ կը լինի, հանգստացաւ, քննեց: Նաթանը լուռ  
էր: Սուսաննան գնաց պարտէզ Տիրուհին գնաց  
միւս հիւանդի՝ Ստեփան Սանամեանի մօտ: Եղ-  
րօր դժբախտութիւնը տիրուհուն աւելի քան թու-  
լացրել էր: Եթէ նրան մի բան պատահի, ես ապ-  
րել չեմ կարող, աւելի լաւ է, նախ ես մեռնեմ,  
յետոյ նա, մտածում էր տիրուհին:

Նաթանի ականջներում հնչում էր երգը,  
նա մտքում կրկնեց Սուսաննայի սաաճները, յե-  
տոյ մօր ասածը. «Հանգստացաւ, ընեց: Նրա  
սրտում ուրախութեան պէս մի բան շարժւեց, նա

վեր կացաւ, դուրս եկաւ, անցաւ պարտիզի կողմի պատշգամբը։ Այստեղ դրւած էր մի մեծ ծաղկաման։ Ծաղկամանի մէջ էլ մի նարնջի ծառ էր տնկւած, մի քանի նարինջներ քարշ էին ընկած թարմ ոստերից։ Նա յենւեց վանդակին ու սկսեց արևմուտքին նայել։ Լերան վրայ հօկայական հրդեհ կար վառւած ամպի կոյտերից, որոնք որքան բարձրանում էին, այնքան շիկնում էին։ Ամենից բարձր ձգւած էր ծիրանի մանուշակագոյն մի լայնեզր քող։ Լերան մօտ հրեղէն բոցերի մի վիթխարի հնոց կար։ Պարտիզի ծառերի տերևները սկսել էին դեղնեւը խոկ լերան լանջերը ծածկւած էին աշնան կանաչով, մէջ ընդմէջ կանաչագուրկ գորշ ցելերով։

Նաթանը շուռ եկաւ, նստեց հասարակ փայտից շինած աթոռի վրայ, որ դրւած էր ծաղկամանի մօտ, ձեռքերը փաթաթեց վանդակներին և գլուխը ձեռքերի վրայ դնելով աչքերը ուղղեց պարշամբի սպիտակ վարագոյրով ծածկւած պատուհանին, որ բաժանում էր նրան Ելենայից։ Այստեղ, պատուհանի միւս կողմում պարկած է նա, քնիլ է նա, հանգստանում է, կը լաւանայ...

Նաթանին թւաց, որ վարագոյրը շարժւեց, ապա երկու սպիտակ ձեռքեր յետ քաշեցին այն, պատուհանի առաջ դժագրւեց մի կերպարանը, Նաթանը կանգնեց յանկարծակի եկածի պէս։ Աստւած իմ, Պատուհանի առաջ կանգնած էր Ելենան գլուկ շրթերով, սպիտակ դէմքով։ Նա սպիտակ շապիկ էր հագած, որ հասնում էր մինչև ծնկները։ Մազերը շաղ էին անցած ուսերի վրայ, իսկ լայն քացւած աչքերը նայում էին Նաթանին յառած, մոլորւած, շփոթւած հայեց-

քով։ Ահաբեկւած մի եղնիկ էր նա, որ յանկարծակի էր եկել որսկանի առաջ... Նաթանը յափշտակւեց, «Ելենա», միմնջաց նա ու ձեռքերը մեկնեց, նոյնիսկ վազեց գէպինա, գէպի պատուհանը։

—Ուշ էր։ Հիւանդին, նկատեցին, գըկեցին, յետ տարան։ Պատուհանը նորից ծածկւեց սպիտակ վարագոյրով։ Նաթանը ձեռքը մեկնեց դադարկ տարածութեան մէջ, ապա թուլացած յետ քաշւեց, բռնեց պատշգամբի սինը։ Յուզումը խեղդեց նրա կոկորդը, լսւեցին նրա հեկեկոցները...  
—

Այս գիշերը ծիծեռնակի թնից էլ սկ էր, ու թուխ կարտպի նման։ Օդը թախիծ էր տարածում լուռ խաւարի մէջ։ Մարդկանց հոգիները կակծում էին մրմուռ հագած մօր սրտի պէս։ Ամենակալ լոռութիւնը սոսկում էր աղդում հիւանդապահ կանաց վրայ, իսկ կէս գիշերին արթնացած քամին վայ էր կանչում պարտիզում և ծառերին ահաբեկում...  
—

Ահա այդ գիշերն Ելենան պատրաստուում էր հրաժեշտ տալ աշխարհին։ Դեռ երեկոյեան նրա տաքութիւնը հասաւ քառասուն աստիճանի, իսկ կէս գիշերին աւելի բարձրացաւ։ Առաւետեան ժամը հնգին նա հոգին աւանդեց...  
—

Այդ երեք օրւայ ընթացքում նա չէր հասկանում, թէ ինչ է կատարուում իր շուրջը: Միայն այն գիտէր, որ նա չը կայ այլնս: Նա որ, ապրում էր, շնչում, որ սիրում էր, զգում, այլնս չը կայ: Այդ միտքն էր բնեուել նրա գլխում: Այս մտքի աղդեցութեան տակ նա երեք օր ուշնչ չէր հասկանում, ոչինչ չէր տեսնում: Հաւաքւած բազմութեան մէջ, լացի-կոծի ժամանակ նա քայլում էր ուրւականի պէտ, կամ կանգնում այս-այն անկիւնում, նայում սրանրա գէմքին, բայց ինչ էր զգում, ինչ էր մտածում, ոչ ինքը խօսքեր ունէր ասելու, ոչ ուրիշներն էին հասկանում: Երբեմն նա անբնական քրքիջ էր արձակում, ապա սկսում էր հեկեկալ: Այդ ժամանակ արցունքները թափուում էին աչքերից: Ոչ ոք չէր կարողանում տեսնել նրա հոգու տրագեդիան: Նա մի անգամ փորձեց մտնել այն սենեակը, ուր դրւած էր դադաղը ծաղիկների մէջ շաղախւած, բայց նրան բռնիցին, արգելեցին: Նա ոչինչ չէր ասում, ձայն չէր հանում, բայց նրա աչքերն այնպիսի արտայայտութիւն ունէին, որ նայողին տանջանք էին ներշնչում: Նա գնաց նաև գերեզմանատուն, ամբոխի հետ: Բարեկամերից մէկը բռնեց նրա թեր, գուցէ զգալով, որ այդ լոռութեան տակ ահարկու վիշտ կայ: Թէ ուր են դնում, ինչու, նա չէր ըմբռնում, միայն աչքերը սկսուած էին սպիտակ դագաղին: Երբ դագաղը իջեցրին փոսը, բազմաթիւ շրթունքներ ինչ որ աղօթք մրմնջացին, սկազգեստ քահանան տխուր ու բարեր ձայնից «Ճանապարհ ճշմարտութեան», ապա մարդիկ խորհրդաւոր շշուկներով սկսեցին օրհնած հողը բռերով փոսը թափել: Նա ճաց և

ուշաթափ ընկաւ բարեկամի թւին: Այդպէս ուշաթափ նրան տուն տարան...

Անցաւ մի քանի օր: Նրա սենեակում լուռ նստած էին մի քանի բարեկամներ: Տիրուհին մեռելի դէմք ունէր: Տեսնողները կարծում էին, որ խեղճ կինը շուտով հոգին կաւանդի, բայց նա դեռ ապրում էր: «Տէ՛ Աստուած, հոգիս առ, որ այսպիսի օրեր չըքաշեմ, իմ մնացած օրերս աւելացրու նաթանի կեանքի վրայ», կրկնում էր նա բազմաթիւ անգամ:

Նաթանը աչքը բաց արեց, նրա գիտակցութիւնը քիչ-քիչ սկսեց պարզել, միտքը գործել: Նա վեր կացաւ ու սկսեց քայլել, ոչ մի խօսք չասաց շրջապատողներին: Վտանգն անցաւ, կրկնում էր մտքում տիրուհին:

Երբ երեկոն մօտեցաւ, նաթանի սիրտը ներս սողաց մի ցաւ, մտքերը նորից պաշարեցին նրա ուղեղը: Ծանրաբեռնւած մտքերով նա գլուխը հանեց պատուհանից ու նայեց ձորին: Գետը՝ կապոյտ ու վծիտ, շարունակում էր իր յաւիտեռական խշոցը և անդադար հարւածում էր իր անգօր ալիքներով ժայռերի անվախ կրծքերին: Նաթանի սիրտը սկսեց բորբոքւել ներքին կրակից: Նա դուրս եկաւ սենեակից, միջանցքով անցաւ պատշգամբը: Այդ ժամանակ նրա ականջին հնչեց ռայն երդը, պատուհանի վարագոյրը կամացուկ բարձրացաւ և նրա առաջ պատկերացաւ ընոյն պատկերը՝ լայն բացւած, սարսափած աչքերով, մազերը շաղ անցած, սպիտակ շապկով... «Եկնա» ճաց նա, ձեռքերը գէպի պատուհանը մեկնեց. բայց նրա ոտքերը թուլացան, նա ուշաթափ վայր ընկաւ գետին...

Ելենայի մահը մեծ չափով վշտացրել էր նա հարազատներին։ Բագարադ Արտվեանը վշտից քար էր կտրել։ Նրա ճակատը աւելի քան կընձռոտել էր։ Նա լուռ էր, իր՝ սրտինը ոչ ոքի չէր առում, դարդը ուրիշների հետ չէր բաժանում, նա ատամները ամուր իրար էր սեղմում, որ հաճառաչանքներն անդամ ուրիշներ չիմանան։ Աստած է արել, մտքում վճռում էր նա, բայց հրանի այս Սանամեանները չըպատահէին։ Նա մենից շատ Վիկտորին էր առում, որովհետեւ Ելենայի հիւանդութիւնը նրա հետ էր կապում, բայց Նաթանին էլ տեսնել չէր կարողանում։ Նրա միտքը ծուռն էր, Ելենայի վրայ էր նրա աչքը, այդ պատճառով այս ամբախտութիւնը ծնուց, մտածում էր նա։

Տիկին Աննան ընկճւել էր հարւածից, փոքրացել էր, խեղճացել, նա ոչ ոքի գէմ չէր զայրացած։ Աստծու կամքն է, նա է ստեղծել։ Մարդու ճակատին ինչ գրւած է, այն էլ պիտի լինի։ Բայց մայրական սիրտը մտքին չի հնազանգւում, տիկին Աննան լալիս էր, մանաւանդ երբ միտքն էր բերում վաղամես որդուն։ Գիրեզմանատանը երկու շիրիմ ունէր, երկուսն էլ հաւասարաչափ սուդ էին պատճառում։

Իսկ Սուսաննան։ Ոչինչ չըկար աշխարհում, որ նրան միմիթարէր։ Ցերեկը Ելենայի պատկերն ունէր աչքի առաջ, գիշերը երբ զում նրան էր տեսնում։ Երբ երազը չքանում էր, նա լաց էր լինում անկողնում։ Միայն հայրն էր կարողանում նրան համոզել, պարկեցնել։ «Ես էլ եմ անբախտ», — ասում էր նա հեկեկալով։

Այրի տիրուհին հիւանդ նաթանի մօտ նըս-

տած չէր իմանում, թէ ինչու այդքան դարդեմիսաին եկան։ Թարմ շիրիմը լար, կաթւածահար եղթօրը սգար, թէ որդու մասին հոգար։ Իսկ Ստեփան Սանամեանը պարկած էր մահճակալում։ Նա երբեմն աչքերը բաց էր անում ու մօտը եղած անձանց դէմքերին նայում։ Տեղական բժիշկը օրը մի քանի անգամ գալիս էր, իսկ նահանգական քաղաքից շաբաթը երկու անգամ այցելում էին երկու յայտնի բժիշկներ։ Նրա առողջութիւնը դէպի լաւն էր թեքում, նա քիչ-քիչ սկսել էր թւատ լեզով խօսել…

Միայն Հայկն էր, որ իրան ամուր էր պահում։ Նա էր ոտքի վրայ, նա էր կառավարում տունը։ Նա խորապէս ցաւում էր իր կնոջ այդքան վաղ մահւան համար, առաջին օրէրը նոյնիսկ թուլանում, լաց էր լինում, բայց շուտով ոյժերը հաւաքեց։ Նրա համար որոշ էր, որ Ելենան իրան չէր սիրում, որ իրանց ամուսնութիւնը բախտաւոր չէր, բայց այսպիսի շուտափոյթ և այդքան տխուր վախճան նա ոչ կամեցել էր, ոչ էլ երազել։ Նա զում էր, որ իր թեւերը աղատ են, բայց կըցանկանար, որ աղատութիւնը այդ զում չստանար։ Սակայն նա հաշտում էր իրողութեան հետ։ Մի քանի օրից յետոյ նոյնիսկ գործերի մասին էր մտածում, նոր ծրագիրներ էր կազմում։ Հարկաւոր է գիւղը ընդմիշտ թողնել։ Գիւղը անշարժ է, յետադէմ, գիւղը գիւղը գիւղը անշարժ է։ Ոչ հարստութիւնների բուն է։ Ոչ հարստութիւնը, ոչ բաղաքից բերած յարմարութիւնները, ոչ կըթւած լինելը չեն կարող մարդուն աղատել գիւղական ճահճացնող մթնոլորտից։ Այսպէս էր մտածում Հայկը։

Նաթանն էլ նրա մտածմունքի առարկայ էր դառնում: Պատանի հասակից նա սովոր էր նրան իշխան տան անդամը համարել: Նա նաթանին միշտ էլ յարգել էր, ինելօք մարդ էր համարել, ուժեղ անձն էր լնդունել: Սակայն զարմանում էր այն դրութեան վրայ, որի մէջ ընկել էր նաթանը: Միթէ սիրահարութիւնը իսկապէս այնքան հզօր է, որ պատրաստւած, եւրոպական գիտութեամբ զարգացած մարդուն կարողացել էր յափշտակել, գրաւել ու զրկել աշխատանքներից, հիւանդացրել: Ո՛չ, ոչ, բաւական է, այս բոլորին վերջակէտ պիտի դնել: Հին տունը այլևս ոյժ չունի մեզ՝ նոր մարդկանցս պատսպարելու համար, նա խարխուր է, նա քանդւելու է, պէտք է թողնել նրան: Մի տարւայ փորձը բաւական է համոզելու, որ հին տունը վերանորոգւելու ոյժեր չունի: Հարկաւոր է ամբողջ ընտանիքով քաղաք գնալ, այն էլ մեծ քաղաք, Թիֆլիս կնալ: Այնտեղ ամենքս կսկսենք նոր և հիմնական կեանք: Թող այս դժբախտ տարին մոռացւի: Այնտեղ նաթանը կսկսի նոր աշխատանքներ... Վճռւած է, նրանք բոլորը Թիֆլիս են գնում...

## V

Նաթանը թոյլ էր զգում իրան: Երբ այնքան ոյժեր հաւաքեց, որ կարողանում էր ժամերով զբուանքի դնալ, արդէն եղանակները բաւական սառն էին ու ամենուրեք նախուն աշուն էր...

Այն օրից, երբ Փիղիքական ցաւերն անցան և նա նորից սկսեց իր շուրջը նայել զնող հայեցքով, ըրջապատի մարդիկ, պարտէզն ու սե-

նեակները, նոյնիսկ իւրաքանչիւր իր շարունակ յիշեցնում էր նրան իր կորուստը: Նա մտնում էր պարտէզ, իջնում էր ձորը և երկար ժամերով նստում ուռենիների տակ, ժայռերի վրայ: Գետը հոսում էր, և նրա ձայնը նաթանին սգերգ էր թւում, իսկ ուռենու գեղնած տերեները հանդարտ թափում էին ցած, ընկնում էին ջրի երեսը, միքանի անգամ պտոյտներ գործում, ապա նետում հոսանքի բերանը և գնում, չքանում ընդմիշտ: Շրջապատողներից ոչ ոք նրան չէր հասկանում: Նրա մէջ քիշ-քիչ հասունանում էր այդ ամենքից ազատւելու ցանկութիւն: Ինձ ոչինչ չի կապում այս տան հետ, հարկաւոր է թողնել, հեռանալ: Իսկ մայրդ, հարցնում էր նրան մի ներքին ձայն, և նա այդ հարցի վրայ կանգ էր առնում: Նրա մէջ զլուխ էին բարձրացնում մանկութեան յուշերը, բարոյական զանազան հասկացողութիւններ: Նոր-նոր ցանկութիւններն ու զգացումները ընդհարւում էին հների հետ: Նրա սրտում սկսում էր մրցում, կուր: Այդ հոգեկան մարտը տանջում էր նրան, զբաղեցնում օրերով...

Մի օր երազում նա տեսաւ Ելենային Երազից սթափուելուց յետոյ նա չըքնեց: Մինչև լոյս՝ խաւար սենեակում նա քայլում էր ու մտածում: Հէնց արեի ճառագայթները շողջողացին հանդիպակաց գագաթի գլխին, նա գուրս եկաւ: Երկար ման էր գալիս պարտիզում: Թափւած տերեները խշխշում էին նրա ոտների տակ, իսկ աշնան քնքոյլ կանաչները ծածկւել էին ցօղով և, կարծես զգալով վերահաս վասնգը, կուչ էին եկել, խեղճացել: Սասը օդը գուր էր գալիս նաթանին: Հաստաբուն մի ընկուղինու տակ նա

կանգ առաւ: Յիշում էր, երթեմն գալիս էր այդ-  
տեղ, փոքրիկ առւակի մօտ նստում ու կարգում:  
իր ձեռքով պատրաստած քարերի շարւածքը, որ  
նրան իբրև նստարան էր ծառայում, բանդւել էր:  
Յանկարծ նրա ուշադրութիւնը գրաւեց մի սա-  
րեակի ճվճոց: Նա ականջ դրեց: Սարեակը եր-  
գում էր, բայց նրա հնչիւնների մէջ մի յուզում-  
նալի, վշտալի շեշտ կար: Նա յիշեց, որ խոր ա-  
շուն է, իսկ սարեակները այդ ժամանակին սովո-  
րաբար չւած են լինում, ուստի և զարմացաւ:  
Սարեակը իր ձայնն աւելի բարձրացրեց: Նա-  
թանը ներշնչւեց փոքրիկ թոշունի երգով և ին-  
ստինքտաբար քայլերն ուղղեց դէպի այն կողմը,  
որտեղից ձայնն էր գալիս: Նա տեսաւ թոշնակին,  
որ նստած ճիւղի վրայ, երգում էր և ցած նա-  
յում: Նաթանն էլ ցած նայեց: Ծառի տակ ըն-  
կած էր մի ուրիշ սարեակ: Նաթանն աւելի մօ-  
տեցաւ: Ծառի վրայի սարեակը նրան տեսնելով  
թռաւ, աւելի բարձր ճիւղի վրայ նստեց, մի  
վայրկեան լոեց, ապա շարունակեց իր ճվճոցը:  
Իսկ գետնի վրայի սարեակը չը շարժւեց. նա  
թերը փուած, անշնչած ընկել էր գետնի վրայ:  
«Խեղճ», շշնաջց նաթանը և կանգ առաւ: Այդ  
ըոպէին նա զգաց կենդանի սարեակի հոգու սու-  
զը և վերապրեց իր անցեալը: Նա նստեց քարի  
վրայ: Ծառի վրայի սարեակը, որը անշնչացածի  
սիրելին էր անշուշտ, շարունակում էր երգել:  
Նաթանն էլ տիրում էր աւելի ու աւելի: Նա-  
թանի շրթունքները գողգողացին, նա պատրաստ  
էր լաց լինելու, բայց հեկեկոցը զսպում էր նա:  
Սարեակը երգեց, երգեց ու լոեց: Նաթանը նայեց  
սարեակին, որը այդ նոյն ըոպէին մի քանի ան-

գամ պայոյաներ գործեց անշունչ ընկերոջ շուրջը,  
մի բանի ճռողիւն արձակեց ու թռաւ: Նաթանը  
նայում էր նրա յետեկից: Սարեակը թռաւ հեռու,  
շատ հեռու և այլես չը վերադարձաւ:

Զէ, նա գնաց, իր սուզն արեց ու գնաց  
շարունակելու իր ուշացած ուղին, որպէսզի հաս-  
նի շուտ չւողներին ու կարողանայ հեռու, բայց  
ծաղկազարդ ու բնքոյշ հաճոյքներով լի, տաք  
երկրում նորից ապրի, ականջ զնի աղբիւրի քըշ-  
քչոցին, քամու սուլոցին, նայի հրդեհոտ վերջա-  
լոյսին, երգի այգը բացւելիս...

Նաթանը խորասուզւած իր մտքերի մէջ  
վերադարձաւ տուն: Այդ ամբողջ օրը նրա հոգին  
ենթարկւած էր փորձութեան: Ճաշից յետոյ նա  
առանձնացաւ իր սենեակում: Նրա դէմքը զանա-  
զան արտայայտութիւն էր ստանում: Երկում էր,  
որ նա գերմարդկային ճիգեր էր թափում ինչ  
որ վճիռ անելու համար:

Աշնան օրը կարճ էր, երեկոն մօտենում էր:  
Նաթանը մի երկու տող բան գրեց, թուղթը դը-  
րեց սեղանի վրայ, հագաւ վերարկուն ու դուրս  
եկաւ: Առանց տնեցիներից մէկին տեսնելու նա  
անցաւ փողոց ու բռնեց այգիների ճանապարհը:  
Կէս ժամից յետոյ նա գերեզմանատանն էր: Գը-  
տաւ ելենայի հողաթումբը, չոքեց նրա առաջ,  
գլուխը խոնարհեցրեց դէպի շիրիմը: Վշտերի ամ-  
բողջ ծովեր անցան նրա սրտով, ելենա, ելենա,  
մրժնջում էր նա...

Արևն էլ մտաւ: Հեռու արևելքում վերջա-  
լոյսը անդրագարձել էր ծիրանի մանուշակի և  
կարմիր վարդի իրար խառնւած շողերով: Ամպե-  
րի դէպերը սկսեցին այրեկը ու հուր կտրել: Ծա-

տերը տերևաթափ էին լինում: Նարնջի դեղձենին երը, ալ գոյնով ճոխացած տանձենիները կամացուկ սվաւում էին մեղմիկ զեփիւռից, ընկուզենին հպարտ տիբրութեամբ շարժում էր բարձրաբերձ գլուխը... Օրը մթնում էր, օդը ցրառում, իսկ բուն՝ մատուռի աւերակներից, կլանչում էր՝ բու, բու... Նևա ձայնը տարածւում էր օդում վարագիչ տրամադրութեամբ ու խանգարում շիրիմների շուրջը սփուած գերեզմանայ/ն լուսթիւնը:


Երբ Նաթանը գլուխը բարձրացրեց, արդէն մութն էր: Աստղերը պսպղում էին երկնակամարի վրայ: Հարաւարեկելքում առկայծում էր սիրիուսը, որ նապանի շարժւածքով բարձրանում էր և ակնարկներով հասկացնում իր հարեան Օրիոնի աստղերին, որ ինքն է երկնքի թագուհին լուսնի բացակայութեան ժամին, իսկ միւսները երկնքում հաստատւած են իր շքախումբը զարդարելու համար:

Նաթանը նայեց այդ փայլուն աստղին, ապա կռացաւ վերջին անգամ համբուրեց հողաթումբը, մի անգամ էլ հայեացը ուղղից դէպի գիւղը, որ հազիւ նշմարւում էր երեկոյեան մշուշի միջին, և նորից բռնեց մեծ ճանապարհը...

Թէ ուր է գնում, ինչու, այդ մասին չէր մտածում: Սակայն մի բան պարզ էր: Նա հաւատում էր, որ մարդիկ գնում են ոչ միայն այն ժամանակ, երբ խելքն ու տրամարանութիւնն են որոշում, ոչ միայն այնտեղ, ուր միտքն է ճամբում, այլ նաև շարժում են սրտի կամքով, աչքերն ուղղում են դէպի անորոշ, անրջային տարծութեաները:

Եւ սիրիուսը պէծպէծին էր տալիս, և Նա-

թանը քայլում էր առաջ: Երբեմն նրա սիրտը միկտում էր, երբ յիշում էր թանգ շիրիմը, քաղցր մօրը, բայց նրա ներսը շարժւում էր բաւականութեան մի նուրբ լար, նա իր ամբողջ էութեամբ ձգում էր դէպի ապագան, զգում էր, որ ազատւել է հին տանից և գնում է որոնելու նոր տուն, վառ երազների, քաղցր յոյսերի, յաւերժական սիրոյ տուն...



1911

Թիֆլիս-Փարպի:



շարժի այս մեջով ըստու ոչ հայրական զա-  
դարս ցուցող քանի ոչ հայրական զա- ու նաև  
ամսաթափական ոչ հայրական զանակ այս զա-  
դարսին պատճեն ու առ զայ զար ու առ  
առար ու առ առար ամսաթափական միջեր ոչ հա-  
մարակ ամսաթափական է առար և զանակ առ ա-  
մսաթափական պատճեն պատճեն պատճեն պա-

Հ Տ Ա Յ Հ Յ



ԾԱԽԻՈՒՄ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ

ՀԵՏԵՒԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԻ

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ՝

1. «ՔԱԶԱՉՈՒԹԻՒՆԵՐԸ»—ՂԷԱԼ . . . . . 50 կոտ.

2. «ՀԻՆ ՏԱՐԵԼ»—ՂԷԱԼ . . . . . 25 կոտ.

ԹԱՐԳՄԱՆԱԼԱՆ

1. կ. Համսունի «ՎԻԿՏՈՐԻԱՆ» . . . . . 15 կոտ.

ԳԻՒՆ Է 25 ԿՈԴ.

200

ՀՀ Ազգային գրադարան



NL0124024

31786